ղեայ մեծատան այրւոյ. և 'ի գալ
սբյն պօղոսի յիկոնիոն 'ի տուն Օնէ_
սիփորայ՝ լուեալ զածային բանս նր,
հաւատաց 'ի քս, և աշակերտեցաւ
առաքելոյն: Եւ վասն թողլոյն զը_
խօսնայրն իւր զԹամիւրոս՝ արկաւ 'ի
հուր, այլ տր պահեաց զնա անվնաս
աղօթիւք սբ առաքելոյն. և երթեալ
ընդ նմ յանտիոք պիսիդեայ՝ արկաւ
առաջի գազանաց, բայց անարատ
պահեցաւ. որով և բազումք դար_
ձան 'ի տր: Եւ յետ շրջելոյ զբա_
զում ժամանակս ընդ զանազան տեղիս
իբրև առաքելուհի՝ նշանօք և ար_
ուեստիւք, մեկուսացաւ 'ի լեառն մի
սելևկիոյ. ուր 'ի գիմել անամօթ
արանց 'ի վր նր՝ պատառեցաւ վէմն.
և ընկալաւ 'ի ներքս զաղախինն քի
յամի

յամի տն̃ իբր 50, ը̃ս ոմանց իբր 46.
և է Թեկղի կոյսն սքանչելի՝ բազ-
մօք դրուատեալ ՚ի հարց, և հաստա-
րակօրէն համարել̃ նախավկայուհի,
եթէ չիցէ կատարումն սանդխտոյ
կուսին յառաջ ք̃ զտորայն. որպէս
մեզ յայտնի երևի: Հ. Յ. սեպ. 24:
Լ. սեպ. 23:

Թէոդորէտէ կամ Թէոդորիտ (որ և գրի
Թէոփորէտէ) էր բարեպաշտ կին եկղ-
նիացի, ը̃ս ոմանց բիւթանիացի, այ-
րի միացեալ հանդերձ երեք որդւովքն
կրթելովք յա̃ծպաշտութե̃. որոց ա-
ռաջն կոչիւր եւոդիոս: Եւ հանդի-
պեալ սրբուհւոյն անաստասիայ՝ որ
բազում հալածանօք վկայեաց առ
դիոկղետիանոսիւ, լուեալ ՚ի նմանէ
իրատոս զօրաւորս վն̃ հաստատուն
կալոյ ՚ի հաւատս, և պահելոյ զսըր-
բութի ՚ի մէջ անօրինաց. որով և ամ-
բացեալ ՚ի տր̃՝ խոյս ետ հնարիւք
՚ի բանից լեւկադիոսի հեթանոս իշ-
խանին, որ կամէր առնուլ զնա իւր
՚ի կին. և բաշխեաց զինչս իւր աղ-
քատաց և բանտարկելոց քրիստո-
նէից: Վն̃կ իշխանն յետ տանջելոյ
զանաստասիա՝ առաքեաց զԹէոդի-
տէ որդւովքն հանդերձ առ նիկէ-
տիոս դատաւորն բիւթանացւոց.
որ և յետ փանելոյ զերիս որդիսն

առա

առաջի մօրն՝ եարկ զնա հանդերձ մարբն 'ի հնոց վառեալ. և այնպէս կատարեցան 'ի քս̃ յամի իբր 300:
Ընդ նոսին նահատակեցան 'ի նմին աւուր և բազմութ̃ք վկայից. զի 'ի լսել դիոկղետիանոսի՝ թէ բանտք և տեղիք կապանաց առաւելապէս 'ի բիւթանիա լցեալ են քրիստոնէիւք, հրաման տուեալ էր զամենին 'ի միում գիշերի կոտորանել սրով, հրով, և ջրով: Հ. յուլ. 27: Յ. դեկ. 22: Լ. օգոս. 2:

ԹԷՈԴՈՏՈՍ՝ որ և Թէոդորոս գաղատացի, էր յանկիւրիոյ՝ 'ի ժամանակս հալածանաց (որպէս կարծի) դիոկղետիանոսի, այր առաքինի և ջերմ յածպաշտութ̃. որ հաւանութ̃ կնոջ իւրոյ հնարեցաւ առնել զտուն իւր իբրև պանդոկ գինեվաճառաց. ուր թաքուցանէր զփախուցեալ քրիստոնեայս, և կերակրէր զաղքատս. և զբազումս 'ի խառնակեցաց խրատիւք ածէր յուղղութի իբրև հայր հասարակաց. և շնորհօք տն̃ ձեռս դնելով 'ի վր̃ ախտացելոց և աղօթելով՝ բժշկէր. և անուանք գինեվաճառի աներկիւղ շրջէր ժողովէր զմարմինս անկելոց նահատակաց, և այց առնէր բանտարկելոց: Իսկ 'ի խառնել հեթանոսաց 'ի կերակուրս

և

և յըմպելիս քաղաքին զՃաշակ և զա-
րբուն զոհից 'ի դայթակղեցուցանել
զպարզամիտս. այլ Թէոդիտոն ցոր-
եան և գինի մաքուր 'ի պէտս սրբ՟ց
'ի մԹերից իւրոց . և 'ի տան իւ-
րում այր մատուցանել զսբ՟ պա-
տարագն :

Յաւուրսն յայնոսիկ ըմբռնեցան 'ի
հալածչաց հրամանաւ Թէոդեկնոսի
դատաւորի 'ի քաղաքի անդ անկիւ-
րիոյ՝ եօթն կուսան կանայք ճգնաւո-
րեալք և սրբակրօնք . դեկուսա մօ-
րաքոյր Թէոդիտոսի , աղէքսանդրա ,
կղոդիա , փինա , եւփրասիա , մատ-
րոնա , և յուղիտա : Եւ յետ բազմա-
զան տանջանաց՝ մատնեցաւ 'ի ձեռս
անառակ երիտասարդաց՝ անարատ
պահեցան խնամօք ա՟ն . ապա ստի-
պեաց զնո՟ դատաւորն՝ տանել 'ի մօ-
տակայ լճին զդիս արտեմեայ և ա-
Թենայ , և լուանալ ըստ օրինակի
քրմուհեաց . և յոչ առնուլ նոցա
յանձն՝ ետ ընկենուլ զսբ՟ կուսանսն
'ի խորս լճին . զորս ժողովեալ Թէո-
դիտոսի՝ ամփոփեաց մօտ յեկեղեցին
նահատակաց . իսկ կռապաշտից զգա-
ցեալ զայն՝ 'ի ձեռն մատնչի՝ սպրեցին
զմարմինս կուսանաց : Եւ 'ի խնդրել
նց՟ զԹէոդիտոն՝ նա ինքն անձամբ
զանձն յայտնեաց . և կացեալ յառե-
նի դատաւորին՝ կշտամբեաց զկռա-

բուէ

րուն հեթանոսաց․ յայնժամ քերե_ցին զկողս նր, և արկին ՚ի վր բարկ քացախ, և խանձողեցին ջահիւք․ ապա հարկին քարամբք զկզակս նր, և խորտակեցին զատամունս․ և յետ կրկին քերանաց՝ տարածեցին ՚ի վր հրացեալ խեցեղինաց․ և անպարտե_լի գտեալ յամի զնահատակն՝ հատին զգլուխն․ զորոյ զնշխարսն ամփո_փեաց ՚ի վկայարանի մայրու աւանի փրոնտոն քահանային, որում խոստա_ցեալ էր սբ վկայն տալ զնշխարսն նահատակայ։ Հ․ Տաւ․ 22։ Յ․ Տաւ․ 18․ Ն․ յունիս․ 7։ Լ․ Տաւ․ 18։

Թէոդոս մեծն էր յիտալիկայ քաղա_քէն սպանիոյ, զօրավար կայսերացն վաղեսի և վաղենտինիանոսի, այր ճշմա_րիտ ածապաշտ․ որ բազում բարիս արար ուղղափառաց՝ այլազգ ջնջե_լով զխնդս վաղեսի արիոսեան ար_քայի։ Եւ ընտրեալ կայսր յետ նր յամի 379, փոյթ կալաւ հաւանութբ գրատիանոսի դարձուցանել յաթոռ իւրեանց զամ եպիսկոպոսունս ուղ_ղափառաց, ընդ որս և զմեծն ներսէս հայրապետ հայոց զաքսորեալն ՚ի վա_ղեսէ․ և գրեաց հրովարտակ, զի յամ տեղիս քարոզեսցի նիկիական հաւատք․ և որ ոչն ընդունի զայն, մի կարասցէ բնակիլ ՚ի Թագաւորեալ_

քա_

քաղաքն 'ի կոստանդնուպօլիս : Նո-
րին գործակցուԹ եղև և որ ժողովն
կոստանդնուպօլսոյ ընդդէմ հոգե-
մարտից . և այլ բազում ուղղուԹ
և բարեկարգուԹ եղև պատճառ ,
օրինակ բարի եղեալ ամենայն առաքի-
նի վարուք իւրովք . և առաւելապէս
յընդունիլ իւրում ամ խոնարհուԹ
զարտաքսումն յեկեղեցւոյն մեդիո-
լանու , և զապաշխարանս եդեալ յիւր
վր 'ի սրբոյն ամբրոսիոսէ վս անխոր-
հուրդ վրէժխնդրուԹ իւրոյ . որպէս
յայտ է 'ի կատարեալ պատմուԹն :
Եւ յետ առնելոյ որ զբազում յաղ-
ԹուԹիւս ընդդէմ Թշնամեաց , և կա-
լոյ 'ի մէջ փառաց աշխարհի՝ իբրև
մեռեալ աշխարհի՝ փոխեցաւ առ քս
յամի 395 . 'ի մեդիոլան՝ որ և մի-
դուլէ . ուր երկիցս խօսեցաւ 'ի վր
նր ճառ ներբողական սրն ամբրո-
սիոս . իսկ մարմին նր բերաւ և Թա-
ղեցաւ 'ի կոստանդնուպօլիս : Հ .
յնվ . 18 :

ԹԷՈԴՈՏԻՈՍ . տես Թէոդոտոսէ :

ԹԷՈԴՈՏԻՈՍ ( որ և ԹԷՈԴՈՏՈՍ ) փաշա-
նայ , էր երէց սուտ եկեղեցւոյն ան-
տիոքայ . ուր իբրև եկն ուրացօղն
յուլիանոս՝ կարգեաց զքեռին իւր
և զանուանակից զյուլիանոս իբրև

ստրկան՝ կողոպտել զեկեղեցիս. և
'ի փախչիլ քհնյից՝ երանելին Թէո-
դորիտոն եկաց անխափան 'ի պաշտօ-
մանն այ. վնյ կալանաւորեալ շղթայ-
իւք 'ի բռնաւոր ստրկանէն՝ եդաւ
յաղտեղի արգելանս. ապա զնա հա-
րաւ և տապակեցաւ. և պրկեալ չուա-
նօք՝ ձգտեցան ջիլք նր, մինչև երևիլ
հսկայ երկայն. և քերեցաւ կճղակա-
ձև քերչօք, մինչև զարեան վտակս հո-
սել. և այրեցան կողք նր կանթեղօք:
Յայնժմ դահճաց տեսեալ զչորս հրեշ-
տակս առաքեալ նահատակին՝ զարկան
զգետնի. և բռնաւորն եւս տանիլ
զգլխատել զերանելին. այլ կատարե-
ցաւ և մարգարէութե սրբյն վն չարա-
չար կատարածի բռնաւորաց: Հ.
Ճառընտ: Յ. մրտ. 2: Լ. հոկ. 23:

Ոնեսիփորոս աշխատաւոր՝ փեսափոխն կոչեցեալ,
քեռի միւս Թէոդորոսի ստրատելա-
տի, էր 'ի սեբաստէ դեղջէն ամասիոյ՝
բարեպաշտ ծնողաց զաւակ, ընտրեալ
ու մաքսիմիանոսի վն քաջութեն 'ի
կարգ զինուորաց դխօն կոչեցելոց,
որ համբակ կմ նորամուտ, և գտեալ
յանի յառաջադէմ: Որ և յանցանել
իւրով ը մարդս եւխայիտոյ աւա-
նին՝ համանդիպեալ ահագին մեհենի,
յորում սարսափին ամ բնակիչք տեղ-
ւոյն, կնքեաց զանձն նշանաւ խաչ-
չի,

չի, և հարեալ նիզակաւ սատանակեաց զփաղաղանն 'ի նշանակ հնոյ օձին : Յետ այսորիկ իբրև եկն բռնակալս ոմն յամասիա՝ քննել զքրիստոնեայս 'ի գօրուն, յառաջ մատեաւ Թէոդորոս, և քաջութ̃բ դաւանեալ զք̃ս՝ զօրացոյց և զայլս յընկերաց իւրոց. և գտեալ նաև ժամ պարապոյ՝ հրձիգարար զիշերի զմեհեան ռէայ մօր չա̃ծոց. և ինքն աներկիւղ զտեղի կալաւ անդ. վ̃ոյ կալեալ տարան զնա առ պոպղիոս դատաւոր. և նր̃ սաստիկ գան հարեալ զերանելին՝ էարկ 'ի բանտ. ուր մխիթարեաց զնա տ̃ր տեսլեամբ : Իսկ յետ կրկին հարցափորձի՝ կենդանւոյն այրեցին զքաջ նահատակն. զորոյ զնշխարս ամփոփեաց բարեպաշտ կին մի եւսեբէ անուն յեւխայիտայ 'ի տուն իւր. որ յետոյ շինեցաւ եկեղեցի : Հ. Յ. Փետր. 17 : Լ. նոյ. 9.

Թէոդորոս ստրատելատ արեւելցի՝ էր քեռորդի նախագրեալ սր̃յն Թէոդորոսի զինաւորի, ծնեալ յեւխայիտա՝ ուր նա թաղեցաւ. և զարդացեալ արութ̃բ և առաքինութ̃բ երևելի եղև յոյժ 'ի զինուորութե̃ առ մեծն կոստանդիանոսի̃, մինչև կարգիլ սպարապետ գնդի 'ի հերակլեա կապադովկացւոց, որ և առակլեա

ոգուն

ողմտոսի · ուր իմաստութբ և մար-
դասիրութբ լուրով ձգեաց զբազումս
՚ի հեթանոսաց ՚ի սբ հաւատս : Եւ
՚ի գալ լիկիանոսի կայսեր թշնամւոյ
քրիստոնէից յասպիլիս՝ եւ ըմբռնեալ
նմ սիրով և պատուով քաջն թէո-
դորոս · և տուեալ խաբանօք զոսկե-
ղէն և զարծաթեղէն կուռս նր՝ ման-
րեաց և բաշխեաց աղքատաց · վսյ
ետ բանաւորն ձաղկել զնա արքա-
յաջօք , և հարկանել կապարեայ
մխճօք զպարանոցն , և հրով խանձո-
ղել զմէջս : Եւ յետ կրկին հարցման
հանեալ զնա ՚ի խաչ , ձգեցին նետս՝
առաւել յերեսս և յաչս նր · և զայլ
բազմնելի տանջանս տուեալ՝ թողին
իբրև զմեռեալ · այլ ՚ի գիշերի հրեշ-
տակ մր յիջոյց զնա ՚ի փայտէն ողջ-
անդամ · զոր տեսեալ բազմաց՝ հաւա-
տացին ՚ի քս իշխանօքն հնգեն , և կա-
մեցին քարկոծ առնել զլիկիանոս · այլ
սբ վկայն հանդարտեաց զնոսա , և
գնաց ինքնին ՚ի բանտն · ապա յղէ
լիկիանոսի դահճին՝ ետ հատանել
զգլուխ սբյն գաղտ յամբոխէ · և
աբգար ծառայ սբյն եառ զմարմին
նր , և հանդոյց ՚ի հայրենիս նր յեւ-
խայիտա · որ և գրեացն իսկ զվկայ-
աբանութն նորին : Հ · յունիս · 8 : Յ ·
ֆեբր · 8 · Ն յունիս · 8 : Լ · ֆեբր · 7 :

Թէոպիստէ. տե՛ս Ի Եւստաթէոսի:

Թէոպոմպոս կա՛մ Թէոպէմպտոս եպիսկոպոս կողմանցն կիլիկեցւոց՝ էր 'ի ժամանակս հալածանաց դիոկղետիանոսի. որոյ առաջի դատեալ վ͞ս համարձակ յանդիմանելոյ զկուռս՝ արկաւ 'ի հնոց բորբոքեալ. ուր անարատ պահեալ՝ օրհնէր զա͞ծ. ապա փորեցին 'ի բանտի զաչս ն͞ր. և 'ի լուսաւորել անդրէն սքանչելեօք՝ կախարդու͞թ համարե͞ց զայն Թագաւորն, կոչեաց զԹէո՛նաս կախարդ անուանի՝ յաղթել Թէոպոմպոսայ: Այլ 'ի ցրել սէ՛յն զա͞մ կախարդանս ն͞ր նշանաւ ամենայաղթ խաչի, հաւատաց Թէոնաս 'ի ք͞ս. յայնժամ եւ Թագաւորն զայլ եւս ահագին տանջանս Թէոպոմպոսայ. և ոչինչ օգտեալ՝ հրամայեաց գլխատել: Ապա դատեալ և զԹէոնաս վ͞ս քրիստոնէութեն՝ իբրև եգիտ զնա անշարժ 'ի հաւատս, ետ արկանել 'ի գուբ խոր, և Թաղել կենդանւոյն: Հ. դէկ. 18:
Յ. յնվ. 4: Լ. յնվ. 3:

Թէոնաս. տե՛ս Ի Թէոպոմպոսայ:

Թէոփիլոս վկայն՝ էր սարկաւագ 'ի Լիբիոյ յաւուրս հալածանաց Մաքսի-

միա

միանոսի. և վս համարձակ քարոզե-
լոյն զՔս՝ ըմբռնեցաւ 'ի կռապաշ-
տից ՟Ը հեղպատիոսի ուժեմն աշխար-
հին քրիստոնէի. զորս դատեալ բդեշ-
խին՝ ետ տանջել գանիւք և քերա-
նօք, և այրել զթիկունս նց հրով.
և սուր խեցեաւ ծակոտել զգլուխս
նց. և յայնպիսի չարչարանս աւան-
դեցին ած վկայքն զհոգիս իւրեանց:

Հ. Յ. Լ. յուլ. 8: Կեան և այլ վկայք
Թէոփիլոս անուանք 'ի զանազան
ժամանակս:

Թէոփիլոս բազմաչարչար նահատակն
(որ 'ի յետնոց ոմանց վրիպակաւ գրի
Եւլեւթիւրոս) էր 'ի Բիւթանիոյ կմ
'ի պրուսայէ 'ի հալածանս դեկոսի.
և եղև 'ի նահատակել կոմբրուստիո-
սի դքսի զերևելի այրն Լեւկիոս ա-
նուն՝ մատեաւ քաջն Թէոփիլոս առ
դուքսն, և աներկիւղ դաւանեալ
զՔս՝ ծաղր արար զդիս: Վսյ հարին
զնա կապարեայ կռանօք. խորտա-
կեցին զբարձս նր. կախեցին բարակ
չուանօք զձեռաց և զոտից. քանդե-
ցին ճանկօք զարտևանունս աչաց.
ջաղխեցին պղնձի կոթողիւք զբա-
զուկս. և 'ի հեղուլ կապար եռա-
ցեալ 'ի վր թիկանց նր՝ ոչինչ վնա-
սեաց սբյն, այլ՝ դահճաց. ապա
կտրատեցին սրով զանձս նր. բայց

յմամի պահեցաւ կենդանի ո̃ը : Յետ այսորիկ դատեցաւ և 'ի սիղոճանոսէ կոմսէն . և 'ի կործանել փողօթիւք ղբագինս՝ կախեցին զնա գլխ'ի վայր միջով չափ 'ի ջուր . և յարկանել 'ի մեքենայ սուսերաւոր՝ զերծուցին զնա հրեշտակք : Այս տանջեաց զնա բաւդոս դատաւոր . եւ ջարդել բրօք զանդամս նր̃ . և եդեալ 'ի քուրձ մի ծեփեալ կապարաւ՝ ընկէց 'ի խորս ծովու . այլ հանին զնա հրեշտակք . նոյնպէս պահեցաւ և 'ի բերանոյ գազանաց . յետոյ 'ի կամել դահճաց սղոցել զվկայն՝ աւանդեաց երանելին զհոգին : Եւ 'ի պատճառս նր̃ դարձան բազումք 'ի տր̃ . ը̃ որս և կալինիկոս քուրմ խորհրդական դատաւորաց . որ և գլխատեցաւ վն̃ անուանն քն̃ի . և այս եղ̃ եղև յամի խբբ 250 : Հ . Յ . Դէկ .
14 : Լ . յնչ . 28 :

Թովմաս առաքեալ՝ մի յերկոտասանից , անուանեալն երկուորեակ , և հռչակեալն շօշափմամբ կողից կենարարին , շրջեցաւ քարոզուե̃ յարեւելեան աշխարհս հեռաւորս՝ սկսեալ 'ի պարթևաց և 'ի մարաց մինչև 'ի հնդիկս և 'ի սինէայս . և յետ բազում և մեծամեծ գործոց՝ զորս արար անուամբն քն̃ի , կատարեցաւ

խոցմամբ գեղարդեան 'ի մալապուր քաղաքի Նարսինգ գաւառին հընդկաց՝ մօտ 'ի Մատրաս. իսկ մարմին նր̃ բերաւ 'ի ձեռն քանոնթիկոսի աշակերտի նր̃ 'ի միջագետս. և այս փոխադրեցաւ 'ի հայս. զորմէ Քրո̃-խադոյն ըսցի բան յընդարձակ վարս սր̃ց: Հ. օգոս. 22. Ն. հոկ. 6: Յ. հոկ. 6: Լ. դեկ. 21:

Սողոմոն հայր վանից. տես 'ի Թաթուլ:

## Ի

Իգնատիոս աստուածազգեաց Հայրապետ՝ էր մանուկն այն, զոր առեալ փրկչին մերոյ 'ի գիրկս իւր՝ գըրկեաց և օրհնեաց. և իբրև զարգացաւ, եղև աշակերտ յովհաննու աւետարանչի ը̃ այլ̃ն պօղիկարպոսի. և կարգեալ եպս̃ աթոռոյն անտիոքայ՝ լուսաւորեաց զբազումս առաքելաշնորհ վարդապետութ̃՝ բանիւ և գրով: Իսկ 'ի խաղալ տրայիանոսի 'ի վր̃ պարթևաց՝ անցեալ ը̃ անտիոք, դատեցաւ զնա առաջի իւր, և եարկ 'ի բանտ՝ վն̃ դարձուցանելոյ նր̃ զհելլենս 'ի հաւատս քի̃. ապա հրամայեաց տանել զնա կապանօք 'ի հռովմ, և տալ կերակուր գազանաց 'ի թէատրոնի: Եւ իբրև

փու-

փութային ոմանք 'ի հաւատացելոց
գտանել միջնորդս վն ազատութե նր •
դրեաց առ նոսա երանելին մի խա-
փանել զնահատակութիւն իւր • զի ես
ծարաւեալ եմ ասէ մտանել առ ածն
իմ կենդանի • և զի ցորեան եմ այ,
ժանեօք գազանաց աղացեալ լինիմ•
զի հաց մբ գտայց այ: Արդ՝ յոր-
ժամ եհաս 'ի հռոմ, արձակեցին 'ի
վր նր առիւծս երկու • որք հեղձու-
ցին զնա, և կերան զմարմին նր՝ յա-
մի տն իբր 107 • այլ մեծամեծ ոս-
կերք սրյն և գլուխն բերեալ եղեն
յետոյ յաթոռն իւր յանտիոք : Հ •
դէկ • 17 • Ն յնվ • 30 • կաս 29 : Յ •
դէկ • 20 • Ն յնվ • 29 : Լ • դէկ • 17 •
Ն ֆեպր • 1 :

Ինդոս և Դոմնա էին 'ի Նիկոմիդիա
յապարանս մաքսիմիանոսի կայսեր •
ինդոս էր ներքինի պալատական, և
դոմնա քրմուհի երկոտասն կռոց թա-
գաւորին • և զի դոմնա գրագէտ էր •
ընթերցեալ զգործս առաքելոց և
զթուղթս պօղոսի՝ հաւատաց 'ի քս
հանդերձ ինդոսիւ • և երկոքեանն
մկրտեցան ծածկապէս 'ի կիւրղոսէ
եպսէ քաղաքին • և զարքունի առ-
ձիկան բաշխեցին աղքատաց, և ին-
քեանք խստամբեր վարուք ճգնէին :
Զոր իբրև գիտաց ներքինապետն •

բարկացաւ յոյժ. իսկ դոմնա ձեռա-
ցոյց զինքն այսահարեալ. և յղեալ
'ի ներքինապետէն վն̃ բժշկութե̃ առ-
եալն՝ մնաց 'ի մէջ քրիստոնէից, և
թաքեաւ: Եւ 'ի նոյն աւուրս յայ-
րել թագաւորին զերկուս բերս,
և 'ի նահատակել զբ̃ս, նա ինքն
դոմնա սանոյցն զպեցեալ՝ զհետ լի-
նէր ժողովել զգիշերայն զնշխարս սրբ̃ց
վկայից, և ամփոփել յանքոյթ տե-
ղիս: Իսկ 'ի խնդրել զնա զօրակա-
նաց՝ և յոչ գտանել, ըմբռնեցին զին-
դոս. և կապեալ երկանաքար 'ի պա-
րանոցն՝ ընկեցին 'ի ծով. այլ դոմ-
նայի գտեալ զմարմինն նր̃ 'ի ծովեզրն՝
թաղեաց 'ի թաքստեան. ապա ըմ-
բռնեցաւ և ինքն, և գլխատել̃ ար-
կաւ 'ի հուր: Հ. դէկ. 29: Յ. Լ.
դէկ. 28:

Լուսակ. տեառն Նախահարք, և Սա-
հակ:

Լուսաջաւ (որ է յունականին Թէ-
ոփոնիդէս, կամ Թէոդոնիդեսոս), հովիւ էր
ոչխարաց 'ի զմիւռնիս քաղաքէ լիկիոյ՝
'ի հալածանս դեկոսի. և 'ի յուզել
խնդրակաց երևելի զսն̃ քրիստո-
նեայ դէոսկորիդէս անուն զզօրեալն
'ի լերինս, իբրև հարցին զնմա ցհո-
վուէն իրաւափառ, նա ոչ յայտնեաց
զայրն,

զայլն, այլ փոխ նր̄ մատնեաց զանձն իւր՝ խոստովան լինելով զիւր քրիստոնէութի. վ̄ոյ ածեալ զնա առ դատաւորն՝ հրամանաւ նր̄ պարզեցին զերանելին 'ի վր̄ գետնոյ, և այնչափ հարին զորովայն նր̄, մինչև պատառեցաւ, և Թափեցան ա̄մ աղիքն. ապա կախեցին զփայտէ՝ և քերեցին. և լիզուցեալ քարշեցին 'ի վր̄ երկաԹի տատասկաց՝ մինչև ցաւանդումն ոգւոյն : Յետ կատարման նր̄ կալան և զդէոսկորիդէս, և զնա ևս նահատակեցին : Հ. դէկ. 30 : Յ.

Լ. դէկ. 21 :

Իւղաբեր կանայք ծանուցեալ են 'ի մ̄ր աւետարանէ անուամբ և արդեամբք իւրեանց. որոց պարագլուխ է Մարեամ Մագդաղենացին՝ լի հրով սիրոյ երկնաւոր վարդապետին իւրոյ, և առաքելուհի կարգեալ. յետ նր̄ մեծարեալքն՝ կին կղէոփայ եղբօրն յովսեփայ ա̄ծահօր, անուանեալ քոյր մօր ա̄ծն, որ և մարիամ յակոբայ ասի, ա̄յ մայր յակոբայ եղբօր ա̄ծն, ո̄ք և յովսեայ, յուդայի և սիմոնի. երրորդն՝ սողոմէ կ̄մ սողոմէ՝ մայր որդւոցն զեբեդեայ. և չորրորդն՝ յովհաննա կին քուզայ հազարապետին հերովդի. Թող զայլսն՝ որոց անուանք չեն յայտնի. ո̄ք և զշուշան

և զայլ բարեպաշտ կանայս, որք շըր-
ջէին զհետ տն մերոյ 'ի գալիլէա,
և պաշտէին զնա յընչից իւրեանց.
և 'ի մահու փրկչին մխիթարչից էին
տիրամօր կուսի, և խնդակիցք 'ի
յարութե միածնին: Սոքա ամենեքին
բարեպաշտութբ կատարեցին զաւուրս
իւրեանց՝ բազում հալածանօք համ-
բերձ վս անուանն քի: Այլ առա-
ւել հալածանս և ձգունս կրեաց
մարիամ մագդաղենացին, որ համ-
բաւեալն է յոյժ յամ եկեղեցիս:
Վախճան սորա ըստ ոմանց առ ի լինել
յեփեսոս, ուր կայր 'ի սպասու յով-
հաննու աւետարանչին. իսկ ըստ այ-
լոց՝ (որք համարին զսա քոյր մար-
թայի, և միանգամայն նոյնացուցա-
նեն ընդ կնոջն մեղաւորի) առ ի զեր-
ծեալ նաւու 'ի մարսիլիա, և անդ
կատարեալ զկեանս սքանչելի ճըգ-
նութբ. զորմէ ունիմք առ լիագոյն
տեղեկութի յընդարձակն գործոյս:
Հ. ապր. 9. Խաչաբերք: Ն. Նա մագ-
դաղ. Հ. յուլ. 16. կմ 22. Յ. Լ.
յուլ 22: Ն. տաղամէ. Լ. հոկ. 22:

## Խ

Խադ երանելին՝ 'ի մարգաց կար-
նոյ՝ էր աշակերտ սբյն ներսեսի
մեծի, կարգեալ 'ի նմանէ 'ի վերա-

կացուցն հիւանդանոցաց և աղքատա-
նոցաց. որ և այնչափ փոյթ էր և
առատ 'ի խնամարկութեն նց, մինչև
սպառել զմթերս. այլ 'ի դիմելն իւ-
րում աղօթիւք առ ած՝ սքանչելեօք
աղբիւրացան շտեմարանք նր, ան-
պակաս գտանելով զհամբարս՝ որ-
չափ և բաշխէր: Այս ձեռնադրե-
ցաւ 'ի սբյն ներսիսէ եպիսկոպոս
բագրևանդայ և արշարունեաց. և
յերթալ նր 'ի կոստանդնուպօլիս՝
խաղ իբրև տեղապահ հովուեաց ըզ-
հօտ նր ամ բարեկարգութբ. և էր
անաչառ 'ի յանդիմանել զանկարգուն
մեծի և փոքու. այլ լուեալ բամբա-
սանս զանձնէ իբրև ոճնազգեստ և
ձիասէր, այնուհետև խարազն ըզ-
գենոյր և իշով շրջէր. որով եղև օ-
րինակ խոնարհութե և առիթ շինութե
ամցն: Եւ 'ի կշտամբել նր զարշակ
վն անգութ կոտորածի կամսարա-
կանաց, ցասեաւ թագաւորն, և
հրամայէ եօ քարկոծ առնել զսուրբ
եպսն. այլ ազգականք նորա արքե-
րեալքն 'ի տանէն ապահունեաց՝ կոր-
զեցին զնա, և տարան 'ի գաւառն
իւրեանց. ուր հանգեաւ խաղաղու-
թբ 'ի քր. կամ ըստ ոմանց՝ սպա-
նաւ հրամանաւ արշակայ արքայի:

Հ. նոյ. 19:

Սարբինեանք կամ Հրեբինեանք կոչին՝ եթէովպացի քրիստոնեայք բնակիչք Նեգրանայ քաղաքին՝ նահատակեալք ընդ սէյն Խարիթայ կամ Արեթայ, որ էր գլխաւոր 'ի քաղաքի անդ ։ Զի յաւուրս Եղեսբովլամայ բարեպաշտ արքային եթէովպացւոց՝ առ Յուստինիանոսի կայսերաւ յունաց 'ի Զ̅ դարու, հրէայ ոմն Դուզնաս կամ Դունաան անուն զօրացեալ յամերիտ քաղաքի՝ եկն զօրու ծանու 'ի վ̅ր̅ Նեգրանայ, նուաճել զքրիստոնեայս տեղւոյն 'ի հրէութի. և իբրև ոչ կարաց ձգել զն̅ն 'ի կամս իւր բռնի, սուտ երդմամբ խաղաղութ̅ե էառ զքաղաքն, և կոտորեաց սրով յաշխարհականաց իբր Ժ̅Ռ̅ ոգիս. և յեկեղեցականաց իբր Մ̅, և աւելի ևս՝ այրեաց հրով ։ Յայնժամ հանդերձ նահատակութ̅ե աւագերիցան և ոմանք 'ի մատաղ մանկանց, որք յայտնապէս դաւանէին զՔ̅ս Ա̅Ծ. և կշտամբէին զշարութի հրէից. այլ առաւել ևս ս̅ր̅բ ծերունին Խարիթաս ։ Այլ յետ սակաւուց էառ վրէժ 'ի հրէից արքայն Եղեսբովլամ. և դարձոյց զբազումս 'ի նոցանէ 'ի քրիստոնէութի ։

Հռ. գլխ. 20 ։ Յ. Լ. գլխ. 24 ։

Ս[illegible]. տե̅ռ 'ի Տրդատ ։

Մոփամարդակք . տես Եօթն խոտամ :

Մոքէն . տես Ը Աբրահամու :

## Կ

Կալլինիկէ . տես Ը Քրիստափորի :

Կալլինիկոս բարեյաղթ վկայ՝ էր 'ի ժամս հալածանաց դիոկղետիանոսի՝ 'ի սահմանս գաղատիոյ . և առժամուն ունելոյ զքրիստոնէութիւն՝ առնէր վաճառականութի ձիթոյ . որ և եկեալ յանկիւրիա՝ դիւրագին տայր քրիստոնէից , և ձրի՝ եկեղեցեաց . և զի էր այր լի հոգւով՝ խօսէր ը հեթանոսս 'ի դիպօղ վայրս , և ուսուցանէր նց զճշմարիտն ած . Վոյ մատնեցին զնա կռապաշտ վաճառականք 'ի ձեռս սակերդոնի քաղաքապետին . որ եռ ջարչարելիք հարկանել զվկայն , և քերել զկողս նր . և 'ի կործանել կալլինիկոսի զարձան կռոց 'ի մեհենի՝ հարին բևեռս երկաթիս 'ի ներբանս նր , և ընթացուցեալ ը մէջ անկիւրիոյ՝ վարեցին մինչև 'ի քաղաքն գանգրայ ( որ և չանղրը ) . այլ 'ի ճանապարհի՝ 'ի պապաքիլ զօրականաց՝ ջուր բղխեցոյց ած վկայն աղօթիւք , և դարձոյց զը-

մանս 'ի նոցանէ 'ի տր̄ . և 'ի հասա-
նելն 'ի գանգրա՝ վառեցին հուր , և
այրեցին զնահատակն : Հ . յուլ .
27 : Յ . Լ . յուլ . 29 :

Աւխափրափոս քաջադոր վկայն՝ էր քաղկեդոնացի՝ այր երևելի 'ի բանակին դիոկղետիանոսի . զոր վասն քրիստոնէութե̄ն մատնեցին իշխանին զօրուն 'ի հուռմ . և նր̄ տանջեալ զնա 'ի զոհել , և ոչ կարացեալ հաւանեցուցանել , ետ գանել զնա չարաչար արեամբ չափ . յետոյ քարշեցին զմերկ մարմինն 'ի վր̄ մանրեալ խեցւոյ . և ևս լցին սափորով ջուր ը̄ բերանն ցպարպատումն որովայնին . և ապա փակեալ 'ի խորգ մի՝ արկին 'ի ծով : Այլ յեղանել նորա անվնաս՝ հաւատացին 'ի քս̄ անձինք Քառասուն և ինն 'ի զինուորակցաց նր̄ . զն̄յ և բրածեծ լեալ արկան 'ի բանտ ը̄ կալերպարատոսի . որ և ուսոյց անդ նց̄ զամ̄ կարևոր սահմանս քրիստոնէութե̄ , յաւելեալ և բանս ճոխագոյնս վն̄ դատաստանի , հատուցման , վերձանելի հոգւոց , և յարութե̄ մարմնոց , ոպ̄ զիարդ և գիտէր , Ապա հանեալ 'ի բանտէ՝ 'ի ծով ամացին զխ̄թ̄ վկայս . բայց 'ի զերծանել և նց̄ սքանչելեօք , և 'ի ծագել լուսոյ , և 'ի փշրել արձանաց կռոց 'ի

'ի շարժմանէ, հաւատացին այլ եւս
զօրականք ճըէ · յայնժամ իշխանն
եւ հատանել զգլուխս իթ վկայից ·
եւ մեծն կայսերապետութի · զի մի եւ
զայլս դարձուսցեն · իսկ նոր հաւա-
տացեալքն թաղեցին զմարմինս սըր-
բոցն · եւ մին 'ի նոցանէ գրեաց ըզ-
վկայաբանութիւն սոցին : Հ · Յ · սեպ ·
27 : Լ · սեպ · 26 :

ԿԱՆԴԻԴՈՍ · տե՛ս Ը Վաղերիոսի :

ԿԱՊԱՐԻՆԷ · տե՛ս Նեքտաւրինէ :

ԿԻՊՐԻԱՆՈՍ եպս հռչակաւոր յամե-
նայն եկեղեցիս՝ ըս ոմանց է անուն
երկուց երեւելի վկայից 'ի մի եւ 'ի
նոյն դար Գ · ոմ թէ մին իցէ հո-
վիւ կարքեդոնացւոց (կմ կարթագե-
նեցւոց), ծաղկեալ գրով եւ բանիւ ·
եւ սրով նահատակեալ յաֆրիկէ 'ի
կայսերութեան վաղերիանոսի եւ գաղիե-
նոսի՝ յամի իբր 255 · եւ միւսն իցէ
հովիւ անտիոքացւոց՝ 'ի մոգութէ 'ի
քրիստոնէութի եկեալ ըն յուստիա-
նեայ կուսի, եւ ըն նմա նահատակեալ
սրով յետ բազում տանջանաց առ
դիոկղետիանոսիւ յամի իբր 28; :
Իսկ ըս այլոց՝ (մանաւանդ ըս գրի-
գորի ածաբանին), մի եւ նոյն կիպ-
րիանոս ափրիկեցին է՝ որ յառաջն

եր փիլիսոփայ հեթանոսս և Ճարտա-
րախօսս, քուրմ և մոգ. և 'ի կախար-
դել 'ի կարքեդոն զօրիորդ ոմն քրիս-
տոնեայ Յուստինէ կամ յուստինա ա-
նուն, զի յարեսցի 'ի սէր երիտա-
սարդի միոյ՝ որ ցանկայր առնուլ
զնա, դիմեաց կուսին աղօթիւք առ
Ած և առ տիրամայրն՝ 'ի դերև ե-
հան զհնարս դիւականս. մինչ զի և
կիպրիանոս նզովեաց զդևս, և այ-
րեաց զգիրս մոգութեան իւրոյ՝ մկրտե-
ցաւ, և եղև կատարեալ աշակերտ
քնի՝ զարդարեալ ամ առաքինութբ.
և արժանաւոր կարգօք ընկալեալ
զաստիճան եկեղեցական՝ դարձոյց
զբազումս 'ի հաւատս քնի. և եղե
եպս կարքեդոնի՝ արար սարկաւա-
գուհի զնա կոյսն յուստինէ զմիա-
նացեալն 'ի վանս: Այսպս 'ի հալա-
ծանս դեկոսի կայսեր՝ դատեցաւ
կիպրիանոս 'ի հեթանոսաց, և ա-
ռաքեցաւ յաքսորս. և յետ դարձին
'ի միւս ևս հալածանս առ վալերիա-
նոսիւ կատարեցաւ սրով, ինքն՝ և
յուստինէ կոյսն ը նմ, զկնի գա-
նից և քերանաց և տապակի. իսկ
մարմինք նց տարեալ եղեն 'ի հռոմ:
Այլ զայսցանէ տես զկարևոր քըն-
նութիս յըարձակն գործոյս: Հ. հոկ.
3: Յ. հոկ. 2: Լ. սեպ. 26. և 14:

Սրբոյն · տօնս Է Յունիսայ ։

Սուրբն Աղեքսանդրացի՝ այն է Մեծն Կիւրեղ հայրապետ Աղեքսանդրիու Եկեղեցւոյ, էր որդի ազնուական և բարեպաշտ ծնողաց՝ ազգական Թէոփիլեայ պատրիարգին · յորմէ ձեռնադրեալ սարկաւագ և քահանայ՝ եղև յաջորդ նր յաթոռն յամի 412 · և իւրով սրբութբ և իմաստութբ եղև անուանի ը ամ տեղիս · և գրով և բանիւ յաղթահարեաց զամ աղանդաւորս մնացեալս զկնի առաջին ժողովոց · այլ առաւել քաջ ախոյեան հանդիսացաւ ըդէմ Նեստորի, և նստաւ գահերէց 'ի սբ ժողովն Եփեսոսի 'ի դիմաց Հռովմայ հայրապետին · և զամ աւուրս իւր եղև ջաղխիչ մոլորութե Նեստորականաց, կրելով բզմ նեղութս և վիշտս 'ի հակառակորդաց և 'ի սուտ եղբարց · մինչև հանգեաւ 'ի տր յամի իբր 444, թողեալ 'ի պանձարան եկեղեցւոյ զբազում գիրս հոգևորս և ածաբանականս։ Հ · յնչ · 19 · Բռփ ՅԷա ։ Ց · յնչ · 18 · Ն յունիս · 27 · կամ 9 ։ Լ · յնչ · 28 ։

Սուրբն Եփրեմ հայրապետ՝ ըստ ոմանց մի-միայն լինել կարծեցաւ, որպէս թէ

յու

յուդա գտօղն խաչի՝ որ կոչեցաւն
Կիւրեղ, իցէ նոյն է հեղինակի գը-
րոց՝ որ կոչի կոչումն ընծայութեան·
բայց թէ սոյն պատմութեանց զանազա-
նեալ են յերկուս· թէ որոյ և 'ի մեզ
ուղիղ ասի, Կիւրեղ հայրապետ ե-
րուսաղէմի, և միւս Կիւրեղ՝ հան-
դերձ մարբն իւրով անմոյնէ:
Առաջին և երևելին Կիւրեղ Էջմածի
մին յերկոտասան վարդապետաց, ե-
կաց յաւուրցն կոստանդիանոսի ցա-
ւուրս մեծին թէոդոսի· հայրենեօք
էր 'ի պաղեստինոյ, և սնեալ յեկէմ·
ձեռնադրեցաւ քահանայ 'ի սբյն մաք-
սիմոսէ խոստովանող պատրիարգէ·
և կարգեցաւ քարոզ բանին այ յե-
կեղեցւոջ 'ի լուսաւորել զերեխայա-
ցեալս, և 'ի յաղթահարել զմոլո-
րեալս· և վն իմաստութե և առաքի-
նութե իւրոյ պատկառելի գտեալ
յաչս ուղղափառաց և չարափառաց՝
երկոցունց կողմանց իսկ կամօք ընտ-
րեցաւ պատրիարգ եէմի· այլ 'ի
կշտամբել նորա այնուհետև համար-
ձակ զմոլորութե արիանոսաց և կիս-
արիանոսաց՝ որք կարծէին որսալ
զնա յիւրեանս, ասեն եղև նոցա,
և հնարիւք նոցին երկիցս և երիցս
ընկեցաւ յաթոռոյ, և աքսորեցաւ·
և 'ի վերջնում նոճազի հաւանութե
հարց ժողովոյն կոստանդնուպօլսոյ
հաս-

հաստատեցաւ յաթոռ իւր․ և եթէ յառաջ և եթէ զկնի՝ արար բազում և մեծամեծ գործս, դարձուցեալ զբազումս ՚ի հրէից և ՚ի հեթանոսաց և ՚ի հերետիկոսաց ՚ի կաթողիկէ եկեղեցի։ Առ սովաւ եղև երևումն սբյ խաչին յէմ, և այլ նշանք երևելիք․ սորա է և սքանչելին այն մեկնութն ընթերցուածոց, այն է կոչումն ընծայութեն։ Իսկ փոխումն նր առ ած եղև յամի 386, կամ 389։

Հ․ Յ․ Լ․ մարտ․ 18։ Նա․ և Հ․ յնվ․ 19։

Իսկ երկրորդն՝ քան զառաջինն ծերագոյն, մա կիւրեղ կոչեցեալ, և ըստ այլոց կիւրակոս, էր ազգաւ հրեայ․ և առաջին անուն նր յուդա, բնակեալ յէմ ընդ մօր իւրում աննայի․ և ՚ի գալ հեղինեայ դշխոյի յէմ ՚ի խնդիր սբյ խաչին, հրէայք յառաջ մատուցին զյուդա իբրև առաւել տեղեակ և գիտակ տեղւոյն ՚ի գողգոթա։ Եւ ՚ի գտանելն պատուականն խաչին սքանչելեօք հանդերձ՝ հաւատաց յուդա․ և մկրտեալ հանդերձ մարբն՝ կոչեցաւ կիւրեղ․ և ապա ձեռնադրեցաւ եպս կողմանցն պաղեստինոյ, կամ կալաւ զաթոռն երուսաղեմի ՚ի ժամանակի անդ սքարանաց առաջնոյն կիւրղի։ Իսկ յորժամ եկն յուլիանոս ուրացողն յե֊

րու֊

բուսաղէմ, եւ ունել զկիւրեղ եւ զանձնս, եւ դատեալ զնս վ՟ն 'ի ք՟ս հաւատոյ՝ կտրեաց զաջ ձեռն կիւրեղի. ապա հեղին կապար հալեալ 'ի վ՟ր մարմնոյ նորա, եւ 'ի բերանն, եւ տարածեալ 'ի վ՟ր հրացեալ մահճի՝ բրածեծ արարին: Իսկ զանձնս կախեցին զհերաց, եւ քերեցին զմարմինն մինչեւ ցոսկերս. եւ նա 'ի նոյն տանջանս աւանդեաց զոգին: Բայց կիւրեղ զերծեալ նաեւ 'ի վիրապէ զեռնոց, եւ 'ի կաթսայէ եռացեալ ձիթոյ, ապա գեղարդեամբ խոցել՝ կատարեցաւ 'ի ք՟ն յամի 362, կ՟մ 363:
Հ. յունիս. 6: Յ. հոկ. 28: Լ.
նոյ. 4:

Կիւրեղ սարկաւագ՝ էր 'ի Հեղիուպօլսոյ փիւնիկեցւոց. զորմէ իբրեւ ամբաստան եղեն առաջի յուլիանոսի՝ թէ յաւուրս մեծին կոստանդիանոսի զբազում բագինս կռոց է կործանել, հրաման ետ մատնել զնա 'ի ձեռս քրմաց. եւ նոցա չկարացել դարձուցանել զնա 'ի կամս մոլորութեն իւրեանց, պատառեցին զորովայն սրբոյն, եւ մասն մասն կերան զլեարդ նորա, եւ լափեցին զարիւնն. այլ չարաչար պատժովք հարան 'ի տ՟նէ. իսկ երանելին գոչելով առ ա՟ծ՟ աւանդեաց զոգին: Հ.
մրտ.

Տրփ. 23 : Յ. Տրփ. 30 : Լ. Տրփ. 29 :

Աղէքս. հռովմայ հայրապետն՝ էր ազ_
գաւ հռովմայեցի. և հմուտ արտա_
քին գիտութեց. սա զերծեալ երբեմն
'ի նաւաբեկութենէ՝ հանդիպեցաւ
սրբոյն պետրոսի առաքելոյ. և աշա_
կերտեալ նմա՝ եղև գործակից նորա
'ի քարոզութն աւետարանին քնի.
և զրով՝ հալածանօք հանդերձ. և
արժանի եղև նստիլ յաթոռ նորա
'ի հռովմ: Եւ յաւուրս դոմետիա_
նոսի կամ ադրիանոսի չարչարեալ
գանիւք և քերանօք՝ աքսորեցաւ 'ի
քերսոնիսոն. ուր կախեալ խարիսխ
նաւու ը̄ պարանոց նր՝ արկին 'ի
ծով յամի տնն իբր 76. կամ 85. այլ
յետ ժամանակաց հանեալ աշակե_
լեօք մարմին սրբոյն, և բերեալ ամ_
փոփեցաւ 'ի հռովմ: Ասէ և կղե_
մէս բազմաչարչար եպս անկիւ_
րիոյ. զորոյ զվարս յուրոյն մատե_
նի տեսցես՝ 'ի կարգի սրբոց յիշատա_
կելեաց ը̄ յայսմաւուրաց: Բայց ո_
մանց շփոթելով զգործս ինչ երկո_
ցունց՝ ասացին, թէ կղեմէս հռով_
մայեցին ևս աքսորեցաւ յանկիւրիա
(որ թարգմանի խարիսխ նաւու).
և անդ հեղձեալ 'ի մէջ ծովուն կա_
տարեցաւ. և թէ՝ յետոյ մարմին նր
բերեալ եղէ 'ի քերսոն, և 'ի հե_

թա.

Թանոսաց արկեալ 'ի ծով: Հ. Նոյեմբ 26: Յ. Նոյ. 25: Լ. Նոյ. 23:

## Կոդրա. տօն Ը Եւդոկեայ:

Կոդրատոս կամ Կոդրատիոս (որ և Կոնդրատոս) էր 'ի Նիկոմիդեայ՝ 'ի հալածանս դեկոսի և վաղերիանոսի, որդի մեծատան՝ և ջերմ յածպաշտութե. որոյ տուեալ ինչս բանտապանաց՝ այց առնէր նահատակաց: Եւ իբրև ածան նոքա առաջի պերինիոսի դքսի, կոդրատոս՝ որ կայր զկնի նց, և չէր 'ի Թուոյ կապելոց, յռջ մատեաւ տալ պինի 'ի դիմաց ամցն՝ անվեհեր դաւանելով զքս. վսյ նախ զնա մատուցին 'ի տանջանս դանից՝ քքովք և չոր արջառաջլօք. մինչև Թզաւ չափ ուռնուլ Թիկանցն, և յորդել արեան: Ապա կապեալ տարան զնա և զընկերսն 'ի Նիկեա. և յանկանիլ վատասրտաց ոմանց 'ի հաւատոց, հանդէս քաջութե սրբոյն կոդրատոսի ձգեաց զայլս 'ի հեթանոսաց 'ի հաւատս, և ուրացեալքն իսկ զղջացան, և դարձան 'ի քս. և ամենքին յօժարէին մեռանիլ 'ի վր անուանն քսի ընդ կոդրատոսի: Իսկ դուքսն զայրացեալ Ը այն՝ ետ կախել զկոդրատոս առաջի ամցն, և քերել, և խան-

ձա-

ձողել զմէջսն. այլ նա 'ի կախաղանէ անտի քաջալերէր զընկերս իւր. և 'ի ծագել լուսոյ 'ի վր̅ գնդի վըկայից՝ խաւար պատեաց զՀեթանոսս. վսյ ետ դտ̅ւրն տանել զկոդրատոս և զորս ը̅ նմա. 'ի բանտ. անդ յղեաց զբազումս 'ի նոցանէ յիւրաքանչիւր գաւառս՝ այրել զն̅ս 'ի հուր. իսկ զկոդրատոս քանի մի ընկերօք տարաւ յապամիա. և անդ փակեալ զնա 'ի քուրձ՝ էարկ 'ի խորափիտ մի իբրև 'ի սանդ, և ետ ծեծել սանդխտուամբք: Եւ իբրև պահեցաւ կենդանի, տարաւ զնա 'ի կեսարիա պաղեստինոյ. ուր նահատակեաց զերկուս յընկերաց ն̅ր՝ զատորնինոս և զռուփինոս սրով՝ յետ չարաչար քերանաց: Եւ անտի ևս տարաւ զկոդրատոս 'ի յերապօլիս. և տարածեաց զնա 'ի վր̅ հրացեալ կասկարայի. և յոչ մեռանիլ սրբոյն՝ ետ գլխատել պայլթօղ դօրականն ք̅նի: Հ. ապր. 21, կամ մայ. 2: Յ. մայ. 9: Լ. մայ. 7:

Կոզմաս և Դամիանոս անուամբ՝ երեք զոյգք եղբարց անարծաթ բժշկաց աւանդին, թերևս զհամանմանս և զնախանձաւորս միմեանց առաքինութ̅ 'ի նոյն անուն կոչելով: Քանզի նախ՝ երկու եղբարք կոզմոս և

դա

դամիանոս էին յերկրէն արաբացւոց յաւուրս դիոկղետիանոսի, արուեստաւոր բժիշկք. որք 'շրջէին ը̅ բազում տեղիս, և ձրի բժշկէին զհիւանդս. զի ոչ առնուին ինչ յումեքէ, բայց միայն հաւատալ տային 'ի ք̅ս, և առողջացուցանէին: Եւ էին այ̅ ընկեր և գործակից այլ ևս երեք եղբարք, Անթիմոս, Լեոնդիոս, և Եւպրեպիոս: Զորս առհ̅րկ կալեալ լիւսիայ դատաւորին եգէացւոց՝ գանեհար, և ընկէց 'ի ծով. այլ մ̅ծ ազատեաց զն̅. և ևս արկեցոյց 'ի հնոցէ հրոյ, և 'ի մահուանէ խաչի, և 'ի քարկոծմանէ, և 'ի նետաձգութե̅է. և յետոյ կատարեցան սրով:

Երկրորդ՝ երկու եղբարք կոզմաս և դամիանոս՝ արուեստաւոր բժիշկք. էին 'ի հռոմայ յաւուրս կարինոսի կայսեր՝ նախընթացէին դիոկղետիանոսի. և սոքա ևս ձրի բժշկէին զամ̅ն. և փոքր վարձուն դարձուցանէին զբժշկեալսն 'ի հաւատս ք̅սի. մինչև կարծել ոմանց՝ թէ և զկայսրն ձգեալ լիցէն 'ի հաւատալ: Ընդ որս նախանձեալ կռապաշտ բժշկապետի՝ որ վերակացու էր սոցուն, տարաւ զն̅ նենգութբ̅ 'ի լեառն՝ քաղել զբոյս և զծաղիկս խոտոյ 'ի պէտս դեղոց. և անդ ետ խուրոց

ար.

տրքանեկայ քարկոծել զնա , և
ծածկել 'ի քարաժայռս :

Երրորդ՝ երկու եղբարք կոզմաս և դամիանոս էին որդիք այրի կնոջ բարեպաշտի , որոյ անունն Թէոդետա . և սոքա ևս եղեն անարծաթ բժիշկք՝ 'ի փարատել զամ ախտս անոճանելին քնի . և փայլեն սքանչելի քաղաքավարութը՝ բարի և ող մահուամբ փոխեցան յաշխարհէ , և Թաղեցան 'ի մի վայր՝ 'ի տեղին կոչեցեալ փեռեման մօտ յերուսաղէմ. և յետ մահուան ևս արարին բժշկ նշանս բժշկութե բարեխօսութե նորեանց : Ժամանակ վերջնոյս ծնոյ անյայտ , եթէ չիցեն որդիք սորայն Թէոդոտեայ այրւոյն , որ այլովք երեք որդւովք նշանակեցաւ առ դիոկղետիանոսիւ : Այլ զծննուն նորայն յիշատակին տեսցուք : Հ . ծարտ . 13 , հուն 14 : Ն յուլ . 1 : Ն նոյ . 1 : Յ . հոկ . 1 : Ն յուլ . 1 . Ն նոյ . 1 : Լ . սեպ . 27 :

Կոստանդիանոս մեծն՝ էր որդի կոստանդեայ կայսեր կղորոս կամ չլորոս կոչեցելոյ՝ ծնեալ 'ի հեղինեայ. և կալաւ զթրութեն հօր իւրոյ յամի 306 . իբրև փախուցեալ դիոկղետիանոսի , և մեռեալ մաքսիմիանոսի . և յետ բազում աշխարհային քաջութեանց՝ յերանեալն 'ի պատերազմ ընդդէմ մաքսեն_

սենատորի որդւոյ մաքսիմիանոսի ,
ետես զմիջաւուրբ յերկինս զնշան
խաչի լուսատեսիլ՝ հանդերձ ատա_
ղանիւք գրովք , * այսու յաղթեա Կ.
և զայն ձև սբյ նշանի արարեալ իւր
դրօշակ՝ վանեաց զթշնամին . և ապա
լուսաւորեալ 'ի սբյն սեղբեստրոսէ
հռովմայ հայրապետէ՝ հաւատայ բոլո_
րով սրտիւ 'ի քս , և մկրտեցաւ .
և եղև առաջին կայսր յայտնապէս
քրիստոնեայ , և պաշտպան սբ հա_
ւատոյ ընդդէմ հեթանոսաց և հերե_
տիկոսաց . քանզի և առ նովաւ եղև
սբ ժողովն նիկիոյ ընդդէմ արիոսի :
Եւ յետ բզմ և մեծամեծ գործոց
բարեպաշտութե և երկիւղածութե ,
և շինութե բազմաթիւ վկայարանաց
և եկեղեցեաց 'ի զանազան տեղիս ,
և զկնի փոխելոյն զաթոռ իւր 'ի
հռովմայ 'ի կոստանդինուպօլիս նո_
րոգեալ յիւրմէ , փոխեցաւ յերկրա_
ւոր թգրութեն յերկնայինն՝ յաքիրոն
աւանի 'ի կողմանս նիկոմիդեայ՝ յա_
մի 337 : Հ. Յ. ամս. 21. Ն. յիշ. 2 :
Գործակից էր և յառաջացուցիչ
նմ բարեպաշտ գործոց ինքնակա_
լին՝ և ածասէր մայր նր դշխոյն
Հեղինէ . որ և փափաքեալ 'ի գտա_
նել զպատուականն խաչափայտն քնի ,
հրամանն ընկալաւ յայ 'ի տեսլեան .
և երթեալ յերուսաղէմ եգիտ զքան_
չէլ .

ճնշեալք զխնդրելին ։ Եւ շրջեալ ջերմեռանդն սիրով 'ի անօրինական տեղիս՝ եւ շինել բզ՟մ եկեղեցիս և մատուռունս , և բաշխեաց աղքատաց ինչս բզ՟մս . և հանդիպեալ կուսանաց նուիրելոց այ՟՝ շինեաց ն՟ց կուսաստանս , և սպասաւորէր ն՟ց անձամբ 'ի սեղանի իբրև աղախին . և ը՟ ամ՟ տեղիս՝ ուր և էանց , եցոյց զբազմապատիկ գործս բարեպաշտութե՟ . և այսպիսի առաքինի վարուք փոխեցաւ առ ք՟ս՝ յամի իբր 330։

Հ. Յ. մայ. 21 ։ Լ. օգոս. 18 ։

Կոստանդնուպօլսոյ ս՟բ ժողովն , ՃԾ հայրապետաց՝ եղև յամի 381 . յաւուրս մեծին Թէոդոսի , ընդդէմ մոլորութե՟ մակեդոնեանց հոգեմարտից , որ՟ք և ընդդէմ եւնոմեանց և ապողինարետաց . միանգամայն և վ՟ս կարգելոյ զորոշ պատրիարգ՟ Թգ՟րական քաղաքին ։ Հ. յնվ. 18 ։

Կոռնելիոս Հարիւրապետ իտալական գնդի 'ի կեսարիա պաղեստինոյ՝ յետ մկրտելոյն 'ի ս՟բյն պետրոսէ ամ՟ տամբ իւրով ը՟ գրելոցն 'ի գործս առաքելոց , եղև օգնական պետրոսի 'ի քարոզութե՟ աւետարանին . և ձեռնադրեալ 'ի նմ՟է եպիսկոպոս՝ առաքեցաւ 'ի սկեփսիոն գաւառ.

ւառ փոքուն միւսոյ . ուր ըմբռ-
նեալ 'ի գեհենատրխոսէ դատաւորէ , և
տարեալ 'ի տաճար կռոց՝ կործանեաց
աղօթիւք զբագինս . մինչ բրածեծ ա-
րարին զնա , և թողին 'ի կախ գլխն 'ի
վայր զգիշերն ողջոյն . յայնժամ քան-
դեցաւ տաճարն , և ծածկեաց Ճ
փլատակաւ զյոլովս 'ի կռապաշտից,
Ճ ոգիս և զընտանիս դատաւորին .
այլ 'ի գիշերին նորա առ սրբն կուռն-
ձեռս՝ արար զնշան խաչին , և 'ի վեր
յարոյց զկենդանւոյն թաղեալսն . և
մկրտեաց զբազմութիւն քաղաքին՝ շի-
նեաց եկեղեցիս . և յետ համատա-
րոյ քննիւք և պաշտօնէիւք՝ հան-
գեաւ ինքն խաղաղութբ 'ի քս . և
թաղեցաւ պատուով 'ի հօտէն իւր-
մէ . Հ . փետր . 22 : Յ . հոկ . 20 : Լ .
փետր . 2 :

Կրօնիդէս . տօ՛ս Անտոն և Կրօնի՛՛ :

Հ

Համապաղող . տօս Սահակ և Համ՛՛ :

Հեղինէ . տօս ընդ Կոստանդիա-
նոսի :

Հինգ վկայք . տօս յԱթանագինէ :

ՀԻՊԵՐԻՔԵԱՆՔ՝ էին եօթն վկայք 'ի սամուսատ քաղաքէ, որ և սամոստիա • ուր եկեալ մաքսիմիանոսի կայսեր՝ առնէր զհանդէս հեթանոսական տօնի իւրեք • և յայնժամ հիպերիքոս և փիլոթէոս արք գլխաւորք 'ի քաղաքէ անտի՝ որք լեալ էին քրիստոնեայ, գողեալ 'ի վերնատան միում՝ յաղօթս կային առաջի սբյ խաչին : Եւ 'ի գալ առ նս հնգեցունց բարեկամաց, որոց անուանք էին՝ յակոբոս, պարեգորոս, աբիբոս, դոմնոս, և յուլիանոս, հրաւիրել զնս 'ի տօն կռոց, հիպերիքոս և փիլոթէոս ընծայեին վճռւոյ դարձուցին զնս առ քն • և ետուն մկրտել յակոբայ երիցու՝ յորմէ լիքեանք մկրտեալ էին : Եւ իբրև հասին խնդրակք 'ի թագաւորէ՝ ունել զհիպերիքոս և զփիլոթէոս, գնային և հնգեքին ոք ինքնակամ ը նս • և յետ հարցափորձի՝ հարին դահիճք զթիկունս հիպերիքոսի կապարեայ գնտովք, մինչև 'ի վեր դիզանալ թեկանց նր յոյժ : Եւ զկնի բանտից և կապանաց, և քերելոյ զկողս ամենցն, և հարկանելոյ զորովայնս նց, գայլ 'ի բերան տարան զնս արտաքոյ քղքին • և կախեցին զեօթնեսին զխաչէ, և հարին մի մի ստաւար բեւեռս 'ի

գլուխս նր̃ · և այնպէս կատարեցաւ 'ի ք̃ս ։ Հ · հոկ · 19 ։ Յ · Լ · նոյ · 5 ։

Հիսիքէոս կամ Հեսիքէոս զինուորն էր 'ի պալատական մագիստրոսաց մաքսիմիանոսի կայսեր · և վս̃ քրիստոնէութե̃ն մերկացոյց զնա Թագաւորն յիշխանական պատուոյն , և զգեցուցին հանդերձ անարգ՝ յղեաց զնա առ աղօրինայսն՝ վաստակել ը̃ նս̃ 'ի ձեռագործ կանանց · և յետ աւուրց կոչեալ զնա զառաջեաւ՝ յիշեցուցանէր զառաջին պատիւն , և հրապուրէր 'ի պաշտօն դից · այլ յորհամարհէր Հեսիքէոսի զժամկեան պատիւն , և 'ի մեծացուցանել զյաւիտենական փառսն ք̃ի , բարկացեալ Թագաւորին՝ ետ կապել երկանաքար 'ի պարանոց նր̃ , և ընկենուլ 'ի գետ ։ Հ · մրգ · 10 ։ Յ · մայ · 10 ։ Լ · նոյ · 18 ։

Հռիփսիմեանք երեսուն կուսանքն 'ի Հռովմայ առ Դիոկղետիանոսիւ · որոց 'ի խնդրելն զհրաշագեղն Հռիփսիմէ առնուլ իւր 'ի կնութի̃ն · դաստիարակ նր̃ Գայիանէ մայր վանաց , եառ զնա և զայլ ընկերս նր̃ հանդերձ քանի մի քն̃յիւք , և փախեաւ յարևելս · ուր յետ շրջելոյ ը̃ բզ̃մ

աշ-

տեղիս՝ խնամօք տ՟ն եկեալ զտեղե
աւրն 'ի Հայս՝ արտաքոյ քաղաքին
վաղարշապատու 'ի Հնձանս , անձինք
երեսուն և եօթն : Եւ յազգմանէ
կայսեր խնդրեալ զն՟շ տրդատայ
Թագաւորին մերոյ , իբրև եգիտ
մօտ առ իւր , ցանկացաւ Հարանա-
ցուցանել ինքեան զՀռիփսիմէ եթէ
քաղցրութ՟ և եթէ բռնութ՟ ․ այլ
կոյսն ս՟բ զօրացեալ երկնաւոր ձայ-
նիւ՝ չետ տեղի բանից Թագաւորին ,
այլ վանեաց և զգետնեաց զհսկայ
արքայն մենամարտութ՟ 'ի սենեկի :
Եւ 'ի սաստկել Թագաւորին զգայթա-
նէ՝ զի խրատեսցէ զՀռիփսիմէ զաան
իւր անսալ կամաց իւրոց , նա ընդ-
Հկռկն խրախուսեաց պինդ կալ 'ի
սրբութե՟ն և 'ի Հաւատարմութե՟ն առ ք՟ս ․
վ՟յ Հարկին քարամբք զբերան գայթա-
նեայ : Այս իբրև յանՀնարս եմուտ
տրդատ , Հրամայն ետ չարաչար մա-
Հու կորուսանել զՀռիփսիմէ ․ զորոյ
նախ զլեզուն Հատին ․ և ապա պըր-
կեալ յորանս 'ի չորս ցիցս՝ խոր-
վեցին զմարմինն բոցով ջահից ․ և
պատառեալ գայլախազ քարամբք
զորովայնն՝ վայթեցին զաղիս ն՟ր , և
բրեցին զաչս ․ և ապա անդամ ան-
դամ յօշեցին , և զընկերս ն՟ր՝ որք
եկեալ էին ամփոփել զնշխարս ն՟ր ,
սուր 'ի վ՟ր եդեալ կոտորեցին , ո-

գիս լԲ. և զմին՝ որ հիմանդ կայր 'ի հնձանատեղին՝ անդ սպանին ող-րով. և մնաց միայն դայեակն երկու-

ընկերօք 'ի պալատն :

Ապա 'ի վաղիւն անդր ձեռնարկել և յերեսին 'Գայիանէանս' սպրկեցին զիւրաքանչիւրն 'ի չորս ցիցս. և ծակեալ զպղձղունս ոտից նց՝ փշե-ցին, և զերծին զմորթ նց. և ըղ-ծոծրակն ծակեալ՝ Ե այն հանին զլեզուս նց. և սայրասուր քարամբք ձեղքեալ զորովայնս՝ ցրուեցին զա-ղիսն. և ապա հատին զգլուխս նց: Զորս յետ ինն աւուրց եկեալ ժո-ղովեաց Գր լուսաւորիչն մեր. և յետ բժշկելոյ զթագաւորն և զնմ հարուածեալսն՝ ետ շինել երիս վկայարանս 'ի վր սբց կուսանացն՝ Հռիփսիմեանց, Գայիանեանց, և 'ի վր միանձնուհւոյն՝ որ 'ի հնձանատեղին, յամի Տն 301: Հ. հոկ. 5. և 6: Յ. սեպ. 30: Լ. սեպ. 29:

Ճրէշփաջաղ և հրաշխաղէպաղ, կամ Տմ երկնային զօրաց յիշատակ տօ-նախմբի յեկեղեցւոջ՝ 'ի փառաւորա-նել զնմ 'ի պատիւ յաղթանակի նց, որով 'ի նմին իսկ աւուր սատեղծ-մանն խուրեանց՝ հեղքեցին զհրա-պոյրս արուսեկին, և հաստատեն 'ի շնորհս՝ երանութե մասին եղեն ժա-

ժառանգորդ. միանգամայն և 'ի հայցել հնազգործել զպահպանողական հովանաւորութին ն̃ց 'ի վ̃ր մեր, ոյք և կարգեալ իսկ են պահապանք աշխարհի՝ երբեմն բանակք ա̃յ շուրջ զերկիւղածովք ն̃ր: Եւ նովին խորհրդով յանուանէ յիշատակին երեւելեացն 'ի ս̃բ զուարթնոցս Գաբրիէլ և Միքայէլ մեծք. զի Միքայէլ ձանաչի ոյք զօրավար երկնից՝ որ զօրօք իւրովք մարտեաւ ը̃ սադայելի, նոյնոց և հանրական տեսուչ հին և նոր եկեղեցւոյ ը̃դդէմ ա̃ծ պտ̃րզմայ չարին. իսկ գաբրիէլ երբեմն աւանձինն ընտանի ազգի մարդկան ստէպ պատգամաւորութ̃բ առ յա̃յ 'ի յայտնել զմեծամեծ խորհրդս. ոյք յայտ է 'ի հնումն և 'ի նորումն: Հ. Յ. Նոյ.
8: Լ. ահեպ. 29. և ծայ. 8:

# Պ

Պաշար կ̃մ ղազարու բեթանիացի երջանիկ բարեկամն և սիրելին քն̃ի և չորեքօրեայ յարուցեալն նորա 'ի մեռելոց, ապրեցաւ այլ եւս ամս ժե. և ոչ ծիծաղեցաւ և ոչ ժըպտեցաւ զա̃մ ժամս իւր՝ երբեմն անցեալ ը̃ փորձ մահու. և ձեռնադրեալ եպս յառաքելոց՝ շրջէր և աւետարանէր 'ի բազում տեղիս զքն̃ :

Իսկ վախճան նր ասի ննջել խաղա֊ղութ՟ 'ի կիտոնեան քաղաք կիպրաց֊ւոց, Թերևս յետ աքսորելոյ զա֊ռաջինն 'ի մարսիլիա գաղղիացւոց՝ որպ՟ այլք գրեն: Մարմին սրբ՟յն ղազա֊րու բերաւ 'ի կիպրոսէ 'ի կոստան֊դնուպօլիս յաւուրս լևոնի իմաստա֊սէր կայսեր 'ի վախճան Թ՟ դարու. և եդաւ յեկեղեցին շինեալ 'ի Թագա֊ւորէ անտի յանուն սրբ՟յն հանդերձ մե նստատանաւ: Հ. յնվ. 11. և մրտ. 16. և մայ. 28, կամ 27: Լ. դեկ. 17:

Սոյնպէս և քորքն ղազարու մարթա և մարիամ սիրելիք և մտերիմք ք՟ի, կրեցին վ՟ն անուան նր հալածանս 'ի հրէից և 'ի հեթանոսաց. և երջա֊նիկ մահուամբ կատարեցան 'ի տ՟ր: Այլ թէ զիարդ, սոյնպէս ինչ ոչ ա֊ւանդի. զորմէ տես յաւարձակն փոր֊ձոյս. ուր լիցի բան և զմարիամայ մագդաղենացւոյ, զոր 'ի յետին դարս նոյնացուցին յոլովք ը՟ քեռն մարթայի և ղազարու. Թող զի ասի՝ թէ լևոն կայսրն գտեալ և զմար֊մին մարիամու մագդաղենացւոյ՝ եդ 'ի վանս սրբ՟յն ղազարու 'ի շինեալն յիւրմէ: Հ. օգս. 9: Լ. յուլ. 29:

Ղամփիոս և ղամփիոսի, կմ Էւղամփիոս և Էւղամփիոսի եղբայր և քոյր՝ էին 'ի

նի֊

նիկոմիդեայ 'ի հալածանս մաքսի֊
միանոսի, Թաքուցեալք 'ի լերին ը̅
այլ քրիստոնեայս . իսկ յաւուր մի֊
ում եկեալ զաւմկէոսք 'ի գնել հաց
վն̅ ընկերացն՝ ըմբռնեցաւ . և դա֊
տեալ յատենի մաքսիմոսի դատաւո֊
րին վն̅ հաւատոց՝ կրեաց սաստիկ
հարուածս և քերանս, և ապնդեցաւ
չոռանոց 'ի ծակէ ոտիցն և ձեռացն .
և ածեալ 'ի մեհեանն՝ բռնի́ իւ֊
րով կործանեաց զարձանն դիոսի :
Զայս ա̅մ̅ իբրև լուաւ քուրմն̅ զամ֊
պէուհի, ընթացաւ 'ի տեղին՝ լինել
կցորդ եղբօր իւրում . ուր̅ և եղև
իսկ . ք̅ղի և զնա քննեաց դատա֊
ւորն, և հրամայեաց ապտակել .
ապա զերկոսին եւս արկին 'ի կա֊
սայ եռացեալ . այլ 'ի պաղել կա֊
սյին սքանչելեօք՝ հաւատացին 'ի
ք̅ս̅ արք երկերիւր, և գլխատեցան .
իսկ նք̅ երկոքեան այլ եւս փորձե֊
ցան քերանօք և ըկանօք և հրով
իսկ . և ապա սրով կատարեցան
յամի տ̅ն̅ 291, կամ 310 : Հ . հոկ . 9 :
Յ . Լ . հոկ . 10 :

Պանդուչանոյ սբ̅ քահանայք՝ էին հո֊
գելոց հարք և ուսաւնորդք հայոց
աշխարհէս 'ի ժամանակս հալածանաց
յազկերտի երկրորդի . ուր և դատան
'ի բանակի սբ̅ց վարդանանց 'ի քա֊

ջալերել զնս 'ի նահատակել վն 'ի
քն հաւատոց . որոց վն և յետ կա-
տարման նց՝ ծանր կապանօք վարե-
ցան 'ի պարսս . և յետ եռամեայ
տառապանաց , և վերջին բանտար-
կութե 'ի Նիւշապահ դղեկի ապար
աշխարհին վրկանայ , ուր դարձու-
ցին սքանչելեօք զմոգպետն , կրկին
և կրկին փորձեալ 'ի դենշապհոյ
արքունի տանիկանէ՝ իբրև անդրդ-
ուելի կացին մնացին 'ի տր , նախ
արշէն երանելի երէցն բագրևան-
դայ կատարեցաւ սրով . ապա ինք-
նին դենշապուհ եհար և կորեաց
զաջ բազուկ սբյն սահակայ եպսին
ռշտունեաց . և յայնմ վայրի հատին
դահճինք զգլուխ սբյն յովսեփայ
կթղկսի , և մուշէի երիցու արծ-
րունեաց , և քաջաջայ սարկաւա-
գին . իսկ զղևոնդ երէց զայրն այ
և զսարապագլուխ սբցն , քարշեցին
նախ ը̄ քարամեռ տեղիս , մինչև
քանցել տմ' մարմնոյն յօդիերաց . և
ապա հատին զգլուխ նր , որք և ըզ-
սահակայ եպսի : Իբ 'ի լինել ահա-
գին սքանչելեաց 'ի վր մարմնոց
սբց , և յիջանել լուսաւոր արծ-
ուոյ 'ի վր սբյն ղևոնդի , խուժիկ
ամբ ժողովեալ զնշխարս նց , յամի
454 : 'Ի Թիւ մեկեցուցոց ղևոնդեանց
դասին և այլ չորք անձինք նահա-

տաւ

տանէալք ՚ի նոյն աւուրս. ՚ի մոդ-ղեան նորադարձ, որ յանդարձ օ-տարոսէ կատարեցաւ. սամուէլ և աբրահամ երիցունք յարածոյ այրա-րատայ, որք յալքունի կարաւանի սպանան. և թաթիկ եպս բասենոյ՝ որ յասորեստան կատարեցաւ. այլ զայսցանէ ունիս տեսանել ճոխա-գոյն ՚ի գիրս մեծին եղիշէի և փար-պեցւոյն: Հ. յուլ. 31:

Ղուկաս աւետարանիչ՝ էր յանտիո-քայ ասորւոց՝ արուեստիւ բժիշկ. ճարտար գրիչ, և պատկերահան. որոյ եկեալ յերուսաղէմ, և տեսեալ զգործս փրկչին՝ հաւատաց ՚ի նա, և յարեցաւ յաշակերտսն. և ապա գործակից լեալ մեծին պօղոսի իբրև մտերիմ աշակերտ նր սիրելի՝ քա-րոզէր զաւետարանն. զոր և ՚ի գիր անցոյց հրամանաւ պօղոսի և թե-լադրութբ հոգւոյն սբյ ՚ի խնդրոյ թէ-ոփիլոսի ուրումն աշակերտի. նոյնպս գրեաց և զգործս առաքելոց գե-ղեցիկ կարգաւորութբ: Եւ զկնի բզմ վաստակոց՝ զոր վաստակեաց ՚ի մր հալածանս հանդերձ, և յետ ամենայն զբզմ բժշկութն հոգ-ւոց և մարմնոց, և նկարելոյ զքա-նի մի պատկերս սբ ածածնի՝ ածոր-դւոյն ՚ի գրկի, հանգեաւ խաղա-

դօւլթբ 'ի Թիմաս կամ 'ի Թեբէս բիովտոխոյ յեղլոգա. և յետ ժամկաց փոխադրեցաւ մարմին նր 'ի կոստանդնուպօլիս, և ապա 'ի պատուճա: Հ. Յ. Լ. հոկ. 18:

Ղուկէանոս՝ որ և գրի Ղուկիանոս՝ քհնյ և ճգնաւոր, էր երէց եկեղեցւոյ մեծին անտիոքայ ասորւոց առ դիոկղետիանոսիւ, այր գիտնաւոր և մեծեւանդն յածպաշտութե. որոյ և աշակերտք բազումք՝ քհնյք և եպսք եղեն, և մարտիրոսացան ընդ գուշակելոյ նր. ապա անձամբ եկեալ 'ի Նիկոմիդիա՝ ուր էր հրդեհ հալածանաց, քաջալերէր զնահատակս, և զուրացօղսն 'ի դարձ ածեալ՝ խրախուսէր 'ի մահ վն անուանն տն. և ինքն առաքելաբար շրջէր քարոզէր զբանն կենաց 'ի քաղաքի անդ, առեալ յիւր շնորհս երևելոյ յորս հայէր, և չերևելոյ՝ յորս ոչ հայէր. մինչ զի և Թագաւորին ակնածեալ 'ի նմանէ՝ ոչ իշխեաց խօսել ընդ նմա երեսօք, այլ ընդ մէջ կախելով զվարագոյր. և յաղթեալ յածային իմաստութե նր՝ հրաման ետ գան հարկանել, և ապա տանջել քերանօք և ջահիւք և հալեալ կապարաւ և երկաթի տապակօք. և 'ի վախճանի Թողուլ անսուաղ 'ի

քան_

բանտի․ մինչև սովամահ եղև կեն-
դանին ննջեացն․ կամ ըստ ոմանց խողխո-
ղեցաւ 'ի բանտի․ և մարմին նորա ար-
կեալ 'ի ծով՝ հանաւ սքանչելեօք և
թաղեցաւ 'ի քաղաքն տրեպանոյ՝
հեղինուպոլիս կոչեցեալ․ յորոյ վր
ետ շինել եկեղեցի մեծն կոստան-
դիանոս․ և ոսկեբերան պատմէեայ
ներբողիւ ։ Հ․ Յ․ հոկ․ 15 ։ Լ․
յնվ․ 7 ։

Նոյ և այլ փառաւոր վկայ ղուկիա-
նոս անուն 'ի սահմանաց նիկոմի-
դեայ առ մաքսիմիանոսիւ, նահա-
տակեալ երկու ընկերօք՝ թէոդորո-
սիւ և ամոնիւ․ որք և այլ մարտի-
րոսք համանուանք յայլ և այլ ժա-
մանակս ։

Ղունկիանոս (որ և ղունգինոս) հարիւ-
րապետն՝ այն է, որ իւրովք զօրականօք
կայր 'ի գողգոթա 'ի պահպանութե 'ի
ժամ խաչելութե արարչին․ և տե-
սեալ զահաւոր սքանչելիսն, և զա-
ւանդումն հոգւոյ տն կենդանի ձայ-
նիւ, աղաղակեաց՝ թէ արդարև այ
որդի էր սա․ (կամ որք այլք կար-
ծեն, էր զօրականն այն՝ որ խոցեաց
տիգաւ զկողս փրկչին)․ և դարձեալ
կարգեալ 'ի պահպանութի գերեզ-
մանի տն՝ յորժամ կաշառս եառն
հրէայք պահապանաց վասն ծածկելոյ

զյարութն նր, ղունկիանոս և եր-
կու ընկերք նր ոչ կամեցան առնուլ
լինչ. այլ յայտնեալ յառաջեալն՝ մկր-
տեցան 'ի նոցանէ: Այս գնաց
ղունկիանոս և որք ը նմա 'ի բնիկ
գաւառ իւր 'ի կապադովկիա, և
անդ քարոզէր զքն. իսկ պիղատոս
'ի սադրելոյ հրէից ամբաստանեալ
զնմէ առ կայսրն վն 'ի բաց կալոյ
'ի զինուորութէն՝ առաքեաց առ նա
զօրականս զոմն. որոյ քննեալ զհետս
նր և զերկուց ընկերացն՝ նահատա-
կեաց սրով, և զգլուխն ղունկիա-
նոսի եբեր յերուսաղէմ առ հրէայս
վն խոստացեալ կաշառաց. և նք
արկին 'ի կոյտս աղբեաց. այլ յետ
ժամանակաց գտաւ սքանչելեօք 'ի
ձեռն կնոջ միոյ՝ որոյ աչքն կոյր էին
և բացան բարեխօսութբ սրբյն: Հ.
Յ. հոկտ. 16: Լ. մրտ. 15:

## Ս

Սահաբայեցրե կոչին՝ լինն վկայք
ճառեալք 'ի գիրս մակաբայեց-
ւոց, և ժամանակակիցք քաջին յու-
դայ մակաբէի, նահատակեալք առ
անտիոքաւ արքայիւ սելևկիացւոց՝
որ եպիփան կամ երևելի կոչիւր:
Աք էին եղիազար քահանայ, և Շամո-
նէ կամ սաղոմինէս կին այրանիրա՝

եօթն

եղին ուղղակի հանդէպն ։ Եղիազար այր ծերունի՝ օրինապետ և առաքինափայլ՝ որ ոչ առնուլ յանձն ուտել զխոզենաւ և յետս կալ յամենայն օրինաց, նահատակեցաւ 'ի հանդէս բազմաւ՝ որք երևէին, յերուսաղէմ քաղաքի ։ Իսկ շամունէ և որդիքն նր̄ եղբարք եօթն յանտէնի թագաւորին անտիոքոսի յանտիոք քաղաքի սքանչելի արութե̄ գլան գլան տանջանաց համբերեալ՝ կատարեցան 'ի մը̄ ճշմարտութե̄ օրինաց · որք ըստ՝ նկարագրեն ս̄բ̄ գիրք · ա̄ մակ · դ̄ · և է · զորս և պանծալի ճառիւք ներբողեն հծ̄աբանն, ոսկեբերանն, և այլք ։ Հ · Յ · Լ · օգոս · 1 ։

Մաղար, կամ մաղարիոս անուանեալ՝ բազում ս̄բ̄ ճգնաւորք եղեն, այլ առաւել նշանաւորքն 'ի նո̄ էն երկու ։ Մին է՝ մեծն մաղար եգիպտացի, հանդարտեալ 'ի թեբայիդոյ անապատն՝ հրաշալի վարուք, և հոգեբուղխ խրատուք, առաջնորդ բազմութե̄ միանձանց · առ որ դիմէին ամ̄ենն և 'ի հեռաւոր կողմանց իբրև առ բժիշկ հոգևոր՝ և հօրանց հայր, իբրու երկրորդ պնի մեծին անտոնի, որոյ էր աշակերտ համանման · վախճանեալ յամի 391 ։

Եւ միւսն է մաղարիոս · ճգնաւոր ա-

ղէքս.

ղեքսանդրացի , աշակերտեալ և սա երբեմն անտոնի , և շրջեալ յանապատս եգիպտոսի , և 'ի բզմ այլ հեռաւոր տեղիս , իբրև անմարմին 'ի մարմնի ճգնող. վախճանեալ յամի 404: Այլ գործք երկոցունց բզմ իրօք հանդէտ էին 'ի մրցիլ Ը դիւաց աներկիւղ համարձակութբ , և 'ի գործել մեծամեծ սքանչելիս : Այլ է և միւս ևս մակար ձեռատուն աշակերտ սբյն անտոնի՝ առաջնկայ գտեալ թաղման նր , և յաջորդեալ յաբբայութե վանաց նր . որդ և մակար կամ մարկոս հռովմայեցի անուանեալ՝ որիչ է 'ի ս̃ջէ . դորոց որոշագոյն տացուք տեղեկութի յԸարձակն : Հ. ծրփ. 4: Յ. յնլ. 19: Լ. յնլ. 2. և 15:

Մակար, և Մակարիոս Ճկյտ. տես Ը Եւգինէոսի և Ը Եւդոքսիոսի :

Մաղաքիա . տես Երկոտասան մարգարէք :

Մանասէ Ճգնաւոր նահատակն քրի՛ էր 'ի գանգրայ պափղագոնիոյ որ 'ի սահմանակցութե գաղատիոյ, զաւակ խոստովանող վկայից թէոդոտոնի և հռոփինայ՝ ծնեալ 'ի բանտի . որ և որբ մնացեալ՝ մնաւ 'ի

կե-

կեցարիս 'ի ձեռս բարեպաշտ տիկնոջ միոյ . և 'ի մետասան ամաց հնկի մտանեցաւ յանտեան 'ի հալածանս աշխարհականաց կայսեր . և յետ գանից և խանձողելոյ հրով՝ մինչդեռ կամէին ընկենուլ զնա 'ի ծով , ձեռամբ հրեշտակի տարեալ եդաւ 'ի լեառն կեսարիոյ . ուր ը բզմ ժամանակս արար զգործ հովուութե և անապատաւոր ճգնութե՝ ստէպ երգելով զսաղմոսս 'ի ձայն քաղցր . և այնչափ ծաղկեցաւ սրբութբ , մինչև հնազանդէին նմա գազանք վայրի . և հեթանոսք գային առ նա, և դառնային 'ի հաւատս : Վյ կալաւ զնա իշխանն կեսարիոյ , և ետ ձկտել զբազուկս սբյն մինչև ցխախտումն ոսկերաց . և քերել զմարմինն , և չփել խորգով և աղիւ . ապա էարկ զնա առաջի գազանաց . այլ ոչինչ մեղան սբյն . նոյնպէս զերծաւ և յայլոց տանջանաց , և 'ի վախճանի կատարեցաւ քարկոծմամբ , կամ հարմամբ երեքժանի երկաթոյ : Հ . Յ . ոէղ . 2 : Լ . օգոս . 17 :

Սանդ կմ նանէ ճգնաւոր կոյսն էր մի յընկերաց սբց հռիփսիմեանց . որոց յանցանելն ե եկեղեաց գաւառ ազդմամբն այ ընտրեաց մանի միայնա-

նահատակ 'ի սեպուհ լեառն Դարանաղեաց. և մնեալ 'ի քարայր մի' ձըմներ անդ յառանձնութե̄ աղօթիւք և երկնաւոր մտածութե̄բք, խոտ կերակրելով, և արևակէզ և ցրտահար լինելով. մինչև յերկարութե̄ ժամանակին մաշեալ փոխեցան զգեստք մարմնոյ նո̄ր: Իսկ յետ ամաց բազմաց յերևեալ նմա ս̄բ լուսաւորչին 'ի նոյն' լեառն սեպուհոյ միայնակեցութե̄, իբրև մօտ եղև յայլն մանեայ, ձայնեալ առ նա կուսին' աղաչեաց դադարել այլ ևս երիս աւուրս. և ապա եկեալ եգիտ զերանելին վախճանեալ. և թաղեաց զնա սաղմոսիւք և օրհնութե̄բ' զտեղի էառ անդ, և ճգնեցաւ 'ի նմին այրի մինչև 'ի փոխումն իւր: Հ. հոկ. 29:

Մանկանք Բեթղեհէմի, որ և անմեղ մանկունք, են երջանիկ տղայք սանդեայք' յերկեմենից և 'ի խոնարհ. որք կոտորեցան հրամանաւ հերովդի' սրախողխող եղեալք դերահրաշ նահատակութե̄բ, ոչ լոկ վն̄ անուանն ք̄ի մեռանելով, այլ և փոխանակ ք̄ի. որ ոչ ումեք այլ 'ի վկայից վիճակեցաւ. ոճ̄ և յայտ է 'ի պատմութե̄ ս̄բյ աւետարանին, և 'ի պանծալի ներբողենից հարցն ս̄բց. շատ լիցի քեզ քաղել զմարգարէաշար բանս.

չարչարակցին մերոյ : Հ · յուլ · 8 · և մայ · 11 : Յ · դեկ · 29 : Լ · դեկ · 28 :

Մանկանց եփեսոսի · տես Եօթն մանկն :

Մանկանց սեբաստիոյ · տես Քառասունք :

Մանուկն խոսքողանոց · տես 'ի Սումանոս :

Մատթիաս առաքեալ (որ ըստ այլոց Տաթէոս,) ծայրին վիճակաւ ընտրեալ 'ի մետասանից 'ի լրումն երկոտասան Թուոյ, յորմէ անկաւ Յուդաս գնալ 'ի տեղի իւր, շրջեցաւ 'ի քարոզութն աւետարանին 'ի զանազան տեղիս · և հասեալ յեթեովպիա՝ դարձոյց զբազումս նշանօք և զօրութբ · և ձեռնադրեալ նց քահանայս և պաշտօնեայս եկեղեցւոյ՝ անդէն կատարեցաւ, սաստիկ գանակոծեալ յանհաւատից · կմ ըստ այլոց՝ դարձ արարեալ 'ի հրէաստան, քարկոծ եղև, և սակրով գլխատեցաւ : Հ · ֆետր · 4 : Յ · օգոս · 9 : Լ · ֆետր · 24 :

Մատթէոս առաքեալ և աւետարանիչ, որ երբեմն մաքսաւոր՝ Ղևի ալփեայ կոչեցեալ, նախ քան զգնալն իւր 'ի քարոզութն գրեաց զաւետարան.

րանն իւր ազգամամբ ս̃բ հոգւոյն 'ի խնդրոյ եկեղեցւոյն եճ̃մի․ և ապա շրջեալ ը̃ բազում ազգս և գաւառս հեթանոսաց՝ եհաս մինչև յաշխարհն մարդակերաց․ և անդ բազում չարչարանս կրեալ վ̃ս անուան տ̃ն, և անմխասելի պահեալ, դարձոյց զոչ սակաւս 'ի ք̃ն․ և ձեռնադրեալ անդ զպղատոն զոմն եպ̃ս՝ ինքն դարձաւ 'ի հերապօլիս տարբւոյ, և անդ կատարեցաւ․ կամ ըստ այլոց՝ անդէն յերկրին բարբարոսաց նահատակեցաւ հրով, և թաղեցաւ 'ի պղատոնէ եպ̃սէ ։ Հ․ Յ․ նոյ․ 16 ։ Լ․ սեպ․ 21 ։

Մարդարիոս․ տես Եւստրատ" ։

Մարթա և մարիամ․ տես ընդ Ղաղարու ։

ՄԱՐԻԱՄ կոյս Ա̃ծածին՝ օգոստատիրուհի ամ̃ սր̃ց՝ երկնաւորաց և երկրաւորաց, (որ ոչ այնչափ 'ի կարգ սր̃ց տօնելեաց դասի, որչափ փառաւորեալ ը̃ ա̃ծորդւոյ իւրում՝ տ̃րունական տօնակատարութ̃ մեծարեալ պատուի,) էր 'ի Նազարեթէ գալիլեացւոց՝ դուստր յովակիմայ և աննայի 'ի տանէ դաւթի՝ հայրենեօք, և մայրենեօք ազգական եղիսաբեթի՝ որ 'ի տանէն ահարոնի․ օրինօք բնութ̃

ծնեալ, այլ 'ի վեր քան զօրէնս բը-
նութե՝ անման յարատոյ հողածնե-
լոցս հասարակաց՝ առանց յանցա-
նաց զաւակ գտեալ մօրն եւայի, և
անդատապարտ շառաւիղ օրհնութե
նախահօրն. վն ոչ միայն ծնունդ-
նր սբ, այլ և յղութին եղև տօնելի:
Որ և անդստին 'ի ծնէ նուիրեալ
այ՝ իբրև զաւակ ուխտական յամուլն
աննայէ աւետեօք և սքանչելեօք պըտ-
ղաբերեալ, եռամեայ էր սամուելի՝
որ յառաջնոյն աննայէ, ընծայեցաւ
'ի տաճարն այ. և ապա եօթնամեայ
իսպառ հրաժարեալ 'ի տանէ ծնո-
ղաց՝ 'ի մերձաբնակ կուսաստան տա-
ճարի ըն պարկեշտաժողով օրիորդս
կալաւ զբնակութի, անթարգմանելի
վարուք սրբութե՝ սերովբէ հողեղէն
և մարմնաւոր քերովբէ: Ապա իբր
'ի չորեքտասան ամաց հասակի՝ ըստ
գեղեցիկ տեսչութեն այ խօսեցեալ-
ան արդարոյ յովսեփայ հիւսան 'ի
տանէ դաւթի, ընդունի զգաբրիէ-
լեանն ողջոյն աւետեաց՝ յուրախու-
թի ամ աշխարհի, լինել մարմնարան
բանին այ՝ անթառամ մաքրութբ միշտ
կուսութե: Որ և յարգանդի կրելով
խորին խոնարհութբ զորն տեսղե-
րաց՝ փութացաւ աղդմամբ նր յայց
ելանել կարապետին յովհաննու, և
սրբել զնա յարգանդի մօրն: Եւ յետ

դար-

դարձին 'ի լսման ժմկի վայելչապէս
ծնաւ զմիածին իւր զա̃ծորդի 'ի բեթ-
ղեհէմ քաղաք դաւթի, և քառասնօ-
րեայ 'ի տաճարն ընծայեցոյց: Եւ
կուսական կաթամբ յաճուցին հա-
սակի վերաբերեալ՝ ամ յամէ տա-
նէր ը̃ իւր զմիածինն հօր 'ի տաճար
հօրն. և յա̃մ անօրինական գործս
կենդանարարին՝ գործակից լինէր փըր-
կուԷ մերոյ, մինչև յանպարտական
կիրս խաչին: Ուր որդին մարմնով
պատարագէր դառն մհ̃. և մայրն
հոգւով ողջակիզէր 'ի մ̃ր սիրոյ ան-
ձանոյն. և ոմ̃ չարչարանաց միած-
նին եղև կցորդ անպատմելի, նոյն-
պէս և յետ յարութե̃՝ փառաց նր̃ հա-
ղորդ անմեկնելի. ոչ միայն զորդին
տեսանելով յարուցեալ, այլ և զինքն
յետ քանի մի ամաց անցելոց: Քան-
զի հրաւէր եկեալ փոխման կուսին յա-
մի տն̃ իբր 45. և 'ի հասակի ամաց
իւրոց իբր վաթսուն, կմ̃ կգ̃, նա-
զարբասնեալ հոգին աւանդէր 'ի ձեռս
ա̃ծորդւոյն երկնաւոր փառօք լցե-
լոյ՝ յառաջինկայութե̃ համագունդ դա-
սուց առաքելոց, և զկնի եռօրեայ
թաղման ը̃ նմանութե̃ միածնին՝ յառ-
նէր յանմահական կենաց, վերափո-
խեալ 'ի փառս անպատումս յառա-
գաստն լուսոյ՝ յանմոռանալին եղակա-
նացս ը̃ երրորդութե̃. իբր զի է 'ի
վեր

վեր քան զմիտ արարածական բնութեն , և միայն 'ի վայր քան զԱծ : Որ և երբեւ գլխոյ հասարակաց և մայր եկեղեցւոյ՝ բարեխօս է մեզ աշխարհի . և պարգևաբաշխ սուաստուածեան՝ անպակաս գանձուց , որոց հաւատով կարդան առ նա . և աղաչելեօք նո̃ր լինեն ողորմելիք : Հ . Յ . Լ : օգոստ . 15 :

## Մարիամ Մագդաղենացի . ամ̃ս իւղաբեր կանայք :

Մարինէ կոյսն (որ թ̃ յն . մարինէ . և թ̃ լտ . մարգարիտա) էր յանտիոքայ պիսիդեայ՝ դուստր եդեսիոսի քրմի յաւուրս դեկոսի կայսեր , կամ դիոկղետիանոսի . և հաւատաց 'ի քս̃ գաղտ 'ի հօրէն . այլ իբրև 'ի վեր ել բանն , մատնեցաւ 'ի ձեռս ողիմբիոսի եպարքոսի . յորմէ սաստիկ հարուածով և քերանօք տանջեալ՝ արկաւ 'ի բանտ . ուր յաղօթել կուսին՝ երևեցաւ նմ̃ սատանայ 'ի կերպարանս ահագին վիշապի՝ սպառնացեալ կլանել զնա . իսկ նորա առեալ 'ի ձեռս զփայտեայ փոքր խաչ՝ յանձն արար զանձն այ . և զօրացեալ տեսլեամբ հոգւոյն սրբոյ երևելոյ 'ի նմանութի աղաւնւոյ՝ կոխեաց 'ի վերայ պարանոցի վիշապին , և յանուն քն̃ սասանեալ զնա՝ յայտնեալ զամենայն

նոյն խաբէութեան իւր, ապա թոյլ֊
եա երթալ յանդունդս ։ Յետ այ֊
սորիկ միւսանգամ դառնեցաւ կոյսն
յառենի․ և գտեալ անդրդուէլն 'ի
հաւատս, և ազատեալ սքանչելովք
'ի սանէ եռացեալ ջրոյ, ընկալաւ
զկենս մահու գլխատմամբ ։ Հ․ յուլ․
18 ։ Յ․ յուլ․ 17 ։ Լ․ յուլ․ 20 ։

Մարկիանոս կիսասարկաւագ, և
Մարտիրոս կամ Մարտիրիոս դպիր՝ էին
աշակերտք և նոտարք սրբոյն պօղոսի
խոստովանող հայրապետին կոստան֊
դնուպօլսոյ․ զորս զկատարումն ըն֊
ճեալ երկոցունց նոտարացն՝ սրբ֊
գադոյնս ջատագովէին զուղղափառ
հաւատս նր ընդդէմ արիանոսաց․
վն կալեալ զնս փիլիպպոսի արիո֊
սեան եպարքոսի՝ եարկ 'ի բանտ խա֊
ւարային․ և նեղէր զնոսա սովու և
ծարաւու՝ ընդունել զաղանդն արիո֊
սի․ և իբրև ոչ կարաց յաղթել նց,
ետ հանել 'ի վր պարսպի․ և խող֊
խողել սրով՝ յաւուրս կոստանդեայ
կայսեր ։ Հ․ Յ․ Լ․ հոկ․ 25 ։

Մարկոս աւետարանիչ (որպէս համարել
յեղբօրորդւոյն բառնաբայ 'ի յով֊
հաննէ մարկոս կոչեցելոյ) էր աշա֊
կերտ սրբոյն պետրոսի՝ իբրև որդի
նր սիրելի; և դպիր կամ թարգմանն․

որ

որ և գնաց ընդ նմա 'ի հռովմ. և 'ի
հրամանէ նորա գրեաց զաւետարանն
հոգւով սրբով. և առաքեալ 'ի նմանէ
'ի քարոզութեն՝ շրջեցաւ ընդ բազում տե-
ղիս, և առաքելապէս 'ի սահմանս
եգիպտոսի. ուր զտեղի առնէր յա-
ղեքսանդրիա՝ ուսուցանէր զժողո-
վուրդն, և ձեռնադրէր քահանայս
և պաշտօնեայս: Իսկ յաւուր տօնի
հեթանոսաց՝ դիմեալ ալեքսանդրաց-
ւոց 'ի վերայ սրբոյն, կապեցին չուա-
նաւ, և գետնաքարշ տարան 'ի բանտ՝
ստուգանելով զերկիր յարենէ նորա.
այլ 'ի բանտին մխիթարեաց զնա հր-
րեշտակ տն. և յաղօթել նորա առ քս՝
առնուլ զոգի իւր. ինքնին փրկիչն
երևեցաւ նմա՝ ասելով. խաղաղութի՛ն
ընդ քեզ՝ ծառայ իմ և աւետարանիչ
մարկոս: Եւ 'ի վաղիւն դարձեալ
քարշեցին զնա ընդ երկիր, մինչև ա-
ւանդեաց զոգին. իսկ զմարմին նորա
այրել 'ի հուր. այլ 'ի լինել սաս-
տիկ անձրևոյ և կայծականց՝ եկեալ
աշակերտաց հանին զմարմինն ամ-
բողջ 'ի հրոյն. և եդին պատուով 'ի
փորեալ վիմի յամի տն 61 կամ 62.
որ և յետ ժամաց 'ի թ դարու փո-
խադրի 'ի վենետիկ: Հ. ճրփ. 24:

Ց. Լ. ապր. 25:

Մ՝արկոս եպս արեթուսայ 'ի սահմանս
ասոր-

սարուաց՝ էր առ մեծն կոստանդիա-
նոսիւ, հովիւ քաջ՝ քակտիչ պաշտա-
մանց հեթանոսաց. իսկ յաւուրս
աղմկաց արիանոսաց անցին զնովաւ
ալիք խռովութեն 'ի նենգութէ կիսա-
րիանոսաց, որք պատճառանօք խա-
ղաղութէ հնարեցան որսալ զնա առ
ճակ մի 'ի կողմն իւրեանց՝ վս̄ գո-
վոյն այր յաջողակ բանիւ և գրով.
յորոց սր̄ թօթափեալ զանձն՝ արթ-
նութբ̄ խնամ ունէր իւրումն հօտի
յերեսաց աղանդաւորաց և հեթա-
նոսաց մինչև 'ի ծերութն իւր յաւուրս
յուլիանոսի. որոյ հրամանաւ ըմբռ-
նեալ զնա հալածչաց իբրև գլխաւոր
պաշտպան հաւատոյ՝ կապեցին և հա-
րին, և քարշեցին չուանաւ ը̄ փո-
ղոցս, և զականջս նր̄ կտրատե-
ցին. և մանկունք դպրոցի եդին զնա
'ի սասղասռ մի՝ և ձօձելով խաղ ա-
նէին, և երկաթի գրչաւ ծակոտե-
ցին զգագաթն երանելւոյն: Ապա
բևեռեալ զնա 'ի վր̄ փայտի ը̄ այլ
նահատակս՝ օծին մեղու զմարմինս
նց̄. ուր մեղուք և գուեխք չարա-
չար խայթէին զնս̄. և զկնի այլ ևս
լլկանաց և տանջանաց 'ի ծով արկան
ընկերք մարկոսի. իսկ նա կապանօք
առաքեցաւ առ յուլիանոս. որ ետ
տարագրել զերանելին յանծանօթ
կղզի մի. և այնպէս փոխեցաւ առ

ած խոստովանող վկային. զոր և ներբողէ տօնաբանն 'ի ձեռն Եփրեմ յուլիանոսի : Հռ. մրտ. 23 : Յ. մրտ. 30 : Բօլլանդ. մրտ. 29 :

Մարկոս միայնակեաց, որ և աբբայ մարկոս՝ էր աթենացի, կրթեալ յուսումն գիտութեց. այլ յետ մահու ծնողացն՝ զմտաւ ածեալ զունայնութն կենցաղոյս, եթող զտուն իւր և զամենայն ինչս. և երթեալ 'ի ծովեզերն՝ նաւաւ 'ի վր ովկիանոսի մեծի, և վարեաց 'ի խորս. և առաջնորդեալ 'ի Տնէ՝ ել 'ի ցամաք հեռաւոր 'ի լեառն կոչեցեալ Թարմաքէս յաշխարհին Խաւիչկաց. ուր զամս ղէ եկաց անծանօթ 'ի մարդկանէ՝ խոստամբեր վարուք և հրեշտակային սրբութբ. այլ 'ի մերձենալ վախճանի նր՝ ազդմամբն այց եկն 'ի տես նր աբբայն Սերապիոն. որ և ամփոփեաց զնր մարմինն երանելոյն. որոյ գրեալ կայ լիով 'ի վարս հարանց : Հ. ապր. 2 : Բօլլանդ. մարտ. 29 : Սա յիշի յանուանէ 'ի սրբոտարագամատոյցի. և թէպէտ 'ի տօնացուցի պակասի, բայց զօրութբ է խառնեալ 'ի տօնի հարց եգիպտացւոց՝ Է անուանբ և այլոց եղբց հարց :

Մարութէ. տես 'ի Յակոբ մծբ" :

Է H Մա.

Մարութայ եպս Նփրկերտոյ յաշխարհին Ծոփաց՝ էր հայրենեօք ասորի, և մայրենեօք յազգէ հայոց՝ առ փոքրն Թէոդոսիւ, ծաղկեալ լուսաւոր վարդապետութբ և առաքելական ոգւով՝ 'ի դարձուցանել զբազումս 'ի կռապաշտից մնացելոց 'ի սահմանս ասորեստանի, և 'ի շինել զեկեղեցիս : Որ և մծ սքանչելի համբաւոյն կոչեցեալ 'ի ախտաւորն 'ի յազկերտայ առաջնոյ՝ բժշկեաց զորդի նր այսահար . արար և զայլ նշանս երևելիս, և դադարեցոյց խաղաղու զհալածումն քրիստոնէից 'ի պարսս . և տարեալ 'ի Թագաւորէն հրովարտակ յանձնարարական՝ եկն առ կայսրն . և հրամանաւ նր և ծախիւք նորոգեաց և ամրացոյց զքաղաքն ծոփաց, որ կոչեցաւ Նփրկերտ, կամ մարտիրոսաց քաղաք . զի ժողովեաց անդր արքունի իշխանութբ՝ ամենայնին սքանչելեօք հանդերձ, զմարմինս և զնշխարս մեց վկայից յամ կողմանց բզմ յոյժ յոյժ, իբր ճ, և իճ, կամ ճ, և ձռ մասունս, զետեղեաց զնս յորմս հոյակապ տաճարի շինելոյ յիւրմէ՝ 'ի զանազան խորանս և 'ի տապանակս . և ինքն լցեալ զաւուրս իւր սրբութբ՝ պատուեցաւ ընդ նշխարս մեց ժողովելոց 'ի նմանէ : Հ . ճայ . 28 :

Յ. փետր. 16 : Լ. դէկ. 4 :

Մարտիրոսն . տօն Ը Մարկիանոսի :

Մարտիրոսն . տօն Ը Սարգսի :

Ս՝ էլէ կմ դիչնեեղիսկոպոս՝ էր յազ-
գէ պարսից յաւուրս Շապհոյ ար-
քայի երկրայնակցի՝ հրաժարեալ 'ի
զինուորական կարգէ, և տուեալ
զանձն 'ի ծառայութիւն ոյ 'ի Շօշ քաղա-
քի կամ յասպահան . ուր ձեռնադ-
րեցաւ 'ի բեդշաբոյ եպիսկոպոսէ հո-
վիւ բնիթրազան քաղաքի . այլ ոչինչ
օգուտ տեսեալ անդ՝ զի արեւապաշտ
էին բնակիչքն, գնաց յեկէմ, և շր-
ջեալ յանապատս ճգնաւորաց՝ ող-
ջունեաց զհայրն անտոն . և 'ի մծբին
հանդիպեալ սրբոյն յակոբայ՝ լուաւ
'ի նմանէ, թէ մարտիրոսութ՟ կատա-
րիս : Ապա դարձ արարեալ 'ի պարսս՝
շրջէր առաքելաբար, և քարոզէր
զաւետարանն՝ զոր կրէր 'ի մախա-
ղի, և առնէր նշանս և արուեստս
անուամբն քի : Իսկ իշխան քաղա-
քին գերդայ կոչաւ զնա հանդերձ
երկու աշակերտօքն, որ էին Բաւրա
փաևանոյ ( ըստ այլոց՝ Էֆորա, կամ աբ-
րաւխմա ), և Շինաւ սարկաւագ ( որ և
շինա կմ չչըլա ) . և խոստագոյնս տան-
ջէր զնա՝ զոհել արեգական և հրոյ .

և 'ի յանդիմանել սրբոցն զմոլորութիւն հեթանոսաց, հարին զմէջս սուսերաւ ընդ կուրծս և ընդ սիրտն իշխանին և եղբայր նորա. և սրբն տասց. թէ 'ի վաղիւն և դուք 'ի մեծամեծանց այսպէս սպանջիք: Իսկ աշակերտքն սրբոյն գանիւք կամ քարկոծմամբ նահատակեցան. և մարմինք նոցա եդան 'ի քաղաքն մելտինայ: Եւ կատարեցաւ բան սրբոյն 'ի վերայ իշխանացն. զի 'ի վաղիւն անդր հարին յորս այր զեղբայր իւր 'ի սիրս միմեանց: Հ. նոյ. 12: Յ. նոյ. 13: Լ. ապր. 22: Աշխար. ա-
ետրինոսի:

Մելետոս կամ Մելետիոս հայրապետն էր 'ի մելտինոյ փոքուն հայոց, առ կոստանդեաւ որդւով կոստանդիանոսի: Սա նախ ձեռնադրեալ եպիս սեբաստիոյ՝ յետ սակաւուց հրաժարեցաւ յաթոռոյն վս̄ անսաստ լինելոյ ժողովրդեանն. և առանձնացեալ 'ի բերիա՝ ընտրեաց զվարս հանդարտութե. այլ զի մեծ էր անուն սրբութե և իմաստութե նր̄, ընտրեցաւ պատրիարգ աթոռոյն անտիոքայ՝ ոչ միայն յուղղափառաց, այլ և յարիանոսաց. որք հնարէին պատճառաբելով յինքեանս ձգել զայրն այ. բայց իբրև տեսին՝ թէ նա ընդդադոյն ջատագովէ զնիկիական հա-

ւատս

ւաւոս և զհամագոյակից անուն, ե-
տուն ընկենուլ զնա յաթոռոյ, և
աքսորել 'ի հայրենիս իւր. և եդին
զեւդոքսոս ոմն յաղանդոյ իւրեանց:
Եւ յետ մահու նորա դարձուցին
ուղղափառք զմելետոս յաթոռն յայն.
բայց և յայնժամ կրեաց ոչ հայրա-
պետն ոչ սակաւ աշխատս. զի կէս
ժողովրդեանն էր զհետ պաւղինոսի՝
թէպէտև առն մի: Իսկ 'ի լինել
ժողովոյն կոստանդնուպօլսոյ առ
մեծն թէոդոսիւ, մին մելետոս էր
երևելին 'ի հարս. որ և նախ քան
զարձակիլ ժողովոյն վախճանեցաւ
'ի թագաւորականքաղաքին. և պատ-
ուեցաւ ներբողական ճառիւ 'ի նիւ-
սացւոյն յատենին հարց, որ և զինն
յոսկեբերանէ: Հ. ճառընտ: Յ. օ-
գոս. 23: Լ. ֆէպր. 12:

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ. տես Նախահարք:

ՄԵՌԿԵՏՐՈՍ կամ Մերկուրիոս էր յազ-
գէն սկիւթացւոց՝ զինուորեալ յա-
րևելեան գունդն հռովմայեցւոց առ
դեկոսիւ և վաղերիանոսիւ, բայց
քրիստոնեայ հաւատով, և ջերմ
յածպաշտուե: Իսկ եղև 'ի գնալ 'ի
պատերազմ ընդդէմ բարբարոսաց՝ ե-
րևեցաւ նմա հրեշտակ տն 'ի տես-
լեան, և տուեալ 'ի նա սուսեր մի՝

զօրացոյց անվեհեր մարտնչել. և նորա արիացեալ Տէր՝ առաւ քաջութիւն մեծ 'ի մարտին, մինչև եկն նմա 'ի թագաւորաց պատիւ զօրավարութեան: Ընդ որ նախանձեալ հեթանոս զօրականաց՝ մատնեցին զերկոսին, թէ քրիստոնեայ է Մերկուրիոս, և ըղդիս մեր դևս կոչէ. վասն այսորիկ յառեան կայսեր, և ոչ թուլացեալ 'ի հաւատոյ ողոքանօք կամ սպառնալեօք, արկան 'ի բանտ. ապա սըրկեցին զքաջ նահատակն 'ի չորս ցիցս, և սփռեալ կայծակունս 'ի ներքոյ՝ կոտորեցին սրով զմարմինն. մինչև յորդութեան արեան շիջուցանել ըղհուրն. և կիսամահ եդին զնա անդրէն 'ի բանտ. ուր ողջացոյց զնա հրեշտակն, և պահեաց յայլ ևս դժնդակ տանջանաց. յետոյ տարան զնա կապանօք 'ի կապադովկիա, և անդ հատին զգլուխն. յորմէ բուրեաց հոտ անոյշ, և մարմինն ձիւնափայլ պայծառացաւ. մինչև բազմաց հաւատալ 'ի Քս. զոր և պատուով ամփոփեցին 'ի կեսարիա. ուր և նշանք մեծամեծք եղեն: Հ. նոյ. 27: Յ.

Լ. նոյ. 25:

Մեսրոպ, որ և Մաշտոց՝ Տր հայրն մեր, և տծարբէլ րաբունապետ տանս հայոց, էր որդի Վարդանայ անուն

տծա

ածասիրի 'ի Հացեկաց տարօնոյ . եր-
բեմն նօտար սրբոյն ներսէսի մեծի ,
և ապա ատենադպիր յարքունիս՝
յաւուրցն վարազդատայ մինչև 'ի
խոսրով երկրորդ , վարժ գոլով և
'ի զինուորական մրցմունս , և սիրե-
լի յաչս ամ̃ ուագաց սքանչելի ա-
ռաքինութբ̃ իւրով . որով և առ ոտն
հարեալ զաշխարհ՝ չոգաւ 'ի մենաս-
տան մի գողթն գաւառի . և զար-
գացեալ յոյժ 'ի հոգևորս՝ ձեռնա-
դրեցաւ քահանայ . և ապա առանձ-
նացեալ յանապատ՝ բնակելով 'ի
քարանձաւս՝ ճգնէր խստամբերութբ̃ .
մինչև ունկեաց ած 'ի սիրտ նր̃ բղ-
խորհուրդ այս առնելոյ ազգին 'ի
ձեռն քարոզութե̃ բանիւ և գրով . ո-
րոյ վս̃ աշակերտեալ զոմանս՝ նոքօք
հանդերձ լուսաւորեաց զքաղաքս
տեղիս , մաքրելով 'ի մնացելոց հե-
թանոսական աղանդոց և յանկար-
գութեց՝ մեծամեծ նշանօք հանդերձ :
Իբր եկեալ առ մեծն սահակ՝ խոր-
հուրդ արար և ջանացաւ ը̃ նմա վս̃
գիւտի հայերէն գրոյ 'ի թարգմա-
նել զս̃բ գիրս . և յետ բազում քըր-
տանց և աղօթից՝ հրաշալի տեսլեամբ
ընկալաւ յա̃յ զշնորհս յօրինելոյ ըզ-
տառս մեր , ոպ̃ և զվրաց և զաղուա-
նից . և բազմացոյց աշակերտս և
դպրոցս , աջակից գոլով սբ̃յն սա-

հակայ 'ի Թարգմանութեն և յետ՝ վաստակս հոգևորս : Իսկ յետ մահուն նր̄ կալեալ վեցամեայ ժամանակաւ պաշտօն կաթողիկոսութեն՝ փոխեցաւ յաշխարհէ յամի 441 . 'ի վաղարշապատ . ուր 'ի ժամ աւանդման հոգւոյն խաչ լուսեղէն երևեցաւ 'ի վր̄ տանն . որ և մնեաց 'ի վր̄ դագաղայ մինչև 'ի տանելն և թաղել զմարմին նր̄ յամուրն ոշական 'ի վկայարան մեծ . ուր̄ յայտ է 'ի լիակատար պատմութե նր̄՝ ըստ գրելոյ ձեռամբն աշակերտաց նորին, կորեանն և խորենացւոյն : Հ . ջէփր . 19 . և սեպ . 17 :

Մետրոփանոս կամ Մետրոփանէս հայրապետ՝ էր 'ի Թագաւորական զարմէ՝ եպս̄ բիւզանդիոյ առ մեծն կոստանդիանոսիւ . յորոյ 'ի շինելն զայն քաղաք, և 'ի կոչել նոր հռոմ, իբր առաջին պատրիարգ նր̄ գտաւ նա ինքն մետրոփանոս՝ հայր կարգացեալ ինքնակալին, այր ս̄ր՝ և հովիւ առաքինի . որ և 'ի ժմկի ժողովոյն նիկիոյ ծերացեալ գոլով՝ առաքեաց փոխ իւր զաղէքսանդրոս զաւագերէց իւր և զփոխանորդ աթոռոյն . և ապա հարք ժողովոյն եկեալ 'ի նորաշէն քաղաք կոստանդիանոսի՝ մինչև յողջոյն մետրոփանոսի, և մեծարեցին զնա իբրև այր ա̄յ .

տա-

տալով նմ՟ աւետիս վ՟ն հաստատութե՟ ուղղափառ հաւատոյ 'ի Նիկիա. և ն՟ր գոհացեալ զն՟յ՝ օրհնեաց զնոսա թագաւորական հանդերձ. և աղաչ_ մամբն ն՟յ յանձն արար դնել զկնի իւր պատրիարգ զաղեքսանդրոս, գուշակելով՝ թէ և ն՟ր յաջորդ լի_ նելոց է պօղոս դպիրն իւր. և տ_ ուեալ ողջոյն հրաժարական եպ՟սաց և կայսերն՝ աւանդեաց զոգին 'ի ձեռս ն՟յ յամի իւր 326. և թաղե_ ցաւ փառօք: Հ. Յ. Լ. յունիս. 4:
Իսկ երանելին Աղեքսանդրոս յաջոր_ դեալ յաթոռ Մետրոփանոսի պատ_ րիարգական պատուով՝ եղև հովի՟ քաջ և առաքինի, բազում ջանս և վաստակս ցուցեալ 'ի ցրումն աղան_ դոյն արիոսի. մինչև աղօթիւք ն՟ր և սրբ՟յն յակոբայ մծբնացւոյ սատակե_ ցաւ արիոս 'ի գարշելին. և ինքն աղեքսանդրոս լցեալ զաւուրս իւր սրբութ՟բ՝ փոխեցաւ առ ա՟ծ յամի 336, կամ 339: Լ. օգոս. 28:

Մինաս Եգիպտացի՝ (զոր տօնեմք ը՟ մելիտոսի և ընդ մելեայ) էր զօրա_ կան քաջ և առաքինի 'ի կայսերա_ կան գնդի առ մաքսիմիանոսի՟ 'ի կուտիա, ո՟ր քէօթահեայ փոխադաց_ ւոց. և ոչ ժուժեալ տեսանել զմո_ լորութի՟ հեթանոսաց՝ եթող զզօրա_

կանութն , և երթեալ 'ի լեառն՝ հան_
դարտեաց մեծաւ ճգնութբ . ուր և
բորբոքեալ սիրոյն.քի՝ էջ անդրէն
'ի.քաղաքն յայտնել զհաւատս իւր .
և մատուցեալ առ դատաւորն առա_
ջի բազմաց՝ խոստովան եղև զքրիս_
տոնէութին . վս որոյ գան հարին զնա
անխնայ , և զկողսն այրեցին , և խոր_
գով շփեցին . և սփռեալ տատասկ
երկաթի կամ խեցի՝ քարշեցին 'ի վր
զվկայն . և ապա հատեալ զգլուխ
նորա՝ այրեցին զմարմինն հրով . իսկ
հաւատացեալքն առին զնշխարս նր .
և արար ած բազում սքանչելիս յա_
նուն սրբյն մինասայ : Հ . նոյ . 10 :

Ց . Լ . նոյ . 11 :

Մինաս վկյն՝ (ընկեր երմոգինեայ)
աթենացի կարծեցեալ , ժամանա_
կակից էր նախընթացին , այր երևե_
լի 'ի դրան մաքսիմիանոսի , իմաս_
տուն և ճարտասան , և քրիստոնեայ
'ի ծածուկ . զոր առաքեաց կայսրն
յաղեքսանդրիա եգիպտացւոց՝ առ_
նել խաղաղութի 'ի մէջ իշխանաց քա_
ղաքին . և նա յետ վճարելոյ զիրսն
ըն իւրովին զգօնութե՝ զտեղի կալա
անդ իբրև զտարի մի , և յայտնի ա_
րար զքրիստոնէութի իւր գործովք
բարեպաշտութե , բաշխելով ողոր_
մութի աղքատաց , և զունարթացու_

ցա_

ցանելով զհաւատացեալս․ և առե՟
յի՟ր զշնորհս բժշկութե՟' աղօթիւք
փարատէր զա՟մ ախտս ։

Յայնժամ առաքեաց կայսրն 'ի վ՟ր
ն՟ր զուսումնակից նորին զպատրոնա–
կան եպարքոսն Երմոգինէս աթենա–
ցի․ և ն՟ր կոչեալ յատեան զմինաս,
և յաղթահարեալ յա՟ծուսոյց բա–
նից ն՟ր, ետ հատանել զլեզուն, և
բրել զաչս ն՟ր․ և կտրե՟ զներբանս
ոտից' եարկ 'ի բանտ․ և 'ի բժշկել
ն՟ր 'ի հրեշտակէն' հաւատաց երմո–
գինէս 'ի տ՟ր, և խոստովան եղև զք՟ս
ա՟ծ հրապարակաւ ։ Յայնժամ ս՟ր՟ն
մինաս յղեաց զնօտար իւր Եւգրաֆոս
(որ և գրի' Գրաֆոս), և կոչե՟ զքա–
հանայս և զերիցունս' ետ մկրտել
զերմոգինէս․ զոր և յետ աւուրց ե–
պիսկոպոս ձեռնադրեաց պատրի–
արգն աղեքսանդրու աղեքսանդրոս․
և յայնմ հետէ համարձակ շրջէր եր–
մոգինէս ե՟պս, և քարոզէր զբանն
ա՟յ ։ Զայն լուեալ մաքսիմիանոսի'
եկն զօրօք յաղեքսանդրիա․ և կա–
լեալ զերմոգինէս ը՟ մինասաւ և եւ–
գրափոսի, դատեաց անձամբ․ և
ինքնին ոխգաւ խոցեաց զորովայն
երմոգինեայ․ և ետ հատանել ըղ–
ձեռս և զոտս նորա, և ընկենուլ 'ի
գետ․ և զմինաս ետ կախել 'ի բան–
տի' կապեալ վէմ զոտիցն․ այլ տ՟ր

 պա–

պահեաց զերկոսեանն կենդանիս և ողջանդամ: Եւ 'ի մնալ կայսերն 'ի խստասրտութե՛ 'իւրում՝ յանդիմանեաց զնա քաջն եւգրափոս · վա՛ որոյ եհար զնա Թադէոսրն սրով իւրով, և սպան · և հրաման ետ զգլխատել զմինաս և զերմոգինէս, և ընկենուլ զմարմինս նց 'ի ծով · որք խնամօքն այ հասին 'ի բիւզանդիոն, և ամփոփեցան 'ի մետրոփանոսէ հայրապետէ: Եւ արար մծ բժշկ սքանչելիս յաղէքսանդրիա և 'ի բիւզանդիոն յանուն սբյն մինասայ և ընկերաց նր · մինչ զի միօրինակ նշանագործ գտանէին երկոքին վկայքն մինայս անուն: Հ · Յ · Լ · դէկ · 10 ·

Մինասն եւս սքանչելագործ՝ էր 'ի սուկիայ քաղաքէ կրետէ կղզւոյն յաւուրս դեկոսի կայսեր, բարեպաշտ ծնողաց զաւակ · սա 'ի սկզբան մտեալ 'ի կարգ աշխարհի՝ յամ վաստակոց իւրոց առնէր առատապէս ողորմութի · և 'ի գալ դողոց յանդս նր՝ պատժեցան 'ի նմանէ, այլ նա ելից զձեռս նց, և արձակեաց · և այր բազմացոյց զարմտիս նր · և ետ նմա շնորհս, զի ձեռն դնելով բժշկէր զամ ցաւս, և զոր ինչ օրհնէր՝ պտղաբեր լինէր: Այս ձեռնադրեալ քահանայ՝ զօրացոյց զքա-

զուամ

զումն 'ի նահատակութի · և ինքն ևս տենչայր մարտիրոսութե · այլ 'ի մեռանիլ դեկոսի և վաղերիանոսի՝ դադարեաց հալածումն · և միւսոն ընտրեցաւ եպս · և հովուէր զհօտ իւր ամայնի վարդապետութ՝ հանդերձ մեծամեծ նշանօք և արուեստիւք : Եւ թէպէտ 'ի մարտիրոսութե զըրկեցաւ, այլ անխափան կատարեր զյիշատակս սրբց վկայից, և ստէպ ընթեռնոյր զնահատակութիս նց · և զնոյն առնել պատուիրեաց ուխտի իւրում, զի անխափան կատարել զյիշատակ իւրաքանչիւր սրբց · զի ամ սրբք սակս յաւուր տօնի իւրեանց առաւել համարձակութի ունին բարեխօսել առ ած վն տօնողաց իւրեանց · և այսպէս զհարիւրամեանիւք վախճանեցաւ 'ի տր, սակլով ցաշակերտսն · ահա և ես գտամ զկնի մարտիրոսացն սրբց անտոնինոսի և լաւրենտիոսի : Հ · օգոս · 9, կամ 10 :

Յ · Լ · օգոս · 8 :

Միքայէլ · տես Հրեշտակք :

Միքիա · տես Երկոտասան մարգարէք :

Մուշկինոս կամ Մուշկիոս քահանայ՝ էր երեց առաք. եկեղեցւոյն ամփիպոլեայ :

ղեայ , ծննդեամբ 'ի բիւզանդիոյ՝ որդի եւփրատու և եւստաթիայ ծագելոց 'ի հռովմայ . և 'ի հալածման դիոկղետիանոսի համարձակ քարոզէր զքս̄ , և ոչ տայր թոյլ հաւատացելոց երթալ 'ի հանդէս հեթանոսական զոհից . վս̄յ կալեալ զնա լաւոդիկոս բդեշխն , և յետ քերանաց էարկ 'ի հուր . ուր երևեցան երեք հրեշտակք , և սաղմոսէին ընդ սր̄յն : Ապա եղեւ անկեալ 'ի բոցոյն՝ մատնեցաւ 'ի ձեռս մաքսիմոսի դատաւորի . որ ետ կապել զնա յանիւ , և հոլովել է̄ զաւ 'ի վայր . այլ հրեշտակ տն̄ արձակեաց զնա , նոյնժմ̄ պահեաց և 'ի բերանոյ գազանաց . և յաղաղակել ամբոխին՝ աղաւ թողուլ զծառայն տն̄ , առաքեցաւ կապանօք 'ի հերակլիա առ այլ դատաւոր , և անտի 'ի բիւզանդիա . ուր և գլխատեցաւ իսկ , և թաղեցաւ 'ի քրիստոնէից և յեպ̄սաց . և ապա շինեաց կոստանդիանոս եկեղեցի յանուն սր̄յն : Հ . մայ . 12 : Յ . մայ . 11 : Լ . մայ . 13 :

Մովսէս մարգարէ . տես Նախահայրք :

Մովսէս քերթող , կամ քերթողահայր , այն է խորենացին՝ ձեռասուն աշակերտ և աշխարհական սրբոյն մեսրոպայ ,

էր

էր 'ի խորնի աւանէ տարօնոյ, փայլեալ 'ի մէջ աշակերտակցաց իւրոց կատարեալ իմաստութբ և հոգևոր հանճարով, և հրեշտակային վարուք օրինակ բարի տուեալ աշխարհիս հայոց՝ իբրև երկրորդ սահակ և մեսրոպ զկնի գնալոյ նց առ ած. որ և ընտրեցաւ եպս բագրևանդայ և արշարունեաց՝ զկնի եղիշեայ կողբացւոյ. և հովուեաց զհօտ իւր ամ արժանութբ մինչև 'ի խոր ծերութն, անդադար աշխատասիրելով միանգամայն 'ի գրաւոր վաստակս և 'ի թարգմանութիս 'ի պայծառուն ալգիս, յօրինեալ զբազում գիրս և ճառս և ներբողեանս և շարականս ընտիրս: Եւ մարգարէական ոգւով գրեաց առ սահակ արծրունի՝ զոր ինչ հանդերձեալ էր ած առնել Ը զարմ նր և Ը բագրատունիս, յարուցանելով թագաւորս յերկոցունց նախարարութեց անտի. որք և եղեն իսկ 'ի յետագայ դարս. Նոյնպէս գուշակեաց 'ի մասնաւորի և զնշնակութն երկուց եղբարց փառաւոր իշխանացն արծրունեաց, խմն սահակայ և համազասպայ: Եւ ինքն այրն այս խորենացին կատարեաց զբազմամրդիւն կեանս իւր իբր 'ի Ճն ամաց հասակի: Հ. ռէպ. 17:

Յա

# Յ

Յակոբ Նահապետ ։ տե՛ս Նախահայրք ։

Յակոբ Մծբնայ հայրապետ սքանչելա-
գործ՝ մականուամբ Ղզօն, էր որդի
խոսրովդուհեայ հօրաքեռ լուսաւոր-
չին մերոյ․ և 'ի մանկութե սնեալ ը̄
նմա 'ի կեսարիա յուսումն ճգնապաշ-
տութե՝ եղև միայնակեաց յանա-
պատի խստակրօն վարուք․ մինչև
արժանի լինել տեսոյն Քրի, որ դիւ-
րուին արար նմա յանտանելի ճգնու-
թիւն․ և ետ շնորհս նշանագործու-
թե՝ ձգել զինքն յանձնապաշտութի ։
Սյա ազդեցութ̄ թ̄ն եկն յակոբ 'ի
միջագետս 'ի վանս սրբյն Մարուգէի
ճգնաւորի մօտ 'ի Մծբին․ և էր
մարուգէ այր ընտրեալ, և ունէր
շնորհս մարգարէութե․ որ գուշա-
կեաց յակոբայ զեպ̄սութն Մծբնայ․
որ և եղև իսկ․ զի 'ի գալ սրբյն Մե-
լիտոսի Անտիոքայ հյրպտին յամիդ՝
ձեռնադրեաց զերանելին յակոբ հո-
վիւ Մծբնացւոց․ որ և առաքելա-
շնորհ վ̄պութե արածէր զհօտ իւր ։
Իսկ 'ի գալ սրբյն մարուգէի յոդ̄ոյն
սրբյն յակոբայ՝ 'ի գաւթի եկեղեց-
ւոյն յարուցին զանդամալոյծ մի,

ձեռն

ձեռնտուեալ յայնմ և յաշխէ . և ՚ի գնալ երբեմն յակոբայ ՚ի վանս մարուգէի՝ յարոյց անդ զմեռեալ զոմն պատանի . որար և զայլ բժշ նշանս , և գործս մեծամեծս . ով յայտ է յմարձանի պատմուէն : Մի էր սա և ՚ի գլխաւոր հայրցն նիկիոյ , ծանու‐ ցեալ յաւէտն երբե այր ով . մինչև ան‐ սանել և կայսերն կոստանդիանոսի՝ զի հրեշտակք սպասաւորէին նմա . ով և նա ցուցեալ էր արքային բղ‐ հրեշտակն կարգեալ ՚ի սպաս նր : Գրեաց սբն յակոբ և ճառս հոգե‐ շահս . և լի արդեամբք և աւուրբք փոխեցաւ առ որ . և արար նու‐ յեա մահոճանն հրաշս երևելիս : Այնպէս և երանելին մարուգէ զկնի կատարեալ փառուց Աղնունե՝ կատարեցաւ ՚ի հաճոյս այ : Հ . դեկ . 15 : Լ . յուլ 15 .

Յակոբոս առաքեալ մեծն՝ եղբայր յով‐ հաննու , որդի զեբեդեայ և սաղո‐ մեայ յաղգականութե փրկչին , էր մի ՚ի գլխաւորաց ՚ի մէջ երկոտա‐ սանից . որ յետ համբարձման տն սա շրջեալ առ հրէայս ցրուեալս մինչև ՚ի սպանիա ՚ի քարոզել զա‐ ւետարանն . և դարձեալ անդրէն ՚ի պաղեստին՝ ամ համբարձութե քարոզէր զեկեալ փրկիչն իէլի , և

ըմբէ‐

ըմբերանէր զանհաւան ազգն հրէից·
յորոց 'ի սադրելոյ եւս ունիլ զնա
ագրիպպաս հերովդէս չորրորդա-
պետ , և սպան սրով 'ի կեսարիա
յամի տն իբր 42 . և եղև ս͞րն յա-
կոբ առաջինն յըմպել զբաժակ մար-
տիրոսութե 'ի մէջ երկոտասանից ·
իսկ մարմին ն͞ր սքանչելի օրինակա-
ւ եհաս 'ի գաղիկիա սպանիոյ · ուր է
մինչև ցարդ ուխտատեղի երևելի
'ի կոմպոստելա · այլ գլուխ ս͞բյն
սոյն պահեալ յերուսաղէմ 'ի տե-
ղին , ուր է այժմ հոյակապ վանք
ս͞բյն յակոբայ 'ի ձեռս հայոց :
Հ · ֆէպր · 21 · Ն մայ · 8 · Ն դեկ ·
28 : Յ · նոյ · 25 : Լ · յուլ · 25 :

Յակոբոս առաքեալ , յակոբ ալփէան կո-
չեցեալ , ո͞ր որդի ալփեայ , և եղբայր
մատթէոսի , էր մի յերկոտասանից·
որ յետ քարոզելոյ հրէից և հեթա-
նոսաց զաւետարանն ք͞նի նշանօք և
արուեստիւք՝ սաստիկ գանիւ սպա-
նաւ 'ի հրէից , կամ փայտիւ հա-
րեալ կատարեցաւ 'ի սրաճ քաղա-
քի երկրին սարուց : Հ · յնկ · 23 :
կամ 10 : Յ · հոկ · 9 :

Յակոբոս առաքեալ , մականունն ար-
դար , որ և յակոբ փոքր կոչի , և պան-
ծալի անուամբ՝ եղբայր տն , էր 'ի
սա-

տանէ Դաւթի՝ որդի Կղէովպայ եղ-
բօրն Յովսեփայ ա՟ծծահօր , և Մարիա-
մայ կոչեցելոյ քոյր մօր տ՟ն : Սա ը՟
ստոյգ տեսութ՟ե զանազանեալ է 'ի
Նախընթացէն ( Թէպէտև ոմանք
նոյն համարեցան ), և ոչ է մինյեր-
կոտասանից , այլ՝ գլուխ էր եօթա-
նասնից . և մեծարու յոյժ յաչս տ՟մ
առաքելոց՝ իբրև ազգական փրկչին,
և այր արդար և անարատ՝ վկայե՟լ
յա՟մ հրէից , և գովութ՟ յիշատակե՟լ
'ի Յովսեպոսէ՝ անուանմբս եղբայր
յ՟ի ք՟ի կոչեցելոյ : Զոր և ձեռնա-
դրեաց վէմն հաւատոյ Պետրոս հա-
ւանութ՟բ տ՟մ առաքելոց՝ առաջին
եպ՟ս ա՟ծակոխ քաղաքին եղ՟մայ . և
սա մատոյց զառաջին պատարագն
զկնի ք՟ի 'ի վերնատանն Սիոնի . և
'ի ժողովն առաքելոց եղև յառաջա-
ցուցիչ առաջարկեալ իրաց և բա-
նից Պետրոսի . և սմա եւս առան-
ձինն երևեցաւ տ՟րն յարուցեալ՝ ո՟պ
Կեփայի . և Պօղոս եկանէր յերու-
սաղէմ տեսանել զՅակոբոս և զԿե-
փաս . սա գրեաց և զկաթուղիկէ թուղթն.
և էր կեանք ն՟ր ամբիծ և ճգնաւոր
յոյժ . որ և 'ի վախճանի կատարե-
ցաւ յերուսաղէմ՝ 'ի վայր արկեալ
յաշտարակէ տաճարին , և ապա
հարեալ թափչաւ ը՟ գլուխն : Հ .
հոկ . 23 . և դեկ . 25 : Յ . հոկ . 23 .

և

Յակովբ բազմահատ վկայն՝ էր ազգաւ պարսիկ 'ի Բիդլապատ քաղաքէ, և հաւատով քրիստոնեայ, յաւուրս Թէոդոսի կայսեր փոքու, և Վռամայ կամ յազկերտին պարսից արքային, այր երևելի և սիրեցեալ յաչս Թագաւորին. որ և սխալեաց զնա, և դարձոյց 'ի հրապաշտութի. զոր լուեալ ընտանեաց նր՝ գրեցին առ նա բանս արտամանկանս՝ ողբաձայնով զնա վն ուրանալոյն զՔս. զի դու թողեր ասեն զԱծ, և մեք թողցուք զքեզ 'ի բաց: Յայնժամ 'ի զեղջ եկեալ յականջս՝ դարձաւ բարոյով սրտիւ առ Տր, և լայր դառնապէս. մինչև եհաս բանն առ Թագաւորն. որոյ առաջի խոստովան եղև յանդիմանելի քաջութբ զՔս Ած, և մերժեաց զմոլորութն կրակապաշտից: Եւ Թագաւորն զսէրն յատելութի փոխարկեալ՝ ետ կապել զերանելին յորայս, և կարատել զնմ յօդուածս անդամոց նր մի առ մի. այլ նա առ խրախճանելութն օրհնէր զԱծ և սաղմոսէր. մինչև մնալ մարմնոյ նր իբրև կոճղ ոստաքանց հանդերձ գլխովն. ապա հատին և զգլուխն. և էջ լոյս հրափայլ յերկնից 'ի տեղի հեղման արեան փշուր վկային.

Իսկ

իսկ հաւատացելաքն տուեալ կա-
շառս դահճաց, և ժողովեալ զնմ
հատեալ անդամս նր՝ մասունս Է.
եդին 'ի Թաքստի. իսկ յետ ժամա-
նակաց բերեալ յարևմուտս՝ եդաւ
'ի վենետիկ, ուր ցարդ ևս կայ:
Հ. ԴԵԿ. 3: Յ. Լ. ՆՈՅ. 27: ԱՇԽԱՐ-
ՏԱ ԵՒՍՏԻԿՈՍ:

ՅԵՍՈՒ. տես 'Նախահայրք:

ՅԵՂՊԻԴԻՓՈՐՈՍ (որ և գրի ՅԵՂՊԻԴԵՓՈՐՈՍ. կամ ԵՂՊԻԴԻՓՈՐՈՍ. այն է ԵԼՊԻՍՓՈՐՈՍ, յս բերող,) էր ազգաւ պարսիկ 'ի քուրատանէ բեշապհոյ, որդի մոգպետի, բնակեալ 'ի դուռն քաղաք հայոց ը դենշապհոյ պարսից մարզպանին. և առաջին անուն նր մախոժ: Սա 'ի տեսանել զնահատակումն գրիգորիսի ռաժկի՝ արդէն երկմտեալ էր 'ի մոգութէ, և խղճելով կայր ը խորհս. և եղև՝ զի ել հուր 'ի կրակարանէ պարսից, և սկսաւ այրել զպաշտարանս. իսկ 'ի դաքնյից փախչէ և աներևութանայ. 'ի տեղին, չկարաց առ ժամայն. զայն տեսեալ մախոժայ՝ գնաց զհետ քահանայից, կամելով քրիստոնեայ լինել: Զոր իմացեալ պարսից՝ դահարին զնա, և արկին 'ի բանտ. ուր մկրտեցաւ 'ի ներսիսէ աբեղայէ,

և

և ընկալաւ զկարգ կրօնաւորութ՟ եւ զկնի չորից ամսոց ածեալ յառեան նորոյ մարզպանի վշնաս վարամայ՝ երբև հաստատուն գտաւ 'ի քս՟, պատառեցին 'ի նմանէ ըզկրօնաւորական զգեստն, և կախեցին և տապալեցին և թքին 'ի նա. ապա տարեալ բևեռեցին 'ի խաչ. և նետահար արարին. զորոյ զպատուական մարմինն բարձեալ տեառն մովսէսի կթղկսի՝ եդ պատուով յաւագ եկեղեցւոջ, 'ի սկզբան թուականութես հայոց: Հ. ճժը. 25:

Յովսէփ և Ղևոնդ՝ բարերջանիկ ծնօղք ամենօրհնեալ սբ՟ ածածնին՝ պանծալի զաւակաւ իւրեանց հանդիսացեալ ճանաչին, զոր 'ի ծերութե՟ և յամլութե՟ ընկալան սքանչելեօք՝ 'ի ձեռն աւետեաց հրեշտակի. և արժանացան նախածնօղ լինել բանին այ՟. և ը՟ նմին անհամեմատ սրբութ՟ 'ի վեր քան զօրէնսն առաքինացան զամ՟ ժամանակս կենաց իւրեանց. և ցանկալի մահուամբ փոխեալ յաստեացս՝ թաղեցան 'ի շիրմի իւրեանց 'ի ձորն գեթսեմանի: Սբն յովակիմ փոքր մի յառաջ համարի վախճանեալ, իսկ սրբուհին աննա զկնի. ոչ թէ տեսանել նմա և զթոռն իւր զփրկիչն աշխարհի

հի ծնեալ ՚ի Ամարխամայ կուսէ, և նուէր անձամբ խնդութբ: Աւաղ որ ինչ մանաւանդ բանք իւրն ՚ի զանազան աւանդեց մ͞ր յոխակկինայ և անձայնի և ազգաբանութե ն͞ց և նշխարաց նո-ցին, յ͞բարձակն գործոյս ծանուս-ցուք: Հ. յուլ. 25: Յ. ոկտ. 9. և յուլ. 25: Լ. մարտ. 20. և յուլ. 26:

Յովէլ արդարն, կամ յոբ երանելին՝ էր յաբրահամեան ազգէ ՚ի տանէ եսաւայ, ո͞ր որդի զարեհի՝ որդւոյ ռագուէլի՝ որդւոյ եսաւայ, ժամա-նակակից աբրահամու և մովսէսի, իշխան և Թագաւոր յերկրին եդոմայ, ը͞ն ամաց և քահանայ՝ իբրու ը͞ն նմա-նութեան մելքիսեդեկի, և մարգա-րէական հոգւով լցեալ. որ և եկաց ամս հ͞ը նախ քան զհարուածս, և զկնի ամս ձ͞կ. ը͞ն ամ՝ մ͞ճը. իսկ զհամբերութեան առաքինութի ն͞ր և զպա-յծառ զգօնութիւն յայտնաբարբառ քա-րոզէն այժմ գիրք ն͞ր: Հ. Յ. մայ. 6: Լ. մայ. 10:

Յովէլ. տես Երկոտասան մարգա-րէք:

Յովհաննէս հայրապետ և Յովէլ որդ-ւոյն ն͞ց, որ և առաքեալ և մարգարէ և մարտիրոսն՝ մեծն ՚ի ծննդս կա-նանց,

նանց. էր որդի զաքարիայ քհնյին և ամուլն եղիսաբեթի՝ յազգէ ահարոնի, աւետեօք և սքանչելեօք ծնեալ և յանապատի սնեալ հրեշտակական վարուք: Սա սրբեալ յոր̃ 'ի քարոզել զմկրտութիւն ապաշխարութեան 'ի յորդանան՝ աւետարանէր աշխարհի զեկեալն փրկիչն. զոր և մկրտեաց՝ յայտնեալ հնազանդութ̃ 'ի խոնարհութե̃ անմեղ գառինն այ̃. և ապա բանտարկեալ յանթիպաս հերովդէ՝ գլխատեցաւ վն̃ ճշմարտութե̃. զոր գովութ̃ յիշատակէ և յովսեպոս եբրայեցի: Յետ ժամանակաց յայտնեցան նշխարք նր̃, և սփռեցան 'ի բազում տեղիս. ոմն̃ և 'ի հայս ձեռամբ լուսաւորչին. իսկ գլուխն յետ կրկին գիւտի տարեալ եղև 'ի հռովմ. այլ զայսցանէ ճոխագոյն յըն̃արձակ վարս ըն̃ցի բան: Հ. յնվ. 14. և 7: փետր. 24: յուլ. 11, կամ 5. և օգոս. 29: Յ. յնվ. 7. փետր. 24. յունիս. 24. և օգոս. 29: Լ. յունիս. 24. փետր. 24. և օգոս. 29:

Յովհաննէս աստուածաբան աւետարանիչն՝ որդին որոտման, էր մի յերկոտասան առաքելոց՝ սիրելի յի̃ առանձնակի. մինչև յորդիութի̃ մօրն յի̃ վերադրիլ 'ի ժամ խաչին, և առնուլ զաստուածամայրն 'ի տուն իւր, և պաշ-

ռել նմ սրբուհի զմիշտ կոյսն՝ կու-
սակրօն գօտով և ինքն. և յերկա-
րեալ 'ի կեանս զկնի. փոխման տե-
րամօր՝ և կատարման նմ՝ առաքե-
լոց, եհաս 'ի խոր ծերութի, ծաղա-
ղելով զբանն կենաց յամ եկեղեցիս
աշխարհաց՝ եղեւ զանթառ խոր յեփե-
սոս. ուստի կոչնօք անձէ 'ի հանգիստ.
յետ բազում հանդիսից նշանակութ՝
և առաքելոյ 'ի կատարեալ եռացեալ
ձիթոյ, ազատեցաւ 'ի սպառման
կիզի հրամանաւ դոմետիանոսի.
անդ ետես զտեսիլն, և գրեաց. և
դարձաւ անդրէն հրամանաւ ներ-
ուայ յեփեսոս, ուր գրեաց զաւե-
տարանն. և այսպ առ տրայիանոսիւ
'ի հասակի իննսուն ամաց (ըստ այլոց՝
ղը, կամ ղթ) յամի տն իբր 100,
յաւուր կիրակէի նշջեաց 'ի գե-
րեզմանի, զոր ինքն ետ փորել. և
ոչ գտաւ յետոյ մարմին նր. մինչև
կարծել աշակերտացն՝ եթէ յարու-
ցեալ իսկ է 'ի մեռելոց ըստ նմանու-
թե տն իւրոյ և տիրամօր: Հ. դէկ.
28. և սէպ. 26. և մայ. 8: Յ. սէպ.
26. և մայ. 8: Լ. դէկ. 27. և
մայ. 6:

Յովհաննէս՝ կոչեցեալն Մարկոս՝ եղբօր-
որդի Բառնաբայ, էր աշակերտ ա-
ռաքելոց՝ կմ՝ մի յեօթանասնից, գոր-

ծակից պօղոսի և բառնաբայ 'ի քա-
րոզուե̄ աւետարանին, այլ 'ի պատ-
ճառս դառնալոյ նր̄ 'ի պերգեայ յե-
րուսաղէմ, յորժամ չէառ յանձն պօ-
ղոս տանել զնա միւսանգամ ը̄ իւ-
րեանս, բառնաբայ առե̄լ զնա տա-
րաւ ընդ իւր 'ի կիպրոս. և յետոյ
մինչ 'ի կապանս էր պօղոս 'ի հռովմ,
դարձե̄լ սպաս կալաւ նմա յովհան-
նէս մարկոս ը̄ հրաւիրման նորա.
առաջինկայ գտաւ և նահատակուե̄
բառնաբայ 'ի կիպրոս. և 'ի վախճա-
նի ինքն ևս սա նահատակեցաւ 'ի
բիբլի փիւնիկեցւոց (եղեւալ թէ
չիցէ նոյն ը̄ մարկոսի աւետարանչի):

Հ. ապր. 9: Լ. սեպ. 27:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԲՆՉՅԻ՝ էր 'ի ժմկս հիւ-
պատոսուե̄ փիլիպպոսի հօրն եւգի-
նեայ կուսի, 'ի կեսարիոյ փիւնի-
կեցւոց ազգաւ ասորի, որդի յու-
լիայ կմ̄ յոհինոյ այրի կնոջ բարե-
պաշտի. (այլ ոմանք յաշխարհէն հա-
յոց ասեն լինել.) և յաւուրս հա-
լածանաց կայր հանդերձ մարբն և
քերբն 'ի Թաքստի: Իսկ 'ի գնալ եր-
բեմն մն̄ աղօթից 'ի տեղի հեռաւոր՝
առե̄լ խրատ յումեմնէ ծառայէ ա̄յ.
և հրաման 'ի մօրէն, մեկնեցաւ յա-
նապատ 'ի սիս պատանեկուե̄. և
հանդիպեալ բարմութէոսի ծերոյ՝

րն-

ընթացաւ յեւս խորագոյն վայրս. ուր գտեալ ցամաք ջրհոր մի կամ գուբ, կնքեաց զանձն նշանաւ խաչի, և պահպանութ՟բ հրեշտակի էջ անվնաս 'ի վայր, ուխտ եդեալ անձին չելանել անտի մինչև 'ի մահ. և էր յայնժամ ժէ՟ ամաց: Եւ 'ի կալ նր՟ անսուաղ աւուրս խ՟, և 'ի բերել բարմութեկոսի առ նա կերակուր ազդմամբ հրեշտակի, աղաչեաց յովհաննէս զծերն՝ չբերել միւսանգամ. զի թէ հաճոյ իցէ ասէ ա՟ն կալս իմ աստ, նա ինքն տայ ինձ կերակուր: Եւ յետ մնալոյ նր՟ անդ ամ մի խնամօք ա՟ն, յարոյց դեւն փորձանս 'ի վր՟ նր՝ գալով է՟ բարմութէի 'ի կերպարանս ծառայի, և առա 'ի կերպարանս ընտանեաց նր՟. և իբրև ոչ կարաց յաղթել սր՟ն, եղև վիշապ, և անկաւ 'ի գուբն. բայց և ոչ այնպէս կարաց խափանել զնա յաղօթից, մինչև հալածական եղև յանդունդս: Իսկ յովհաննէս յետ կալոյ 'ի գբին ամս ծ՝ կոչեցաւ առ ա՟ծ. առ որ եկեալ և կիրակոսի ուրումն Ճգնաւորի՝ առաքինւոյ եղև փոխման նր՟, և ամփոփեաց զմարմին նր՟ 'ի գբի անդ: Հ. մայ. 23: Յ. ծամագր. և Բոլլանդ. մարտ. 30:

Յովհաննէս կամաւոր աղքատն՝ (որ 'ի

յունաց կոչի Գալուբիտէս», իբր խղճա-
կեաց) էր փոքր մի յետոյ քան զա-
ւուրս սրբոյն աղեքսիանոսի, որդի եւ-
տրոպիոսի իշխանի և Թէոդորայ՝ 'ի
կոստանդնուպօլսոյ նոր հռոմ կո-
չեցելոյ (ուստի և ոմանք հռովմայ-
եցի ասացին լինել), սնեալ 'ի բա-
րի վարս և յուսմունս. որում և ա-
րարին ծնօղքն աւետարան մի փոք-
րիկ ոսկետուփ: Սա հանդիպեալ
աբեղայի միում յակումիտաց, իբ
յանհանգստից վանաց, տեղեկացաւ
զկարգ միանձանց. և բան եդեալ
ընդ նմա, 'ի դարձի նր յեղմէ՝ գնաց
'ի վանս նր, որ ոչ կարի հեռի էր
'ի բիւզանդիոյ. ուր զգեցեալ զս-
քեմն 'ի հասակի ժբ կամ ժե ամաց՝
եդ զանձն 'ի խիստ ճգնութիւնս և 'ի
տքնութիւնս. և փայլէր իբրև զանմար-
մին 'ի մարմնի: Այլ յետ կալոյ
անդ ամս վեց՝ սկսաւ մաշիլ 'ի կա-
րօտոյ ծնողացն. և առեալ օրհնութի
'ի հօրէ վանացն՝ դարձաւ 'ի զգեստ
աղքատի անյայտ երեւօք 'ի տուն
ծնողաց իւրոց, և եկաց հանդէպ
դրանն յանկիւն մի փողոցի 'ի պրտ-
ուճեայ խղի այլ եւս ամս վեց, ճնշե-
լով զանձն իւր մահուչափ 'ի տես
ծնողաց և ընտանեաց յանծանօթս,
և կրելով պէսպէս ցաւս և վիշտս.
իսկ զկերակուրն՝ զոր տային նմ 'ի
տա-

տանէ հօրն իբրև աղքատի, բաշխէր աղքատաց: Եւ իբրև մերձեցան աւուրք կոչման նր, կոչէր զմայր իւր՝ եցոյց նմա զաւետարանն փոքրիկ. և պատուէր տուեալ թաղել զինքն նովին աղքատին հանդերձիւք՝ աւանդեաց զոգին. և բուրեաց 'ի նմանէ հոտ անուշից. իսկ ծնօղք նր թաղեցին զնա արտասուախառն խնդութ. և շինեցին մատուռն 'ի վր՝ ծառայէին որ նշխարաց զաւակի իւրեանց. մինչև և նոքա բարի վարուք կրօնաւորեալ հանգեան 'ի տր: Հ. յնվ. 16:

Յ. Լ. յնվ. 15:

Յովհաննէս կարճահասակ՝ որ 'ի յունաց նանոս ասի, էր մին 'ի նշանաւոր հարցն սկիտացւոց՝ ըն հօգւով մյ, անդստին 'ի պատանեկութէ միայնացեալ յանապատի է աւագ երկօր իբրում, և հրեշտակակրօն վարուք քաղաքավարեալ. զորոյ զօրինակ առաքինութե և զկենսաբուղխ բանս փոքր 'ի շատէ ունիս տեսանել 'ի վարս հարանց: Հ. Յ. Լ. հոկտ. հը:

Յովհաննէս հայրապետ Երմ՝ էր անմիջական յաջորդ սրբյն կիւրղի երմայւոյ յամի իբր 389. ուստի և ձահոպակէ 'ի շաբաթումն որ զկնի տօնի կիւրղի՝ կատարի և տօն սր: Սա 'ի

կարգէ միայնակեցուն ընտրեցաւ 'ի
պատրիարգութիւն վն̄ խորոյ սրբութեան և
յորդառատ վարդապետութեան և մեծ_
անձնեայ բարուցն . և էր մտերիմ
բարեկամ յովհաննու ոսկեբերանի,
և ծանուցեալ և վկայեալ իբրև կեն_
դանի ոք մինչև յափրիկէ և յարև_
մուտս՝ 'ի քահանայապետաց հռով_
մայ, և 'ի մեծէն օգոստինոսէ . որպ̄
և 'ի թէոդորետոսէ այր սքանչելի
անուանի : Եւ թէպէտ եղև և գժ_
տութն մեծ ը̄ սա և ը̄ հերոնիմոս՝ օ_
րով և ը̄ եպիփանու, 'ի պատճառս
խնդրոց յուղերլոց 'ի ժամանակին 'ի
վր̄ որոգինի, և վն̄ ձեռնադրելոյ
եպիփանու զեղբայրն հերոնիմոսի 'ի
վիճակին յովհաննու առանց գիտու_
թեն նորա, այլ այն ամ̄ մարդկօրէն
դայթակղութիք՝ երկուստեք բան_
սարկուաց էին գործք . յորոց յա_
ռաջ եկն և կռիւ թէոփիլեանց միա_
բան կարծելոց առ երեսս ը̄ եպի_
փանու, և թշնամեաց ոսկեբերանի.
որ և 'ի վայրէ աքսորանաց 'ի կոկի_
սոնէ թղթակցէր ը̄ սիրելոյն իւ_
րոյ յովհաննու հայրապետին եէմ .
(թող զանստոյգ բանս գրեալս 'ի
վարս եպիփանու 'ի թշնամեաց սո_
րին յովհաննու, որպ̄ թէ բանիւ ե_
պիփանու կրեալ իցէ զկուրութն,
և ապա բուժեալ ը̄ մերոյ ակամն) :

Սա

Սա լինքն երանելին յովհաննէս գըլ_
տաւ առաջինկայ Թաղման եւ մեծա_
նուն սրբուհւոյն պաւղայի հռովմայ_
եցւոյ յեմ· եւ յետ բազում վաս_
տակոց եւ արդեանց վն̃ եկեղեցւոյ
ըդէմ պեղագեանց եւ այլոց հերձ_
ուածողաց ծմկին՝ հանգեաւ խաղա_
ղութբ 'ի քս̃ ։ Հ. ճարփ. 19։ Յ. ճարփ. 30։
կան եւ այլ մեծամեծ հայրապետք
տօնելիք յովհաննէս անուամբ. զո_
րոց բան լիցի յառանձին վարս սրբ̃ց
յիշատակելեաց ըն̃ յայսմաւուրաց ։

Յովհաննէս կամ Յովհան ոսկեբերան՝
տիեզերալոյս վարդապետ, էր յան_
տիոքայ ասորւոց՝ ծնեալ յամի քրի
347. եւ անէլ 'ի մէ̃ք վարս, եւ յիմաստային
եւ յարտաքին գիտութիւն՝ կայր 'ի տան
իւրեւ յանապատի՝ անդադար պարա_
պեալ աղօթից եւ ընթերցուածոց եւ
խստակրօն վարուց. ապա առանձ_
նացաւ եւ 'ի վանս ամս չորս. եւ այլ
եւս ամս երկու 'ի քարանձաւս ճգ_
նեցաւ. մինչեւ բռնադատեալ ձեռ_
նադրեցին զնա սարկաւագ եւ քահա_
նայ. որ եւ եղեւ հրաշալի քարոզ
բանին այ̃՝ առատապէս տրաէր 'ի
շրթանց իւրոց զշնորհս իմաստութե̃,
եւ բերան ոսկի անուանիւր ։ Այլա
վն̃ աշխարհալուր համբաւոյ սրբու_
թե̃ եւ իմաստութե̃՝ ընտրեցաւ պատ_

ընտրեալ կոստանդնուպօլսոյ յամի 398. և եղև հովիւ քաջ եկեղեցւոյ մեծ հանդիսիւ առաքինութեան և վարդապետութեան, կրելով հալածանս յեւդոքսիայ թագուհւոյն, և 'ի Թէոփիլեայ. և երկիցս աքսորեալ յերկրորդումն իբրև եհաս 'ի կոկիսոն հայոց, և անտի 'ի կոմանա, հիւանդացաւ և փոխեցաւ առ ած յամի 407. 'ի վկայարանի սրբոյն բասիլիսկոսի. առնելով 'ի կեանս և 'ի մահու ոչ սակաւ նշանս, և թողլով 'ի գանձ եկեղեցւոյ զծովացեալ վարդապետութիւն իւր. որ յայտ է 'ի չքնաղատառ պատմութէ նր. ուր և տեսանի փոխադրութէն նշխարաց նր փառօք 'ի կոստանդնուպօլիս: Հ. սեպտ. 13. նոյ. 13. յունվ. 27. և հոկ. 9, և 30: Յ. յունվ. 27. և նոյ. 13:

Լ. սեպ. 14. և յունվ. 27:

Յովհաննէսեանք և Սիմէոնեանք, (որք յիշին 'ի պատարագամատուցի, և զօրութք նշանակին 'ի յօնացուցի 'ի սօնի որք Ջղնաւորաց՝ ը. անուամբ և այլոց սրբց հարցն), նախ ը. դրամ յայտ առնեն զերկուս մեծանուն Ջղնաւորս՝ համանմանս և ժամանակակիցս անտոնի և կրօնիկեայ, և քընակեալս հանդերձ աշակերտօք իւրեանց 'ի լեառն հայոց՝ 'ի տեղին Ջո-

րեհանդիստ կոչեցեալ. զի մինչդեռ
կենդանի էր տէր լուսաւորիչն մեր՝
հրաւիրեցին զնա տէր ճգնաւորքս յով-
հաննէս և սիմէոն գալ 'ի տես իւ-
րեանց. և 'ի դառնալն տր̃ 'ի նցնէ՝ ա-
սէին կարօտանօք. գ՛րիգորիոս՝ իջէ՞
թէ եկեսցես այլ ևս առ մեզ. նա
ետ պատասխանի. եթէ ոգւովս ոչ
եկից, մարմինս եկեսցէ առ ձեզ:
Որ և եղև իսկ. զի 'ի տանիլն նշ-
խարաց տէր լուսաւորչին՝ յորժամ
բարձեալ տանէին զնա ջորւով, ըղ-
կայ էառ աւեն 'ի բլրակի միում, ուր
էր վանք տէր ճգնաւորացս. որք և
այրդէն փոխեալ էին սրբութ̃ե առ
տր̃: Հյ. Նոյեմբ. 18: Երկրորդ՝
նոյն անուամբք յովհաննէս և սի-
մէոն կոչէին և երկու անձինք 'ի
թուոյ եօթն խոտաճարակաց. որ̃յ և
առ իւմք նշ̃ մարթին հայիլ: Եր-
րորդ՝ զնոյն անուանս ունէին և եր-
կու երևելի և սրբակրօն անձինք
ժամանակակիցք նարեկացւոյն. յո-
րոց յովհաննէս եղև առաջին առաջ-
նորդ սանահնի վանիցն, և սիմէոն
եղև նոյնից նախկին առաջնորդ վա-
նացն հաղբատու: Թող զի յընդար-
ձակ մատեանս հարանց վարուց՝ գր-
տանեմք զանուանի ճգնաւորս յով-
հաննէս անուամբ իբր երեսուն. ոմ̃
և սիմէոն անուամբ իբր եօթն:

Յովէլ. տես Երկոտասան մարգարէք:

Յովսէփ փեսայր՝ նշանեալ խօս-նայր ամենասուրբ կուսին Մարիամու Ածածնի, էր 'ի տանէ դաւթի՝ որ-դի յակովբայ մատթանեան. որոյ անզուգական գովութիւն, և հրաշալի հանդէս առաքինութե և սրբութե ար-տափայլէ յերանական վարուց նր ը ամենօրհնեալ կուսին, և 'ի ծառայելն նմա իբրև մօր այ, և 'ի յանձանձելն զԱծորդին նր անոխակ հայրութե զամ աւուրս կենաց իւրոց. մինչև փոխե-ցաւ յանանց կեանս յառաջիկայութե փրկչին՝ աւանդելով զիւր նր ոգին 'ի ձեռս նր քաղցրութե՝ 'ի նազարէթ քաղաքի գալիլեացւոց, ուր էր տուն նր աղքատին՝ և գործարան հիւս-նութե. և ոչ երբեք՝ մինչ սքչն յովսե-փայ եղև մօտ յերեսնեք ամ հասակի փրկչին մերոյ. որ յայնմհետէ յայտ-նեաց զանձն աշխարհի քարոզութբ: Հ. տար. 6: Յ. դեկ. 25: Լ. մրտ. 19:

Յովսէփ արեմաթացի՝ էր այր նախա-րար և ականաւոր մեծութբ և առա-քինութբ 'ի մէջ հրէից, աշակերտեալ քսի նախ 'ի ծածուկ, և ապա համ-դիմացուցեալ զաշակերտութի իւր 'ի թաղել զերկնաւոր վարդապետն ըղ-

մատ

մատնեալն յանարգական մահ խաչի՝ մեծաշուք փառօք 'ի յայտնի հրամանէ պիղատոսի յանդիման ամ ժողովրդեանն. և այն 'ի նորափոր վէմի՝ զոր 'ի պէտս շիրմի պատրաստեալ էր 'ի պարտիզի անդ կալուածոց իւրոց: Իսկ յետ յարուե տն բազում երօք նպաստաւոր և գործակից լեալ աշակերտաց 'ի փառաւորութե անուանն քնի՝ ելից բարուե̃ք զաւուրս կենաց իւրոց 'ի տր: Հ. ապր. 9:
Լ. մարտ. 17:

Յուլիսի նահապետ. տօն Նախահարց:

Յուլիսի Հինայ. տօն ը̄ Սահակայ:

Յուլիսի թահանայ. տօն ը̄ Ակեփսիմ՛՛:

Յուդայ առաքեալ՝ կոչեցեալն ղէբէոս, որ անուանեցաւ թադէոս, էր մի յերկոտասանից, եղբայր յակոբայ արդարոյ՝ տն եղբօր, ոմ և անուանէ զանձն 'ի սկիզբն թղթոյ իւրոյ. ուստի կոչի նաև յուդա յակոբեան. իսկ ոմանք շփոթեն զսա ընդ թադէոսի առաքելոյն հայոց՝ միոյն յեօթանասնից և եղբօր թովմայի. վս զի ոմ նա, նոյնպէս և սա ինքն յուդա թադէոս շրջեցաւ քարոզութ 'ի միջագետս և 'ի հայս. և էանց 'ի

պարսս ըն չմուծնի նախանձայուզի . և յետ բազում վաստակոց և նշանաց եկեղ՟ անդրէն 'ի հայս՝ հանգեպեցաւ բարթուղիմեայ 'ի սահմանս աղբակայ՝ 'ի տեղին որ կոչեցաւ օթեւաց խաչ . և յետ կատարման նշ՟րինքն գնաց 'ի քաղաքն որմի , և անդ նահատակեցաւ բազում տանջանօք . կմ՟ ըն այլոց յարաստ քաղաքի 'ի խաչհանեալ՝ նետահար սպանաւ վս՟ անուանն քՎի : Հ . ծէպր . 16 : Յ . յունիս . 19 . Ն մայ . 25 : Լ . հոկ . 28 :

Յուլիանէ կոյսն էր 'ի Նիկոմիդեայ քղքէ առ մաքսիմիանոսիւ , դուստր ափրիկանոսի մեծի իշխանի 'ի հեթանոսաց ազգէ , հաւատացեալ 'ի քս՟ գաղտ 'ի հօրէն . որ և խօսեալ էր զնա 'ի կնութիւն եղեւսիոսի սենեղիտիկոսի . այլ կոյսն չկամելով լինել առն հեթանոսի՝ պատճառէր չամուսնանալ ըն եղեւսիոսի , եթէ չլինիցի եպարքոս . և իբրև էառ այրն բազում ծախուք զպատիւ եպարքոսութե 'ի թագաւորէն , յայտ արար նմա յուլիանէ , թէ չէ բաւական մարմնաւոր իշխանութ , այլ պարտ է քեզ առէ լինել քրիստոնեայ իբրև զիս : Յայնժամ բարկացեալ եպարքոսին՝ էառ հրաման 'ի հօրէ աղջկանն , և մերկացուցեալ զյուլիա-

կնանէ՝ եւս հարկանել արջառաձոյլ ջեռ մինչեւ ՚ի հեղումն արեան. եւ յետոյ կախել զՀերացն եւ խանձօղել հրով զմարմին կուսին՝ էարկ ՚ի կապանս բանտի. ուր երեւեալ նմա դիւին ՚ի կերպարանս հրեշտակի՝ խրատ տայր առ ժամն ուրանալ զՔն, եւ ապա ապաշխարել. Իսկ նր զօրացեալ իւ ՚ի վր դիւին՝ գան եհար զնա, եւ կապեաց շղթայիւք պարանոցի իւրոյ. եւ ՚ի թողուլ նր՝ անհետ եղեւ չարն։ Այս կրկին հարցեալ յատենին մն ՚ի քն հաւատոց՝ արկաւ կոյսն ՚ի բոց բորբոքեալ, եւ ՚ի կաթսայ եռացել. եւ յոչ այրել նր՝ հաւատացին բզմք. եւ գլխատեցան ճ յուլեանեայ. զորոյ զմարմինն ամփոփեաց ոմն կին բարեպաշտ. եւ յետ ժմկաց բերին ս-ամնք յարեւմուտս ՚ի կղզին կամպանիայ: Հ. դէկ. 20: Յ. դէկ. 21:

Լ. փետր. 16:

Յուղիտա կին բարեպաշտօն յաւքունի զարմէ՝ էր յիկոնիոյ լիկայոնացւոց առ դիոկղետիանոսիւ, այրի մնացեալ հանդերձ փոքրիկ երեխայիւ, որ կոչէր Կիւրակոս, եւ էր կայտառ յոյժ. եւ ՚ի գալ Դոմետիանոսի դատաւորի ՚ի լիկայոնիա՝ հալածել զքրիստոնեայս, երկուցեալ յուղեւորի ՚ի մր մանկամբն՝ եւ թող զամե-

նայն

ինչս իւր , և առեալ զմանուկն կի֊
րակոս՝ երկու նաժշտօք խոյս ետ
'ի սելևկիա իսաւրիոյ . և անտի ևս
փախեաւ յերեսաց աղեքսանդրոսի
դատաւորի 'ի տարսոն կիլիկեցւոց .
բայց յետ աւուրց եհաս անդր նա
ինքն աղեքսանդրոս , և հրաման ետ
ածել առ ինքն զյուղիտա . յայն֊
ժամ թողին զնա նաժիշտքն , և փա֊
խեան : Իսկ յուղիտայ առեալ զմա֊
նուկն 'ի գիրկս՝ քաջութբ յանդի֊
ման եղև դատաւորին , խոստովա֊
նեալ զքս . վն հարին զնա արջա֊
ռաջօք , և քերեցին զմարմինն մինչև
ցգօտին . իսկ մանուկն կիրակոս
հայէր 'ի մայրն , և լայր . և յասել
մօրն 'ի տանջանս՝ թէ քրիստոնեայ
եմ և զտր յս պաշտեմ , զնոյն երկ֊
րորդէր և նա տղայն քաղցր բար֊
բառով : Եւ յառնուլ զնա դատա֊
ւորին 'ի գիրկս՝ և յողոքել համբու֊
րել , նա 'ի մայրն հայելով՝ 'ի բաց
դարձուցանէր զերեսս յիշխանէն ,
և ձեռօք և ոտիւք նեղէր զնա՝ թո֊
ղուլ զինքն , զի երթիցէ առ մայր
իւր . և յասել դատաւորին՝ թէ
զինչ խնդրես , նա զքրիստոնեայ եմն
երկրորդէր . վն բարկացեալ բռնա֊
ւորին՝ կալաւ զոտից մանկան , և
ընկէց ը̃ աստիճանս 'ի վայր . և
հարաւ գլուխ նր զքարի , և յարիւն

թա֊

Թաթաւեալ աւանդեաց զոգին երրև զաղաւնի։ Ընդ որ Թէպէտեւ գալարեցան աղիք մօրն, այլ առաւել ուրախ եղև, և գոհացաւ զնյ վն ընդունելոյ նախ քան զինքն ըղպտուղ որովայնի իւրոյ։ Ապա տանջեցին զյուղիտա այլ ևս քերանօք, և լցին ՚ի վր ոտից նյ նաւթ եռացեալ. և յետոյ գայլ ՚ի բերան տարան ՚ի բաց, և գլխատեցին յամի իբր 304 կամ 305։ Իսկ նշխարք յուղիտայ եղեալ գողացան գիշերի զմարմին նր և զկիւրակոսի, և եդին յայրի միում արտաքոյ տարսոնի. որք և յայտնեցան յաւուրս մեծին կոստանդիանոսի, և սփռեցան յեւրոպիա։ Հ. Յ. յուլ. 15։ Լ. յունիս. 16։

Յուսիկ սբ հայրապետն մեր՝ էր Թոռն սբ Լուսաւորչին, և որդի սրբոյն վրթանիսի. մնեալ զառաջինն ՚ի կարգ աշխարհի, և փեսայացեալ տիրանայ Թոռինն տրդատայ. և յետ ծնանելոյ զպապ և զաթանագինէս՝ հրաժարական կեանս վարէր. զի էր աղօթասէր և ճգնասէր. մինչև ընտրեցաւ յեկեղեցական աստիճան, և յետ մահու հօր իւրոյ եղև արժանաւոր յաջորդ նր յաթոռ կաթողիկոսութե։ Իսկ յորժամ

ժամ տիրան արքայ առ ածէին յուլիանոսի ուրացողի եմոյծ զպատկեր նր գիծանկար յեւր արքայական եկեղեցին, 'ի վր եհաս սբն յուսիկ · և կշտամբեալ զԹագաւորն՝ կորզեաց 'ի ձեռաց նր զպատկեր ուրացողին, և ընկեցեալ 'ի գետին՝ առ ոտն կոխեաց և մանրեաց ։ Վսյ եւ տիրան ջայլոտիւք ծեծել զնա յերկար, մինչև աւանդեաց երանելին զհոգին · իսկ մարմին նր եդաւ 'ի Թորդան առ հօր իւրում վրթանայ՝ յամի 362 ։

Հ · Դէկ · 1 ։

Յաղթիանէ · տես 'ի Կիպրիանոս ։

## Ն

Նախահայրք կամ նահապետք հինն եկեղեցւոյ տօնախմբին համախումբ · տօնելիք արժանաւոր հանդիսի առաքինութե իւրաքանչիւրոց · և համագումար տօնեալք իբրև վկայք հանդերձելոյ Աշխարհութեն կատարելոյ 'ի քս և 'ի նորա եկեղեցի · որում և ինքեանք սպասեալ մնային հաւատով, և ըստ հաւատոց և գործս ցուցանէին · որպ յայտ է 'ի պատմութե միոյ միոյ 'ի նոցանէ 'ի սր գիրս · այլ մեք զերևելեան յանուանէ յիշատակեալս 'ի տօնացուցի

ցն՝ գրեթէ ի քաղուածոյ առաքե-
լոյն, խօսն մի նշանակեսցուք:
Ա. Ադամ նախաստեղծն՝ նախա-
հայր հօրկացս, ձեռակերտ աստ-
ծոյն արարչին իւրոյ, ակներևապէս
զարդարեալ ձրիւք բնութե և շնոր-
հաց՝ զոյգ է նախամօրն եւայի,
թէպէտ և նախանձու բանսարկ-
ուին անկաւ 'ի փառաւորութենէն յան-
ցանօք, այլ մարդասիրութն այ վե-
րականգնեալ միանգամ՝ ոչ ևս մի-
անգամ անհոգացաւ. այլ՝ զամ-
բողջս կենաց իւրոց զամս 930, ի
այ ուրախութ անցոյց, օրինակ եղե-
կատարեալ ապաշխարութե ամ ծնն-
դոց իւրոց, և աւանդեալ նոցա զգե-
ղեցիկ կարգս ածպաշտութե. մինչև
առաւմուն երկրորդին որ 'ի զաւակէ
իւրմէ՝ մեծ ևս փառաց արժանի
եղև, մինչ երկրաւորքն յերկնաւորն
դրախտ վերաբերեալ: Հ. Տարք. 14:
Յ. Ծամաքր. Ճէպր. 4, Ն. Դէկ. 19:
Բ. Աբէլ արդար՝ նախաստեղծիցն
երեխայրի ածանօթէր. կուսակրօն
ամբիծ, և քահանայապետ մատու-
ցանող այ պտղոց հաճոյական, նա-
խավկայ գտաւ Ճշմարտին առաքե-
նուէն՝ յեղբօրէ իւրմէ սպանեալ առ
նախանձու. և վկայեցաւ յայ ածա-
հաճոյ կենօք և մահու, և արդար ան-
ուամբ պատուեցաւ յածային բե-
րան.

բանոյն քր՟ի ։

Գ. Սէթ զաւակ օրհնութե՟ նախաստեղծից՝ փոխան աբէլի պարգևեց յա՟յ, գտաւ նմին նմանօղ առաքինութե՟. մինչև որդւոց նո՟ր կոչել որդիս ա՟յ՝ առ որոշելոյ 'ի խառնակեցիկ որդւոց մարդկան, քո՟ 'ի սանէն կայենի ։

Դ. Ենովս անդրանիկ սեթայ՝ հօրն համանման, պահեաց զզարմ իւր յա՟ծպաշտութե. և 'ի տ՟ր յուսացեալ զանուն նր՟ անմոռաց կալաւ. ուր որդիքն կայենի երթալով երթային և օտարանային յա՟յ ։

Ե. Ենովք՝ հինգերորդ յենովսայ, և եօթներորդն յադամայ՝ գերազանցեալ զա՟մ առաքինեօք, և լցեալ հոգւով մ՟գրէութե, առանձնակի հաճոյ գտաւ ա՟յ, և կենդանւոյն վերափոխեցաւ 'ի տեղին պատրաստեալ նմ՟ յա՟յ. մինչև եկեսցէ յաւուրսն յետինս ը՟ եղիայի՝ 'ի յանդիմանել զամպարիշտս օրինակաւ բարեպաշտութե իւրոյ ։

Զ. Նոյ՝ տասներորդ յադամայ, այր արդար, և կատարեալ վարուք 'ի դարու յետին վատթարութե՟ ա՟մ ազգի մարդկան, արժանի եղև պահել 'ի ջրհեղեղէ առանձինն տամբ իւրով, և լինել երկրորդ հայր աշխարհի, և ուսուցիչ ա՟մ կարգաց բա-

բարեպաշտութե՟ 'ի պաշտել զա՟ծ
ճշմարտութ՟բ, և 'ի պատուէլ պատա-
րագօք: Հ. մայ. 17:

Է. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ քհ՟նյ ա՟յ բարձրելոյ՝
էր յաւուրս աբրահամու թագաւոր
սաղիմայ, որ կարծի լինել եղէմ.
անծանօթ ը՟ ազգի՝ վ՟նյ անհայր և
անմայր կարգացեալ, բայց կենդա-
նի օրինակ ա՟ծպաշտութե՟ 'ի մէջ հե-
թանոսաց, որք առ նովաւ յաճա-
խեալ էին յանօրէն կռապաշտութեն·
և միանգամայն եղև բազմօք նա-
խանկար պատկեր ք՟սի (զորմէ այ-
լուր լիցի բան)· մինչ զի առի նմա-
նեալ որդւոյն ա՟յ, և որդին ա՟յ կո-
չի քհ՟նյ ը՟ կարգին մելքիսեդեկի:
Հ. մրտ. 25:

Ը. ԱԲՐԱՀԱՄ հայրն հաւատոց՝ էր
որդի թարայի քաղդէացւոյ 'ի տա-
նէն եբերայ, մետասաներորդ 'ի
նոյէ, և առաջին անուն ն՟ր աբրամ
(ո՟յ հայր բարձր)· որ գնաց զհետ
կոչողին ա՟յ՝ միամիտ հաւատով, թո-
ղեալ զտուն հօր և զազգատոհմ՝
որք սկսեալ էին կռապաշտել· և
պանդխտութ՟բ դեգերեալ ը՟ հրամա-
նին ա՟յ յերկրին քանանացւոց՝ փայ-
լեաց ա՟ծպաշտութ՟բ 'ի մէջ հեթանո-
սաց, և ընկալեալ յա՟յ զուխտ թլփ-
փատութե՟՝ կոչեցաւ աբրահամ (ո՟յ
հայր բազմաց)· և յամի յա՟մ սրտէ
հնա-

հնազանդ գտաւ ձայնի տն կենդա-
նի հաւատով, մինչև յանձն առնուլ
պտրգել և զորդի ծերութե զիսա-
հակ զաւետեաց զաւակ. վյ և կըր-
կին խոստումն ընկալաւ յայ՝ օրհ-
նել զամ ազգաց 'ի զաւակի նր, զի
լինել ածահայր՝ ծնանելով փրկչին
'ի զաւակէ նր. և ոչ միայն ճշմա-
րիտ ծնոյ ոյ կոչեցաւ, այլև բարե-
կամ՝ նր ընտանի ցուցաւ. և այն-
պէս լի արդեամբք վախճանեաց զա-
ւուրս իւր։ Եւ եղև յայնմհետէ
տունն աբրահամու ժողովուրդ սեփա-
հական այ, և ած՝ կոչեցաւ ած
աբրահամու. վյ և ամ՝ հաւատա-
ցեալք յած ճշմարիտ՝ եթէ 'ի հին
և եթէ 'ի նոր օրէնս, են որդիք
հաւատոյ աբրահամու. և որ մեծն
է՝ զի և որդին այ կամեցաւ լինել
ըստ մարմնոյ յորդւոցն աբրահամու։
Ճ. յնշ. 4. և ժէպր. 29։ Յ. դէհ.
16։ Ղ. հոկ. 9։

Թ. Իսահակ կմ՝ ասեն որդի աբրա-
համու 'ի սառայէ՝ եղև պահեցող
ամբծ պատուիրանաց հօր իւրոյ,
և հեզահոգ առաքինութեց նր. պա-
կասելի յաչս ամցն իբրև այր այ և
միջրկէ, և օրհնութբ տն յառաջադէմ
յամի. երկայնամիտ յուսով և կա-
տարեալ հաւատով անկեալ ան-
ցեալ տն յերկրին պանդխտութե.

ուր և վախճանեցաւ ըն աւուրբք․
և ամ՝ ամ աբրահամու՝ կոչեցաւ
նաև ամ իսահակայ:

Ճ․ Յակոբ որդի իսահակայ՝ անդրանիկացեալ փոխ եսաւայ, սիրեցեալն 'ի տնէ՝ և սիրող այ ըստուգամ, օրհնութեց հարցն իւրոց եղև ժառանգորդ․ և յայնմհետէ կոչեցաւ ամ՝ ամ աբրահամու, ամ իսահակայ, և ամ յակոբայ․ մինչդ թէ և սարգաւոլէս՝ տր ամ իսկըն․ զի փոխեաց զանունն յակոբայ, և կոչեաց իսկըն, այ ամաւոես․ այ որում 'ի ձեռն հրեշտակի երևեցաւ նմ ամ, և յամ նեղութեց նր փրկեաց զնա ազգի ազգի ոնոոեսութք և նշանօք․ յորոց վերջինն եղև տալ նմա անամեւ կենդանի զորդի իւր զյովսէփ փառօք յեգիպտոս․ ուր և վախճանեցաւ իսկ 'ի ծերութեն իւրում. թողեալ զերկոտասան որդիս՝ զարմատս երկոտասան ցեղիցն իսկըն, օրհնելով զնս մարգարէաբար իւրաքանչիւր այ օրհնութ իւրում․ յորոց ազգին յուդայ միածնեցաւ թգւորութի, յորմէ ազգէ ծագեաց և քս․ և ազգին ղևեայ՝ քհնյութի:

Ճա․ Յովսէփ՝ մետասաներորդն յերկոտասանեսին որդիս յակոբայ, ըն հոգւով այ անդամին 'ի մանկութէ, եղև սիրելի յաչս հօր իւրոյ, և նախան-

խանձելի ա՟ծ եղբարց իւրոց. յորոց և վաճառեցաւ յեգիպտոս. այլ ա՟ծ էր ը՟ նմ՝ 'ի բարձրացուցանել զնա փառաց 'ի փառս ի՟ւ արժանի մեծամեծ առաքինութեանց նր՟. ի՟ միամիտ հնազանդութե՟ն առ հայրն, անտրտունջ համբերութե՟ 'ի տառապանս, մտերիմ հաւատարմութե՟ն առ ա՟ծ և առ մարդիկ, լուսափայլ ողջախոհութե՟ 'ի փորձ հանդիսի, անյիշաչար անոխակալութե՟ առ եղբարս իւր. և կատարեալ խոնարհութե՟ 'ի մեծութե՟. որով և զկեանս իւր վճարեաց 'ի հաճոյս ա՟յ յեգիպտոս. ո՟ւր և եղբարք նր՟:

ժը՟. Մովսէս նախամարգարէն՝ էր որդի ամրամայ թոռին ղևեայ, ապրեալ 'ի գետընկէց կոտորածէ որդւոցն ի՟էլի յեգիպտոս, և սնեալ 'ի տան փարաւոնի՝ իբրև որդեգիր դըստեր նորա. և սովին ճգնաւ կարգեալ յա՟յ 'ի լինել նախ հովիւ ոչխարաց փախստեամբ յօտարութե՟ն, և ապա հովիւ տանն ի՟էլի՝ հանելով զն՟ս յեգիպտոսէ մեծամեծ նշանօք և արուեստիւք, անցուցանելով ը՟ ծովն կարմիր ցամաքաւ, և առաջնորդելով յանապատի զամս խ՟, և տալով ն՟ց զա՟ծադիր օրէնս և ըզպատուիրանս. փայլեալ յա՟մ սքանչելի հեզութ՟բ և խոնարհութ՟բ 'ի մէջ

ազգի

ապերախտ ժողովրդեան, և եղև
ընտանի բարեկամ այ առաւել քան
զամ նահապետս և զմարգարէս.
ածախօս և ածատես. միանգամայն
և առաջին գրիչ ածաշունչ տառից՝
սկսեալ 'ի սկզբանէ արարածոց մին-
չև ցաւուրս իւր. որ և յետ բզմ և
մեծամեծ գործոց և հանդիսից ա-
ռաքինութեց՝ վախճանեալ ճի ամաց.
թաղեցաւ հրամանաւն այ 'ի լերինն
Նաբաւ 'ի տեղի մի անյայտ 'ի ժո-
ղովրդենէ, զի մի՛ արդեօք պաշ-
տեսցեն զծոյն այ իբրև զած : Հ.
ւէպ. 18 : Յ. Լ. ւէպ. 4 :

ժդ. Ահարոն քհնյ այ՝ երէց եղբայր
մովսէսի՝ էր նմին աջակից, և գործա-
կից ամ գործոց նր մեծամեծաց յե-
գիպտոս և յանապատի, և քաւիչ
մեղաց ժողովրդեան. և թէպէտ
ինքն իսկ գթել գթեաց երբեմն՝
մինչև կարօտանալ քաւութե աղօթից
մովսեսի, այլ այն էր նշանակ, թէ
ամ քհնյապետ 'ի մարդկանէ առեալ
տկարութե զգածեալ է. և միայն
ճշմարիտ քհնյապետն քս՝ ած մար-
դացեալ՝ գտաւ սրբութե մեզ՝ սրբիչ
բոլորից. Ահարոն ննջեաց 'ի կամս
ածյ 'ի հոր լերինն՝ 'ի կենդանութեն
մովսեսի :

ժե. Եղիազար որդի ահարոնի քա-
հանայացեալ 'ի տեղի հօր իւրոյ՝ ե-
ղև

դն գործակից յեսուեայ յաջորդէն
մովսէսի, և հովուեայ զինչ յերկիրն
պարգևեաց ամ՛ ուղղութբ և անբաւ-
դիւտ քաղաքավարութբ. որպ և ընտ-
րելն փենեհեզ որդին նր յետ նր :
ԺԵ. Յետոյ որդի նաւեայ 'ի ցեղէն
եփրեմի՝ էր պաշտօնեայ մովսեսի և
զօրավար իւրն յամաղէկի, որ
ձեռնարկեա ամենապաշտ՝ և չի հողուով
ամն. զոր ընտրեաց ած առաջնորդ
ժողովրդեան իւրոյ զկնի մովսեսի,
և 'ի ձեռն նորա յաջողեաց մեծա-
մեծ սքանչելեօք զժառանգութիւն
պարգևական երկրին. որպ և յայտ
է 'ի գրոց անուն յեսուեայ, որ ձա-
նաչի երկրորդ օրինաց գրեն յետ
մովսեսի. մանաւանդ և օրինակ
փրկչին մերոյ յիսի՝ որպ անուամբն,
նոյնպէս և յաղթութբն ընդեմ թշնա-
մեաց, և զարմանալեօքն յորդանանու,
և ամ՛ գործովք իւրովք : Հ. Յ. Լ.
Նէպ. I :
Իսկ զկնի մահուան յեսուեայ ընտրե-
ցան յիշ դատաւորք իրաւարարք և
առաջնորդք ամենն իէլի. յորոց
միջի նշանաւոր դատաւորն յիշատա-
կեալքն յաստքելոյ 'ի կարգի գո-
վուե իե հաւատոց, բարակ, գե-
դէոն, յեփթայէ, և սամփսոն. ո-
րոց գործք յայտնի են 'ի գրոց
դատաւորաց : Սնուեանք շորեցուց ա՞ց
թ որ

որ ոչ գտան յընտիր օրինակս տօնա-
ցուցից մերոց, մուծեալ են 'ի յետ-
նոց 'ի տպագրեալ օրինակս ինչ-
աւել 'ի լեհացւոց : Գէորգեան ոճով 'ի

Ղ. ուկ. 1 :

ԺԹ. Սամուէլ մարգարէ՝ ընտանին
սիրեցեալն 'ի յԱյ, նմանեալ մովսէ-
սի և ահարոնի՝ առաջնորդ և ուղ-
ղիչ ազգին իւրոյ, էր որդի եղկանայ
'ի լեռնէն եփրեմայ 'ի ցեղէն ղևեայ՝
ծնեալ յաննայէ ամլոյ զաւակ ուխ-
տական, և նուիրեալ 'ի տաճար յԱյ.
որ և ընտրեալ փոխ ազգին հեղեայ՝
դատեաց զիէլ հանդերձ նշանօք և
մեծամեծ գործովք մինչև ցաւուրս
սաւուղայ և դաւթի, զորս ինքն
իսկ եօծ 'ի թգր հրամանաւ Այ.
և կատարեալ վարուք և աւուրբք
ննջեաց զքուն արդարոց : Սա ձա-
նաչի յանուանէ երգ սրբազան գրեչ-
ղի որ ինչ պատմի 'ի գիրս թգրաց
մինչև ցմահ նր՝ 'ի նմէ գրեալ ասան-
դի : Հ. օփոփ. 20. կմ 21 : Յ. Ղ.

օփոս. 20 :

Ընդ սմին՝ զորս ցայս վայր նշանա-
կեցաք իբրև յանուանէ տօնելիս,
յիշատակին զօրութք և այլ նահա-
պետք և արդարք հինն եկեղեցւոյ,
եթէ յարանց և եթէ 'ի կանանց, ոմն
ոք սարրայ էր, և նմանիք նր դը-
վեալք 'ի սբյն պետրոսէ :

Նաւում. տե՛ս Երկոտասան մարգ՚՚:

Նեղոս աբբայ՝ աշակերտ ոսկեբերանի, էր եպարքոս թգրական քաղաքին կոստանդնուպօլսոյ յաւուրս փոքուն Թէոդոսի, այր լի իմաստութբ, և զարդարեալ ամ պաշտութբ՝ ամ տամբ իւրով. ապա թողեալ զկին իւր և զդուստրն 'ի վանս կուսանաց՝ մեկուսացաւ և ինքն 'ի լեառն սինայ հանդերձ որդւով իւրով Թէոդուլոսիւ. և եղև կատարեալ ուսուցիչ հոգևոր կենաց՝ օրինակաւ վարուց իւրոց, և բանիւ և գրով. որոց բզմ են սքանչելի խրատք առ միանձունս, և թուղթք յորդորականք, և այլ պիտանութիւնք հոգեշահք. և վախճանեցաւ լի արդեամբք յամի տն 450 : Լ. նոյեմբ. 12 :

Ներսէս Մեծ՝ պարթեւազեան սբ հայրապետն մեր՝ էր որդի աթանագինեայ որդւոյ յուսկան, թոռն թոռին լուսաւորչին, կրթեալ 'ի հոգևոր և յարտաքին գիտութիս 'ի կեսարիա և 'ի կոստանդնուպօլիս. այր և փեսայացեալ սպարապետի իշխանի՝ ծնաւ զսբն սահակ. և փայլեալ ամ կարգօք առաքինութ՝ ընտրեցաւ

կթղս

կթղկս հայոց ։ 'Ի ձեռնադրել նր
քհնյ և եպս 'ի կեսարիա յեւսեբիո_
սէ պատրիարգէ տեղւոյն ը սբյն
բարսղի կեսարացւոյ՝ էջ 'ի վր եր_
կոցունցն հոգին սբ աղաւնակերպ.
և 'ի պտրգել անդ սբյն ներսէսի՝
երևեցաւ սիւն հրեղէն յերկնից, և
լսելի եղեն ձայնք հրշտկաց. և դէմք
նորա փայլեցին հանգոյն մովսէսի ։
Իբր եկեալ նր 'ի հայս՝ եղև նորոգիչ
աշխս, պայծառացուցանելով զաշ_
խարհն ամ բարեկարգութբ. և մաք_
րելով յամ անկարգութեց ։ Շինեաց
հիւրանոցս և անկելանոցս՝ և վա_
նորայս անթիւս, և ծաղկեցոյց ըղ_
հայաստան երբև զդրախտ այ. և
կրեաց բզմ աշխատութս վս 'ի խա_
ղաղութե պահելոյ զթգւորութն հայոց.
գնալով անձամբ մինչև 'ի դուռն վա_
ղեսի կայսեր. որ գոլով արիոսեան՝
աքսորեաց զերանելին 'ի կղզի մի
անբնակ. ուստի դարձեալ պատ_
ուով առ մեծն Թէոդոսիւ՝ առաջի_
կայ գտաւ ժողովոյն կոստանդնու_
պօլսոյ. և վերստին եկեալ յաթոռ
իւր՝ յետ բզմ գործոց վայելչական_
նաց քաջ հովուէր՝ դեղով սպանաւ 'ի
պապայ արքայէ կշտամբելոյ 'ի սբյն
յղգս խառնակ վարուց. այլ նախ
քան զաւանդումն հոգւոյն մրգրեա_
բար պատմեաց զանցս հայոց աշ_

խարհիս, և ըն̃հանուր աւինզերաց յաւուրսն յետինս. որ և հետ ընդ-հետէ կատարեցան և կատարին։ Իսկ մարմին սր̃յն Թաղեալ ՚ի Թիլն աւանի յեկեղեաց գւռ̃ի՝ յամի 384, յետ ժամանակաց բազմաց յամի 1272 յայտնեցաւ սքանչելեօք՝ յաւուրս յովհաննու երզնկացւոյ։ Հ. նոյ. 19։

ՆԵՐՍԷՍ ԿԼԱՅԵՑԻ՝ որ և Շնորհալի սբ̃ հայրապետն մեր՝ ՚ի լուսաւորչեան զարմէ ելեալ ՚ի դստերէն սահակայ պարթեւի ՚ի մէջ տանն մամիկո-նէից, էր որդի ապիրատայ իշխա-նի՝ Թոռնին գրիգորի մագիստրոսի ՚ի դստերէ, ծնեալ ՚ի կողմանս խար-բերդու, և ուսեալ առ տոս ստե-փաննոսի գիտնականի, և ձեռնա-դրեալ քհ̃նյ և եպս̃ յեղբօրէ իւրմէ ՚ի գրիգորէ կթղկսէ պահլաւուն-ւոյ ՚ի հռոմկլայ։ Որ և եղև յա-ջորդ նր̃ ՚ի հայրապետութե̃ յամի տե̃ն 1165. և ՚ի Թուին հայոց ՈԺԴ. շնորհազարդեալ ամ̃ առաքինութ̃ և հոգևոր հանճարով, և յաջողակ ՚ի գիր և ՚ի բան՝ մեղրածորան վար-դապետութ̃ և մարգարէաշար բա-նահիւսութ̃. որով յօրինեաց գիրս տաղանաւորաց, շարականս, երգս և տաղս և պանծս բզ̃ում յոյժ. գրեաց և զայլ հոգեշահ մատեանս և Թուղ-

Թղս

ճիլս հոգեյորդորս ։ Եւ որ մեծն է, սքանչելի քաղաքավարութն ոտ վա-րուց իւրոց և ամենիմաստ բանիւք հոգեբուղխ շրթանց զարմացուցեալ զայնս բովանդակ՝ ձգեաց զկայսրն և զպատրիարգ յնց ՚ի սէր խաղա-ղութեան ընդ ազգի իւրում. և արար մեծամեծ բարեզարդութիւնս յեկեղե-ցի հայաստանեայց. և յետ բազում ձգանց և տքնութեանց՝ լի արդեամբք հանգեաւ ՚ի տր յամի 1173. ութ. ՚ի հասակի հէ ամաց. և թաղեցաւ ՚ի հռոմկլայ, ուր կայ գերեզմանն նր մինչև ցայսօր՝ պատուեալ նաև յօտարաց իր ներբողս անուամբ ։

Հ. յունիս. 13. և օգոս. 5, էջ 9։

Ներսէս Լամբրոնացի՝ արքեպիսկոպոսո-նի՝ (որ յառաջն Սմբատ կոչիւր. և ՚ի ձեռնադրելն քհնյ ՚ի Շնորհալ-ւոյն՝ եառ զանուն նր,) էր որդի Օշնի մեծի իշխանին Լամբրոն դղեկի ՚ի Կիլիկիա, և շահանդխտոյ դստեր զօրավարի եղբօրն Շնորհալւոյ, յար-գանդէ նուիրեալ այ ուխտիւք, և ՚ի մանկութէ լցեալ հոգւով սրբ-ով զարգացաւ յամ առաքինութիւնս և յամենիմաստ գիտութիւնս. և առ ոտն հարեալ զփառս աշխարհի՝ զոր ՚ի ձեռին ունէր, կրօնաւորեցաւ ՚ի վանս սկեռոյ. եկաց առ ժամ մի և

'ի կթղկսարանին Հռոմկլայու տա-
տուս շնորհալւոյն. և հրամանաւ նր
գնաց 'ի վանս սեաւ լերին. յետոյ
առանձնացաւ մօտ յածածնի վանս
'ի սաղրու անապատն 'ի մէջ լերանց
տորոսի յանձուկ սենեկի՝ կրթեալ
յաղօթս և 'ի ճգնութիւնս հրշտկակրօն
վարուք. մինչև առնել նշանս բժշ-
կութե. և հալածել զդևս: Գրեաց
և բզմ ճառս և մեկնութիւնս և գիրս
հոգեշահս հզօր հոգւով 'ի տիս պա-
տանեկութե. Թարգմանեաց և զբզմ
գործս ալիտանիս: Եւ բանադա-
տեալ 'ի գրիգոր կթղկսէ յաջորդէ
շնորհալւոյն՝ ձեռնադրեցաւ արքեպս
տարսոնի՝ իբ ամաց, իբրև առաջ-
նորդ վանացն սկեւռայ. և եղև հովիւ
քաջ, նորոգիչ բարեկարգութեց, և
պայծառացուցիչ եկեղեցւոյ հայաս-
տանեայց. զարմացոյց զյոյնս և զլ-
ատինս իմաստութբ և սրբութբ իւ-
րով. և ը ամի տմ եղև միաբանա-
կան սիրով, յոր վառեալ էր ամիճ,
իբրև հուր բորբոքեալ 'ի սէրն այ
և ընկերին. և 'ի նմին կատարեաց
զքաջամարտիկն կեանս իւր 'ի հասա-
կի խե, կմ խզ ամաց, յամի 1198.
տնէ: Առ սովաւ եղև վերջին կար-
գաւորութի տօնացուցին մերոյ. վնյ
և անունն նր ոչ յաւելաւ անդանօր.
բայց բզմք իսկ և իսկ զկնի փոխ-
ման

մանն նր սկսան առնել զնա · զոր և այժմ զոյգ ը շնորհալւոյն առնեն ոմանք, ոմք և արժան իսկ է · և 'ի յայսմաւուրս երկոքին միանգամայն կոչէին Ներսիսեանք : Հ. Չէռ. օգոստ. 9 :

Պղ. յուլ. 17 :

Եկատերինէ՝ որ և Կատարինէ (Յն. Եկատերինա, և Լտ. Կատարինա) իմաստասէր կոյսն և վկայն՝ էր աղեքսանդրացի, դուստր թգրազին յազգականութէ մեծին կոստանդիանոսի · սնեալ 'ի քրիստոնէութե, և վարժեալ ամ իմաստութ հելլենացւոց և եգիպտացւոց, կորովամիտ և հզօր 'ի բանս : Եւ եղև 'ի գալ մաքսիմիանոսի կայսեր յաղեքսանդրիա, և 'ի կատարել զտօն հեթանոսական, համարձակեցաւ նեքտարինէ, և գնացեալ յառեան կայսեր՝ ամծաձիր հանճարով իւրով յանդիմանեաց զկուրութի կռապաշտից, նշաւակելով զդիս նց 'ի վիպասանութեց անտի նախնեաց իւրեանց : Յորժամ զամօթի հարեալ թգրին՝ կոչեաց յիմաստնոց իւրոց հռետորաց և 'ի փիլիսոփայից արս յիսուն՝ վիճել ը նեքտարինեայ · բայց կոյսն իմաստութն յաղթահարեաց զնս ամ, մինչև հաւատալ նց 'ի քս · վսն ետ թգրն այրել զամենեսին զնս հրով · և

զնեքտասանն արկեալ 'ի բանտ , և տղոքանօք և սպասաւորօք փորձեալ. յետ սաստիկ գանից և տանջանաց անոճոց՝ յորմէ ազատեցաւ 'ի ձեռն հրշակի , ետ գլխատել . և նոյնժամայն եղև գլուխ կուսին աներևոյթ հանդերձ մարմնովն . զի 'ի ձեռն հրեշտակաց բերեալ եդաւ 'ի լեառն սինայ . որ և եղև նշանաւոր ուխտատեղի հաւատացելոց : Հ.
Նոյ . 27 : Յ . Լ . Նոյ . 25 :

ՅԱԿՈԲ ՄԾԲ . ՀԱՅՐՊՏ՝ առաջինն տիեզերական սիւնհոդոսայ , և կանոնածին , յորում էին յժը հայրապետք , որք անոճանիք սրբութբ և վկայական խոստովանութբ , գումարեցաւ ընդէմ արիոսի քնամարտի ժխտողի զմծութն բանին , առ մեծն կոստանդիանոսիւ յամի տն 325 . որ է ա հաշուի յունաց՝ ամ միջեղութն 318 , զուգաթիւ հարցն ժողովելոց , որչափ էր և թիւ համարոյ արանցն աբրահամու հօրն հաւատոց՝ 'ի վանել զթշնամիս : Հ.
Նոյ . 28 , կամ 27 . Ն . սեպ . 7 : Յ .
Նոյ . 29 :

ՆԻԿՈՂԱՅՈՍ սքանչելագործ հայրպտ՝ մին 'ի նշանաւոր հարց նիկիոյ , էր 'ի միւռայ կմ 'ի զմիւռին քղքէ լիկիոյ՝ մօտ յիզմիր կմ 'ի զմիւռնիա յոնիոյ ,

որ-

որդի եպիփանու և Նոննեայ բարե-
պաշտ ծնողաց՝ և պտուղ աղօթից.
որ ՚ի ծնանիլն՝ եկաց ժամս ինչ յո-
տին, և ՚ի չորեքշաբաթի և յուրբա-
թու ոչ դիեր զստինս. և ՚ի տղայա-
կան հասակի ՚ի դպրոց տուեալ՝
սկսաւ բժշկութիւն կատարել նշանաւ
սբյ խաչին: Եւ ապա ձեռնադրեալ
քհնյ ՚ի քեռւոյ իւրմէ Նիկողայոսէ
եպսէ քղքին՝ որ և էր այր սբ, ինքն
ունէր զհոգս եկեղեցւոյն, և փայ-
լէր առաքինի վարուք և նշանագոր-
ծութբ: Եւ յաւուր միում ետես զսբ
Ածածինն՝ ունելով զՏրն ՚ի գիրկս
իւր. որ ետ նմ զաւետարան մի,
և սբ կոյսն զզգեստ հայրապետա-
կան. և ՚ի այնմ տեսլեան ընտրե-
ցաւ յաթոռ եպսութե ՚ի տեղի քեռւոյ
իւրոյ. և յաւել առնել զայլ եւս բզմ
գործս սքանչելիս, մինչդ յազատել
զվտանգեալս ՚ի ծովու. ոմն և զե-
րիս արս՝ որք յանիրաւի մահապար-
տեալ և բանտարկեալ ՚ի կոստան-
դնուպօլիս՝ կարդային զայլն սբյ
զնիկողայոս յօգնութի, հրաշափառ ազա-
տեցոյց՝ երևեալ ՚ի տեսլեան կոս-
տանդիանոսի Թգրի և եպարքոսի
նր. և ինքն յետ բզմ արդեանց ա-
ռաքինութե փոխեցաւ առ Տր. և
արար բզմ հրաշս նաև զկնի մահ-
ուան: Հ. դեկ. 11: Յ. Լ. դեկ. 6:

Նոյ. տե՛ս Նախահարք:

Նուանէ կամ Նուանի կոյսն սքանչելի՝ էր մի յընկերաց ս͞րբց Հռիփսիմեանց. յորոց ՚ի գալն ՚ի հայս՝ մեկնեցաւ ինքն կարգաւորութեամբ ա͞յ ՚ի կողմն աշխարհին վրաց, և զտեղի կալաւ ՚ի Մծխիթա ցածուն ձեւով իբր աղախին ոք գերի. և սկսաւ առնել նշանս անուամբն ք͞ի, մինչև բժշկել և զմանուկն Միհրանայ արքայի վրաց, և զթագուհին, և քարոզել նոցա յայտնի զհաւատս ք͞ի: Ապա ՚ի վտանգելն Միհրանայ յորսս ՚ի թանձր մգէ՝ ուխտեաց պաշտել զա͞ծն Նունէի. որով և ազատեալ դարձաւ առ տ͞ր ա͞մ տամբ իւրով և աշխարհաւ. յայնժամ Նունեայ ազդ արարեալ զիրսն առ ս͞րբն Գրիգոր մեր լուսաւորիչ՝ հրամանաւ ն͞ր կանգնեաց զխաչ մի փայտեայ, մինչև տացէ ա͞ծ հովիւ զոք վրաց. ո͞պ եղև յետոյ գալ ք͞հնյից անդր ՚ի յունաց աշխարհէ, և հաստատել զեկեղեցիս ը͞ս ծխի իւրեանց: Այլ յորժ է͞ր զայն՝ յանդգամնել ամբոխին զփայտն խաչի՝ աղօթիւք Նունեայ ծագեաց լոյս խաչանման ՚ի վերուստ. արար ա͞ծ և այլ սքանչելիս ՚ի ձեռն Նունեայ, մինչև լինել նմա լուսաւորիչ

ըէջ վրաց , և այլ բազում տեղեաց 'ի սահմանս Նի͠ց · ուր և կատարեալ զկեանս իւր ճգնութե͠ք և սրբութե͠ք՝ Թաղեցաւ պատուով , և պատուէ ցարդ է͠ս 'ի վրաց ։ Հ · հոկ͠ · 29 ։

# Շ

**Շամոնէ** · տես զՄակաբայեցիս ։

**Շեղայ**՝ որ համարի մին յեօԹանասնից, էր գործակից առաքելոց՝ և մ͠ւն͠դ սբ͠յն պօղոսի 'ի քարոզուԹե͠ն աւետարանի · որ և զկնի բա͠մ վաստակոց առաքելութե͠ն , և շրջելոյ 'ի զն͠զն տեղիս , կատարեցաւ 'ի կողմանս մակեդոնիոյ 'ի փլիպպուս ք͠ղքի ։ Հ · յունիս · 26 ։ Յ · յուլ · 30 ։ Լ · յուլ · 13 ։

**Շինառ կամ շինառ** · տես 'ի Սեղի ։

**Շմաւոն Նախանձայոյզ**՝ որ և Սիմոն կանանացի , էր մին յերկոտասան առաքելոց ( ը͠ս ոմանց 'ի Թոռնոյ եղբարց տն͠ի, և ը͠ս այլոց նոյն է͠ Նաթանայելի)։ Սա շրջեցաւ քարոզութ͠բ յեգիպտոս և 'ի լիբիա և 'ի մաւրիտանիա , բա͠մ չարչարանս կրեալ 'ի խուժադուժ

ազգաց, և ապա գնաց ՚ի պարսս ը̄ յուդայ Թադէի. և եկեալ կատարեցաւ ՚ի Հայս ՚ի գաւառին ռշտունեաց յառաքելութեան ք̃ըզի ամս երի որմեայ. իսկ այլք ասեն ՚ի բրիտանիա բևեռեալ ՚ի խաչ. և կէսք յեղէմ խաչեալ ասեն և անխնա պահեալ, Թերևս չփոթելով զպատմութի̃ն նր ը̄ յաջորդին: Հ. յուն. 30: Յ. մայ. 10: Լ. հոկ. 28:

Շմաւոն ազգական Ք̃ի՝ որ համարիմին յեօթանասնից, էր եղբայր յակոբայ արդարոյ՝ կոչեցելոյ եղբայր Տ̃ն, որպէս և յուդայի և յովսեայ. և եղև եպ̃ս եէ̃մի զկնի եղբօր իւրոյ. և ՚ի կատարել դոմետիանոսի զմնացորդս տանն դաւթի՝ սա ՚ի չմնալոյ ժառանգ Թիգրուն, ապրեցաւ երանելին շմաւոն վ̃ս կարի ծերութեան. Բայց ՚ի միւսանգամ յուզել տրայիանոսի զմնացորդս դաւթի, մատնեցին հրէայք և զշմաւոն՝ ո̃ր թէ զյ̃ս քարոզէ լինել Թագաւոր հրէից. վ̃ն այսու յատեան ատտիկոսի հիւպատոսի կայսեր՝ որ կայր յեէ̃մ. և նա Թէպէտ պատկառեալ յալեաց սր̃ին՝ չիշխէր ձեռն արկանել ՚ի նա, բայց ստիպեալ ՚ի չարախօսաց՝ հրամայն ետ խաչել զնա ը̄ օրինակի տ̃ն իւրոյ և վ̃դպի, յամի տ̃ն.

տն. կբր 108. 'ի Հաստակի ԽԵ սաղմոսաց:
Հ. ուէպ. 28. նա նա տպր. 20, ըստ
յէտ: Յ. ուէպ. 18, նա տպր. 27: Ն.
ձէպր. 18:

Շուշան կամ շուշանիկ կոչեցեալն ըստ դգուճանաց և ըստ պայծառագեղոյ, աղախինն այ Վարդուհի՝ որ և Վարդանուհի, էր երէց դուստր սրբոյն Վարդանայ մեծի, տուեալ 'ի կնութիւն Վազգենի վրաց բդեշխին՝ որ թագաւորէր 'ի Մծխիթա. որպէս և փոքր քոյր նր Վարդանոյշ՝ եղև կին Արշաւրի Կամսարականի: Եւ եղև յետ կատարման սրբոց Վարդանանց՝ Վազգէն այրն շուշանայ առ հաճոյ լինելոյ յաչս արքային պարսից ուրացաւ զքս. Եւ որ չհանդուրժեալ արբուհւոյն շուշանայ՝ յանդիմանեաց զայր իւր, և ոչ կամեցաւ հաղորդ լինել նմա իւիք իրօք. մինչև զգաստացի. իսկ Վազգենայ ջանացեալ և զկին իւր հանել 'ի հաւատոց՝ տանջէր զնա սովու և ծարաւու և գանիւ զամս վեց. մինչև տրորեցաւ մարմին նր վիրօք և ցաւօք. այլ նա գոհութբ տանէր ամի 'ի սէրն քսի: Իսկ յամին եօթներորդի՝ յաւուր միում չարաչար հարեալ լախտիւ 'ի Վազգենայ՝ կիսամահ զերծաւ ուրեք 'ի ձեռն ապերն իւրոյ Ջոջկայ. և

հաւ.

հաղորդեալ ընդ խորհրդոյն՝ աւանդեաց զոգին, ընկալեալ զբրաբիոն նահատակութե՛, և Թաղեցաւ պատուով յաշխարհին վրաց՝ յամի իբր 458: Սա ինքն շուշան փախոյց 'ի ձեռաց առն իւրոյ ուրացողի զոր խաչնունեաց 'ի մծխիթայէ յաշխարհն հայոց. ուստի կոչեցաւ այն նաև շուշանայ խաչ. իսկ վազգէն չարաչար սպանաւ 'ի վախթանկայ արքայէ վրաց: Հ. դէկ. 25. Ն. մայ. 30, ըստ պտ. ԻՏ յուլ. 24. ըստ Յէա:

# Ո

Ոնեսիմոս կողոսացի՝ էր ծառայ փիլիմոնի առն ազնուականի գրելոյ հռովմայեցի ե̄ ազատութեն. և յետ հաւատալոյ նոր 'ի ք̄ս 'ի ձեռն պօղոսի առաքելոյ, ոնեսիմոս ցանկացեալ ազատութե՝ գողացաւ ինչս 'ի տանէ տն իւրոյ, և անկաւ փախստեայ 'ի հռովմ. ուր տեսեալ զս̄ն պօղոս 'ի կապանս՝ յարեցաւ 'ի նա, և յետ սրտէ դարձեալ 'ի տ̄ր՝ մկրտեցաւ յառաքելոյն, և սպաս տանէր նմ՝ յետ [illegible] որդիաբար. իսկ պօղոսի կամելով շահել զսիրտ տն նր փիլիմոնի՝ գրեաց առ նա թուղթ յանձնարարական, և յղեաց 'ի ձեռն նոցին ոնեսիմեայ: Եւ փիլիմոնի ընկա-

կալեալ զնա Լեւոն զեղբայր իւր խրատու առաքելոյն՝ յղեաց անդրէն 'ի սպասաւորութի նորին․ և յայնմհետէ եղև Ոնեսիմոս 'ի կարգի երևելի աշակերտաց, և գործակից պօղոսի 'ի քարոզութե յետ արձակելոյն 'ի կապանաց․ և ձեռնադրեալ 'ի նմանէ եպս՝ շրջեցաւ ընդ բազմ տեղիս յեւրոպիա և յասիա․ և զկնի մահուն տիմոթեայ և յովհաննու աւետարանչի՝ կալաւ զաթոռն եփեսոսի․ և ապա կալեալ զնա անօրէնանն քնի՝ ածաւ կապանօք 'ի հռովմ, և արկաւ 'ի բանտ անսուաղ զաւուրս ժը․ յետոյ հարին զնա հաստ բրօք, և խորտակեցին զոլորս ոտիցն և զբարձսն, մինչև եհան զոգի․ կմ ըստ ոմանց՝ քարկոծմամբ մեռաւ, յամի տն իբր 109։ Հ․ փետր․ 10։ Յ․ փետր․ 15։

Լ․ փետր․ 16։

Ոնոփրիոս սբ հայրն էր եգիպտացի՝ կրօնաւորեալ զառաջինն 'ի վանս եռմիպօլիտացւոց, և ապա տենչմամբ առաւել կատարելութե առանձնացեալ յանապատ խորին․ ուր եգիտ խուց մի անձուկ, և առ նմ արմաւենի․ և եկաց անդ խիստ ճգնութբ և անդադար աղօթիւք և խոկմամբ երկնայնոց զամս վաթսուն․ յետ որոյ ազդմամբն այ եկեալ 'ի տես նր

եղբա

երանելին պատմութիւնս՝ լուեալ 'ի նը-
մանէ զնմ պատմութեն սքանչելի վա-
րուց նորա. և 'ի փոխիլ նր առ տր՝
ամփոփեաց զսբ նշխարս նր. և ե-
կեալ պատմեաց միանձանց եգիպ-
տոսի յօրինակ բարի ամցն. որպէս
գրեալ կայ մի ըր միջէ 'ի հարանց
վարս : Հ. Յ. Լ. յունիս. 12 :

Ոսկեանք որք ճգնաւորքն (զորս սովո-
րեցան յետինք քահանայս կոչել ըր
պաշտաման առաջնորդի նց) էին ո-
գիք հինգ 'ի կայսերական պալատա-
նէ. որոց գլխաւորն կոչիւր Խոսու-
ւ՝ յր Ոսկի. առաքեցան գեսպանու ըն
'ի հռովմայ առ սանատրուկ արքայ
հայոց. և հանդիպեցան սրբյն Թադէի
առաքելոյ յաշխարհիս մերում, 'ի
տեսանելն զսքանչելիս նր՝ որով ձայ-
նեաց յանուն քի առ մի յեղանց
վայրի, և ետ զայն ոսկեանց 'ի կե-
րակուր, և ապա զոսկերսն 'ի մի ժո-
ղովել՝ անդրէն կենդանացոյց զեղն.
հաւատացին 'ի քս. և մկրտեցան յա-
ռաքելոյն՝ աշակերտեցան նմ. որ և
ձեռնադրեաց զՈսկի 'ի քհնյ : Իսկ
յետ կատարման սրբյն Թադէի՝ գնացեն
ոսկեանց յակունս եփրատայ մօտ 'ի
լեառն ծաղկեայ որ 'ի ծաղկոտն գա-
ւառի, շինեցին խուցս՝ և կրօնաւո-
րեցան : Եւ զկնի իբր. խն ամաց

ազգ-

աղգմամբ ա̃ն իջեալ 'ի քեռնէն՝ գնա-
ցին յարքունիս արտաշէսի հայոց ար-
քայի և սաթինիկ թագուհւոյն՝ քա-
րոզել նը̃ ղք̃ն . և դարձուցին զագ-
դականս թագուհւոյն՝ որ էին յու-
քանաց . զորս բերեալ ա̃յն ոսկեայ
ը̃ իւր յակունս եփրատայ՝ մկրտեաց
անդ . և կոչեաց զանուն գլխաւորի
նը̃ սուքիաս : Ընդ որ զայրացեալ
արտաւազդայ արքայորդւոյ հան-
դերձ եղբարբք իւրովք՝ եհաս 'ի մե-
նարանս ոսկեանց . և եւ ծառայից
իւրոց խաղխողել զերանելիսն յամի
ա̃ն իբր 107 . զորս եկեալ ամփոփե-
ցին սուքիասեանք , և կրօնաւորեցան
'ի տեղին նը̃ : Հ . ոէպ . 19 . Ն օգոս . 27 :

Ոլնէ . տե՛ս Երկոտասան միք̃ր էք :

Ոլրէոփէս . տե՛ս Եւստրատիոսեանք :

Որմզդան . տե՛ս ը̃ Աւբդայի :

Պ

Պանփաղէոն կա՛մ պանփաղեոն՝ (որ և
պանթէլէէմոն կոչեցեալ) , էր 'ի
նիկոմիդեայ քաղաքէ առ մաքսիմիա-
նոսի՛ , որդի եւստորգիոսի հեթա-
նոս իշխանի , և եւբուղեայ մօր քրիս-
տոնէի , տուեալ 'ի մանկութե̃ յու-

սումն

ուսումն բժշկութեան առ ոտս եփրոսի-
նոսի բժշկապետի ։ Եւ եղև պան-
տալէոնի պատանւոյն անցանել ընդ
վայրն՝ ուր 'ի Թաքստի կայր սբ քա-
հանայն Երմողայոս ծերունին՝ ապրեալն
'ի կոտորածէ երկուց բիւրուց ․ յոր-
մէ լուեալ զհետս քի՝ աշակերտե-
ցաւ նմ ․ և 'ի դառնալն 'ի տուն՝ ե-
տես 'ի վր ճնհի մանուկ մի մեռեալ
'ի հարուածոյ օձին, որ անդէն կայր ․
և կարդալով զանուն յի՝ յարոյց
զմեռեալն, և զօձն սատակեաց ․ և
ինքն դարձաւ անդրէն առ Երմողայ-
ոս, և մկրտեցաւ 'ի նմէ ։ Եւ յայնմ
հետէ առնէր անուամբն քի բժըշ-
կութիս 'ի վր ամ հիւանդաց ․ մինչև
եհաս բանն 'ի լսելիս Թգրին ․ որ
վն նահատակեցաւ սրով Երմողայոս,
և երկու ընկերք նր՝ Երմիպպոս և
Երմոկրատէս ։ Իսկ պանտալէոն յետ
դարձուցանելոյ զհայր իւր 'ի սբ հա-
ւատս, և խորտակելոյ զկուռս նր
մեծագինս՝ և բաշխելոյ աղքատաց,
ըմբռնեցաւ և տարաւ յատեան Թա-
գաւորին ․ և ոչ տուեալ տեղի ողո-
քանաց կամ սպառնալեաց՝ գանե-
ցաւ ուժգին, և խանձոտեցաւ լամ-
պարօք ․ յայնժամ երևեցաւ նմ տր
'ի կերպարանս Երմողայոսի, և քա-
ջալերեաց զնա 'ի տանջանս ․ ապա
կապեցին վէմ մի յոտսն, և ընկեցին
'ի

'ի ծով. այլ ազատեցաւ 'ի ձեռն հրեշտակի. Նոյնպէս և 'ի բերանոյ գազանաց, և 'ի սրալից անօրինաց անձնատէրն պահեալ, կապեցաւ յետոյ 'ի ձիթենի մի և գլխատեցաւ. այլ փոխանակ արեան կաթն բղխեաց և ջուր. վասն և հաւատացին բազումք 'ի նր. և արար ած բազում հրաշս 'ի տեղւոջ կատարման հրեշտակատիպ պատանւոյն: Հ. յուլ. 26: Յ. յուլ. 26, և 27: Լ. յուլ. 27:

Պեղագիա կոյս (որ գրի և Պեղէգիա) էր 'ի տարսոնէ կիլիկեցւոց առ գելոկղետիանոսիւ, դուստր հեթանոսաց 'ի մեծ տանէ. և 'ի մկրտել կղեմոսի եպսի զբզմս՝ տեսանէր պեղագիա 'ի անսպեան գիշերոյ և զինքն 'ի թիւս մկրտելոց. ապա պատմաւանօք երթալոյ 'ի տուն դայեկին՝ չոգաւ առ եպսն, և լուեալ զբանս կենաց՝ մկրտեցաւ երկու աղախնեօք հանդերձ. և հանեալ զմեծագին հանդերձ իւր՝ ետ եպսին բաշխել աղքատաց. և ինքն դարձաւ 'ի տուն դձուձ զգեստուք. զոր տեսեալ մօրն՝ լայր և ողբայր. մինչև ետ հաւացանել զնորին յանկանչս ազատորդւոյ կայսեր, որոյ խօսեցեալ էր ըղպեղագիա 'ի կնութ. իսկ նր լուեալ եթէ քրիստոնեայ եղև կոյսն, առ-

մա-

մոլեգնութեն անձնամասնոց եղեւ սրով․ և կայսրն յանհնարինս սրտմտեալ՝ եա արկանել զվեղարգիս 'ի պղնձե ցուլ հրացեալ․ և այնու կատարեցաւ երջանիկ հարսն և աղախինն քնի ։ Հ․ հոկ․ 8 ։ Յ․ հոկ․ 7 ։ Լ․ նոյ․ 4 ։

Այլ է և պեղագիա կոյսն անտիոքացի՝ քրիստոնեայ և մեծազգի, փոքր մի յառաջ քան զառաջինն առ նումերիանոս կայսերաւ, կամ փոքր մի յետոյ առ մաքսիմիանոսիւ զամ կուսեցելով․ զոր իբրև խնդրէին զօրականք հրամանաւ իշխանին զըռամբածել, և կապտել զմարգարիտ կուսութեն յանարգութի քրիստոնէից, պատրեաց զնո՝ թողուլ զինքն, մինչև մտցէ 'ի սենեակ իւր, և զգեցցի պճանդերձս պայծառս․ ուր աղօթելով առ ած սրտառուչ՝ էարկ զինքն ազդմամբ ոն ընդ պատուհանն․ և անվնաս իջե՛լ 'ի վայր՝ ամփոփ մարմնով յաղօթս կալով աւանդեաց զհոգին 'ի ձեռս այ ։ Զսա ներբողեն պանծալի ճառիւք ոսկեբերան և ամբրոսիոս ։ Հ․ ապր․ 30 ։ Յ․ հոկ․ 8 ։ Լ․ յունիս․ 9 ։

Այլ է և միւս պեղագիա անտիոքացի՝ կին աղաչխարող 'ի Ե դարու․ որ երբեմն հեթանոս էր և պոռնիկ, և դարձաւ և մկրտեցաւ 'ի ձեռն

սբյն

սբյն նուննոսի կամ նոննոսի եպսի ։ և կրօնաւորեղ ՚ի լերինն ձիթենեաց՝ առն ձեռով , և պեղագիոս անուամբ · բզմ ճգնութբ և սրբութբ փոխեցաւ առ տր ։ Հ · յունիս · 9 ։ Յ · Լ · հոկ · 8 ։

Պետրոս առաքեալն՝ գլուխն առաքելոց ~~և երևելի տիրոխանն~~ բնի , էր ՚ի բեթսայիդայ գալիլեացւոց յազգէ նեփթաղիմայ՝ սիմոն անուն որդի յովնաննու , և եղբայր անդրէի · և ՚ի տեառնէ կոչեցեալ կեփաս , որ է պետրոս , իբր վէմ , լինել հիմն եկեղեցւոյ անվանելի ՚ի դրանց դժոխոց · որոյ երևելի գործքն յայտնի են ՚ի պատմութիւն աւետարանին և գործոց առաքելոց՝ մինչև ՚ի գնալ նր արտաքոյ հրէաստանի ՚ի քարոզութն անթլփատաց ։ Որ և եկեղ նստաւ առ ժամանակ մի ՚ի մեծն անտիոք՝ ուր նախ անուանեցան աշակերտեալքն քրիստոնեայք · և շրջեցաւ ՚ի կապադովկիա , ՚ի գաղատիա , ՚ի պոնտոս , ՚ի փռիւգիա և ՚ի պամփիլիա , և յայլ տեղիս աշխրյ · առ որս ուղղեաց յետոյ և զթուղթս իւր , յորժամ էանց ՚ի դաղմատիա և յիտալիա · և եկեղ հաստատեաց զաթոռ իւր ՚ի մեծն հռոմ զամս իէ · ուր և միաբան ընդ սբյն պօղոսի նշաւակեղ զխաչն մոգն , յետ բզմ և մեծամեծ գործոց՝ անդէն

դէն

դէն կատարեցաւ, խաչեալ գլխ՛ի
վայր առ Ներոնիւ յամի տն 66. 'ի
մի և 'ի նոյն աւուր՝ յորում և պօ_
ղոս գլխատմամբ կատարեցաւ: Հ.
Յ. Լ. յունիս. 29: Եւ նա Հ. դեկ. 27:

Պետրոս Հայրապետն՝ էր պատրիարգ
աղեքսանդրիոյ եգիպտացւոց, ընտ_
րեալ յամի Քր 300. բայց ոչ եր_
բեք նստէր յեկեղեցւոջ 'ի վր աթո_
ռոյ իւրոյ, այլ՝ յատախտին առ
պատուանդանի նր. զի տեսանէր
սպէր զքրն իմ բազմեալ. և եղև սբ
Հայրապետս այս հովիւ քաջ՝ 'ի պա_
հել զհօտ իւր յերեսաց չարութե
դիոկղետիանոսի, և մաքսիմիանոսի
հերակլեայ, և մաքսիմիանոսի գա_
ղերիոսի արմենտարիոսի, և մաքսի_
մինոսի կմ մաքսիմիանոսի դածայ.
ոպ և 'ի հերձուածոյն մելիտիանո_
սաց. զորոց գլխաւորն զմելիտիոս
զուրացող եպս մերժեաց 'ի հաղոր_
դութե իւրմէ. և 'ի մատնութե նր
յարեաւ հալածումն յեռին յաղեք_
սանդրիա. մինչև հալածականն շըր_
ջիւ սբն հայրապետին զբզմ ժմս 'ի մի_
ջագետս և 'ի պաղեստին՝ հանդերձ
սարկաւագաւ իւրով Աղեքսանդրիւ,
որ էր այր ծերունի՝ և լի հոգւով:
Այլ լուեալ, թէ բզմք 'ի պաշտօ_
նէից և 'ի գործակցաց իւրոց կա_

տուս

տարեցան նահատակութք , և հօտ իւր
անհրունչկայ , դարձաւ յաթոռն , և
մխիթարեաց զամենին ։ Եւ ահա փու֊
թանակի եհաս 'ի քաղաք անդր հա֊
զարապետ մաքսիմինոսի կայսեր ․ և
կալեալ զհայրապետն՝ էարկ 'ի բանտ ․
յորոյ 'ի տես եկն և որք հայրն ան֊
տոն , և զուարթացոյց մինչև յօր
կատարման նր ։ Եկին 'ի բանտն և
աքիւղաս և աղեքսանդրոս երիցունք
հայրապետանոցին ․ զորոց գուշակեաց
ոք հայրպտն լինել յաջորդս իւր
յաթոռն ․ և 'ի միջնորդել նց վասն
արձակելոյ զարիոս , զոր Ը բանիճ
արարեալ էր նր վն յարելոյն 'ի մե֊
լետիոս , ոչ էառ յանձն՝ պատմելով
նց զապագայ չարիսն արիոսի ․ քզի
տեսի առէ յայսմ գիշերի զՔրն իմ
իբրև մանուկ լուսազգեաց պատ֊
մուճանաւ՝ որ էր պատառեալ յա֊
ռաջոյ ․ և 'ի հարցանել իմում՝ թէ
ո՞ արար զայն , ասաց ․ արիոս պա֊
տառեաց զիս ։ Յետ այսորիկ 'ի կա֊
միլ հազարապետին հանել զհայրպտն
'ի բանտէն՝ և գլխատել , եղև ամբոխ
'ի քաղաքին ․ և եկեալ բազմութ֊ պա֊
հէին զդուրս բանտին ․ իսկ որ հայ֊
րապետն յղեաց գաղտ առ զօրագլ֊
լուխն զարկաւագ իւր զաբեխտա֊
ղոմ՝ ծակել գիշերի զորմն բանտին ․
և կատարել զհրամանն արքունի ․ և

նք

նք սրբոյն այնր, և տարեալ հա-
ւոյն զգլուխ սրբոյն արտաքոյ քաղա-
քին՝ յամի Տր՟ 310։ Իսկ երանելին
աբխառողոմ չարչարակից նր՟ կատարե-
ցաւ խոստովանողական արդեամբք։
Հ․ յնշ․ 15․ Ն․ նոյ․ 25։ Յ․ նոյ․ 25։
Լ․ նոյ․ 26։

Պիօնն (որ թարգմանի հովիւ․ ըն ո-
րոյ և 'ի լտ․ ասի նաև պաստոր) էր
յերկրէն եգիպտոսի․ և թողեալ
զաշխարհն եղև միայնակեաց հան-
դերձ եղբարբք իւրովք՝ անուանա-
պատմէջեն, և պայեօխոսին՝ յանա-
պատս Թեբայիդոյ, փայլեալ 'ի մէջ
սրբոց ճգնաւորաց սքանչելի քաղաքա-
վարութբ, և հոգեբուղխ վրդովմամբ
կենացն հոգևորաց․ որք յայտ է բազ-
մօք 'ի հարանցն վարուց, ուր և ոչ
սակաւ գործք նր՟ նշանակին՝ յաղագս
ցոյց կատարեալ մեռելութե յաշխար-
հէ։ Յ․ Լ․ օգոս․ 27։

Պիոն կմ՟ պիոնիոս անուանեալ՝ յանանց
երկու վկայք 'ի Թիւ արկան, բայց
միոյ նեւթ վկայաբանութե կայ 'ի մե-
ջի․ և այն ըն սորայ քննութե՝ էր յա-
ւուրս դեկոսի կայսեր, մի 'ի գըլ-
խաւոր երիցանց եկեղեցւոյն զմիւռ-
նիոյ՝ ըն իզմիրու, առաքելանման քա-
ջող ճշմարտութե, 'ի դարձուցանել

պղծմն 'ի հրէից և 'ի հեթանոսաց. և 'ի զօրացուցանել զհաւատացեալս: Զոր յաւուր յիշատակի սրբոյն պօղիկարպոսի զմիւռնացւոց հայրապետի ( նահատակելոյ իբր իննսուն ամօք յառաջ) կալեալ պողեմոնի մեհենապետի՝ ստիպէր զոհել, և ուտել զզոհեալ. իսկ որ քհնյն ազյ պերճալի հրապարակախօսութբ առաջի բազմութե քաղաքին՝ դաւանեաց զճշմարտութե քնէական հաւատոյ, և յամօթ արար զթշնամիսն քի. վյ արկաւ 'ի բանտ կապանօք. ընդ նմ և ասկլեպիադէս այր ածաւէր, և սաբինա կին խոստովանող: Ապա հանեալ զնս՝ տարան բռնութբ ընդ քաղաք 'ի մեհեանն. այլ ոչ կարացին տալ նց զոհել. և յետ կրկին բանտարկութե և հարցման՝ կախեցին զպիոն, և քերեցին յերկար. և յոչ դադարել նր 'ի քարոզելոյ զքս՝ վճիռ ետ բդեշխն կենդանւոյն այրել զնա բևեռեալ 'ի փայտի յամի իբր 250. նոյնմ սպանին յետոյ և զընկերս նր, և զայլս բզմս 'ի քրիստոնէից նահատակեցին ոչ սակաւ տանջանօք. այլ անուն սրբոյնի արդեամբք հռչակելի եղև յոյժ ընդ զամն 'ի մէջ զմիւռնացւոց զկնի պօղիկարպոսի: Հ. նրփ. 23: Յ. նրփ. 11: Լ. ֆլեպ. 1:

Պենտապոլ կամ պենտապոլիս · տես Ժ Սոփիայ :

Պղատոն վկայ բազմաչարչար՝ էր յանկիւրիոյ գաղատացւոց, եղբայր սրբոյ նահատակին միոյ անտիոքոս կոչեցելոյ, պատանի ծաղկահասակ · որ 'ի հալածանս մաքսիմիանոսի դատեալ յագրիպպինոսէ դատաւորէ վն 'ի քն հաւատոց՝ հարաւ նախ արջառաջլօք · ապա պարզեալ 'ի վր հրացեալ մահճաց՝ կրկին հարաւ գալար բրօք · և շանթիւք երկաթոյ այրեցան անդամք նր և թիկունք և կողք · և եւս կրոբատեալ զմարմին սբյն վերուստ 'ի վայր՝ հանին փոկս փոկս · այլ տր պահեաց զնա կենդանի յայս ամ տանջանս · ապա թողին զնա 'ի բանտի զաւուրս ութ անսուաղ · և յետ ամնի գտեալ զնա անշարժելի 'ի հաւատս՝ հատին զգլուխն : Հ · նոյ · 14 : Յ · նոյ · 18 : Լ · յուլ · 22 :

Պրոքոն · տես Ը Տարագոսի :

Պօղ պարզամիտ՝ էր այր հողագործ, և երկիւղած յայյ · որ յետ ծնանելոյ զքանի մի զաւակս, և ծերանալոյ՝ խորհէր հրաժարիլ 'ի հոգոց աշխարհի · և զի եգիտ յաւուր միում զկին իւր վատթար 'ի տան ը այն սուարի ,

րի, եԹող 'ի նմա զորդիս իւր. և ինքն դիմեցեալ գնաց յանապատ առ հայրն անտոն. և աշակերտեալ նմա կատարեալ առաքինութ անպարտելի համբերու-Թե և միամիտ հնազանդութե, էառ զօրհնութի նր, և նստաւ յառանձին սենեկի իբրև զմի 'ի բազմաժամկեաց միայնակեցաց. և այնչափ յառաջադէմ եղև 'ի սրբութե՝ մինչև աղօԹիւք ըզ-դևս հալածել, և վերին յայտնութեց արժանի լինել առաւել քն զնմ ա-շակերտս անտոնի. և լի աւուրբք հանգեաւ 'ի քս: Հ. դէկ. 7: Յ. հոկ. 4: Լ. նոյ. 7:

Պօղիկարպոս աշակերտ յովհաննու ա-ւետարանչի, և աշակերտակից իգ-նատիոսի ածազգեցի, էր 'ի մանկու-Թէ եկեալ 'ի զմիւռնիա՝ ոէ յիզմիր. 'ի կողմանց արևելից. և ազդմամբ հրշտկի ուղեգրեալ 'ի կալլիստեայ բարեպաշտ կնոջէ՝ սնուցանէր զտուն նր. որ և 'ի բաշխելն աղքատաց զա-մենայն մԹերս տանն՝ աղօԹիւք անդ-րէն լցոյց զտունն բարեօք. և սոքաւ հանդիսեալ ածաբան աւետարան-չին յեփեսոս՝ կմ 'ի գալ նր 'ի զմիւռ-նիա, լցաւ հոգւով նր: Այսպա ձեռ-նադրեալ սարկաւագ և քհյ 'ի բու-կողոսէ նբ եպսկն զմիւռնիոյ՝ քարո-զեր զբանն ածյ նշանօք և արուես-

ատիւք զբազում ամս. մինչև մեռաւ բռ-կողոս, և փոխանակ նորա ձեռնադրեցաւ հովիւ յաւետարանչէն պօղիկարպոս՝ ծագմամբ լուսոյ 'ի վերայ նորա, և լի-մամբ հոգւոյն սրբոյ աղաւնակերպ. և յայնմհետէ առաւել ևս ծաղկե-ցոյց զքարոզութիւն աւետարանին բազում և երևելի հրաշիւք յանդիման ամենայն հրէից և հեթանոսաց եղելոց 'ի զ-միւռնիա, և զյոլովս 'ի նոցանէ դարձոյց 'ի Տէր: իսկ 'ի ծերութեան իւրում գը-նացեալ 'ի հռովմ 'ի պատճառս խնդ-րոց ծագելոց վասն տօնի զատկաց՝ դարձոյց զբազումս 'ի վաղենտինեան և 'ի մարկիոնեան աղանդոց յուղղափա-ռութիւն. և եկեալ յաթոռ իւր ալևո-րեալ անձամբ՝ եկաց մինչև 'ի հալա-ծանս մարկոսի աւրելիոսի և ղու-կիոսի վերոսի:

Յայնժամ բազումք նահատակեցան 'ի փոքրն ասիա, ( որ և ասի անատո-լու՝ [illegible] , ) քերմանօք և գազա-նօք, սրով և հրով և ջրով. Ի որս և երկոտասան ոգիք երևելիք եկեալք 'ի փիղադեղփեայ 'ի զմիւռնիա, որք [illegible] կոչին. և 'ի նոսա պանծալի հանդիսացաւ սուրբն գեր-մանիկոս պատանի ծաղկահասակ. որ իբրև արկաւ առաջի գազանաց. բուռամբ ձգէր զնոսա՝ զի ծախեսցեն զինքն անխնայ:

Իսկ

Իսկ զերանելին պօղիկարպոս՝ որ ե-
րեքտասաներորդ վկայ կոչի զկնի
նախընթացիցն , ստիպեցին եղբարքն
զառաջինն թաքչել յագարակս . ուր
ծանուցեալ նր տեսլեամբ զկատա-
րումն իւր հրով , 'ի գալ խնդրակացն
եւ սիրով ը̄ տուաւ նց . և եկեալ յա-
տեան անթիպհիւպատոսին՝ յետ բզմ
հարցմանց ընկալաւ զվճիռ այրման .
և 'ի պատել հրոյ կամարաձև զպօ-
ղիկարպոսիւ և յանծախելն պահել ,
խոցեցաւ սրով 'ի դահճէ , և աւան-
դեաց զհոգին՝ յամի տն՝ իբր 166 .
զորոյ զմերանալն յերկինս տեսին
արժանաւորք . և զկատարումն նր
հանդերձ նախընթաց նահատակա-
ցօք գրեցին երիցունք զմիւռնացւոց
աշակերտեալքն 'ի նմին . և տօնէին
զտօն յիշատակի նր ամ յամէ : Հ .
ֆէպր . 22 : Յ . ֆէպր . 23 : Լ . յնվ . 26 :

Պօղիեկտոս կամ պօղիէկտոս՝ (ըստ յն .
Բօլիէ՛գդօս ,) որ 'ի մելտինոյ փոքուն
հայոց՝ էր զաւակ հեթանոս ծնողաց
մեծատանց , և փեսայ փեղիքսի իշ-
խանի քաղաքին , երևելի յարքունի
զօրուն դեկոսի կայսեր . որ և կա-
պեալ սիրով ը̄ նէարխոսի զմնէօ-
րակցի իւրում քրիստոնէի և առա-
քինւոյ՝ օրինակաւ բարի վարուց նր
և խրատուքն ընտելանայր 'ի հա-

ւասս ։ Եւ 'ի յաւնել հալածանաց՝ տեսեալ զնէարխոն զուարթամիտ առ 'ի նեղակիլ, այլ 'ի միտս կասկածոտս վս իւր, վառեցաւ սիրտ պօղեկտոսի՝ նահատակակից լինել նմ․ և երթեալ առ աներ իւր փելիքս 'ի պատճառս տեղեկանալոյ զհրովարտակն արքունի՝ որ վս հալածելոյ զքրիստոնեայս, էառ զայն և պատառեաց․ և յաւել կործանել և զբագին մի առաջի բազմութե․ վս յետ բազմ ողոքանաց և սպառնալեաց՝ գլխատեցաւ հրամանաւ աներոյն իւրոյ․ և յընթանալ առ նա բարեկամին իւրոյ նէարխոնի՝ զնա եւ կալան և նահատակեցին ։ Հ․ Յ․ յնվ․ 9 ։ Լ․ փետ․ 13 ։

Այս և Պօղիեւկտոս վկայ կեսարացի․ զոր 'ի ժմկս հալածանաց կալեն իշխանին կեսարու կապադովկացւոց վս 'ի քս հաւատոյ՝ եդ 'ի բանտի․ և ոչ կարացեալ իմիք դրդուեցուցանել զհաստատութի միայն սքյն՝ եա քերել զնա երկաթի եղնգամբք, և քանցել զատամունսն․ յետոյ էարկ զնա 'ի հնոց հրոյ բորբոքելոյ․ ուր զուարթագին աւանդեաց երանելին զհոգին 'ի ձեռս այ ։ Հ․ դեկ․ 24 ։ Յ․ դեկ․ 19 ։ Լ․ մայ․ 21 ։

Պօղոս առաքեալ՝ երբեմն սօղոս կո-

չե-

չեցեալ, անօթն ընտրութե՝ և վճռին հեթանոսաց, եր 'ի տարսոնէ կիլիկեցւոց՝ յազգէ բենիամենի, ուսեալ առ ոտս գամաղիէլի, նախանձաւոր օրինաց յառաջագոյն՝ և հալածիչ եկեղեցւոյ. և այսպ քարոզ.քնի յնհանուր տիեզերս՝ բանիւ և գրով, նշանօք և զօրութե.ք, բազմարդիւն և բազմավաստակ ք զմ առաքեալս և զաշակերտս. որ յայտ է 'ի գործոց առաքելոց՝ մինչև 'ի գնալ նր կապանօք 'ի հռովմ: Սոյր յետ յերկար արգելանաց՝ իբրև քննեցաւ և գտաւ ոչինչ մեղուցեալ ընդդէմ հռովմայեցւոց և հրէից, արձակեցաւ և շրջեցաւ անդրէն 'ի քարոզութի ը բզմ տեղիս. և միւսանգամ եկեալ 'ի հռռովմ՝ եգիտ անդ զսբն պետրոս, և նովաւ հանդերձ վկայեցաւ յանգիման ներոնի ը սիմոնի մոգի. յորոյ 'ի չարաչար սատակիլն աղօթիւք նր առաքելոցս՝ հրամամն եա ներոն սպանանել զնս 'ի միում աւուր՝ յամի տն 66: Պետրոս խաչեցաւ գլխ՚ի վայր, և Պօղոս գլխատեցաւ սրով. և ամփոփեցան մարմինք երկոցունց եւ յաշակերտաց. պետրոս թաղեցաւ 'ի վատիկանն կոչեցեալ վայրի, ուր կառուցաւ յետոյ հոյակապ տաճար աշխարհզքարոզ. և պօղոս 'ի ճանապարհին ոստեայ, ուր շինեցաւ

այլ տաճար երևելի ։ Հ․ Յ․ Լ․
յունիս․ 29 ։ և Նո․ Հ․ դեկ․ 27 ։

Պօղոս Թէբայեցին կամ անապատական՝ առաջինն յառանձնակեաց անապատաւոր հարց, էր 'ի Թեբայիդոյ եգիպտացւոց յաւուրս հալածանաց Դեկոսի և Վաղերիանոսի․ և առեալ կասկած մատնութե 'ի քեռայրն իւրմէ 'ի պատճառս ագահութե, եթող զտուն իւր և զամ ինչ՝ 'ի ժը ամաց հասակի, և մեկնեցաւ 'ի խորին անապատ․ ուր գտեալ քարածերպ փոքրիկ՝ յորում էր և աղբիւր բարեհամ, և արմաւենի առ դուրս այրին, անդ բնակեցաւ իբրև 'ի տեղի պատրաստեալ նմ յայ՝ ամ ճգնութ և ածամերձ ընտանութ զամս ղէ, անտես և անյայտ 'ի մարդկանէ․ մինչև 'ի լրանալ ճժգ ամի կենաց նր՝ յամի տն իբր 343, ազդմամբ տն եկն հայրն անտոն զարդն անապատի 'ի տես երանելւոյն պօղոսի․ և 'ի վախճանելն նր՝ ամփոփեաց զնշխարս նր, տեսանելով և զթռիչս հոգւոյն յերկինս․ ոյր ճոխագոյն գրի 'ի հարանց վարս բանիւ հերոնիմոսի, որ 'ի ճառընտրի մերում կոչի երանելին ։ Հ․ դեկ․ 6 ։ Յ․ յնվ․ 15 ։ Լ․ յնվ․ 10 ։

Պօղոս խոստովանօղ՝ ծննդեամբ Թեսաղոնիկեցի, էր ձեռնասուն դպիր և սարկաւագ սրբոյն աղեքսանդրոսի կոստանդնուպօլսոյ հայրապետին. որոյ և եղև արժանաւոր յաջորդ յաթոռն հաւանութ̃բ ա̃մ ուղղափառաց՝ ըստ կանխագուշակութ̃ե սրբոյն մետրոփանոսի. այլ կոստանդ կայսր միտե̃լ զհետ արիանոսաց՝ ընկէց զպօղոս յաթոռոյ, ո̃պ և զաթանաս զաղեքսանդրու հայրապետն. և ս̃ք երկոքեան գնացին 'ի հռովմ առ յուլիոս պապն. և 'ի ձեռն նամակաց կոստասայ Թ̃գրին հռովմայ առ կոստանդ եղբայր իւր՝ դարձան յաթոռս իւրեանց. և միւսանգամ ընկեցե̃լ՝ դարձեալ միւսանգամ կալան զաթոռն: Այլ 'ի մեռանիլ կոստասայ՝ ե̃րդ անգամ 'ի բաց վարեցան յաթոռոյ. և երանելին պօղոս արտասահմանեցաւ 'ի կուկուսոն հայոց. ուր համարձակ քարոզէր զնիկիական հաւատս. վ̃ն 'ի հրամանէ փիլիպպոսի եպարքոսի խեղդեցին արիանոսք զս̃բ հյր̃պն եմփորոնիանի, 'ի կատարել նր̃ զս̃բ պաշտօնն 'ի գիշերի 'ի տան միում. բայց յաւուրս մեծին Թէոդոսի յետ լինելոյ ժողովոյն կոստանդնուպօլսոյ բերաւ մարմինն նր̃ պատուով 'ի Թագա-

ւորեալ քաղաքն: Հ. Յ. նոյ. 6:
Լ. յունիս. 7:

# Ռ

Ռոմանոս կմ՛ Հռոմանոս Երգեցօղ՝ էր եմեսացի յերկրէն ասորւոց, և սարկաւագ եկեղեցւոյն բերիւտայ, կրթեալ 'ի մանկութենէ յածայինն ուսմունս և յառաքինութիւնս. որոյ եկեալ 'ի կոստանդնուպօլիս յաւուրս անաստասայ կայսեր՝ յամի տն իբր 500, բնակեցաւ առ դրան եկեղեցւոյ ամենասբ ածածնին, զոր սպաշտէր յամ սրտէ հսկմամբ և աղօթիւք. և երևեցաւ նմ սբ կոյսն 'ի քուն, և ետ նմ ուտել զտումար մի գրեալ. և զարթուցեալ երգեաց առժամայն կցորդ ծննդեանն քնի ըստ աւուր պատկերի՝ քաղցր եղանակաւ և անոյշ ձայնիւ, սկիզբն առնելով այսմ. * Կոյսն այսօր զգերագոյականն ծնանի ||. և յայնմհետէ առել յայ շնորհս երգաբանութե՝ յօրինեաց և այլ կցորդս իբր ռ. որ առ յոյնս կոնդակ ասի, կմ կոնդակիոն. և հանգեալ ցարդ 'ի պաշտամունս նց. և ինքն սրբակրօն վարուք կատարեաց զկեանս: Հ. հոկ. 9: Յ. հոկ. 1:

Ռոմանոս Ճգնաւորեայ՝ կմ Հռոմանոս ա-

բէ-

Բ։ղայ , եր յաւուրս մաքսիմիանոսի գաղերիոսի՝ յանտիոք քաղաքէ․ ուր տեսեալ զասկղեպիադէս եպարքոսն՝ զի կամէր մտանել յեկեղեցին այ , արգել զնա , և յանդիմանեաց զմոլորութիւն հեթանոսաց․ վյ եհար եպարքոսն ը բերանն նր․ և ետ կախել և քերել զծնօտս սրբյն ։ Այլ նա 'ի չարչարանս անդ տակաւին զքս քարոզէր , և ասէր․ մի է ած ճշմարիտ՝ ածն քրիստոնէից․ զոր և մանկունք գիտեն ։ Եւ 'ի հաստատուն բանիս բերաւ 'ի մէջ մանուկ մի՝ եօթնամեայ անուն․ և հարցեալ 'ի սրբյն ռոմանոսէ՝ թէ զո՞ր ած արժան է պաշտել , ետ պն․ զմի ած ճշմարիտ՝ զերկնի և երկրի արարիչ , զոր քրիստոնեայքն պաշտեն ։ Բարկացաւ եպարքոսն , և ասէ․ ո՞ ուսոյց քեզ զայդ ․ նա ասէ ․ մայրն իմ յոմ ժամ յեկեղեցին և 'ի տան ։ Յայնժամ բերին զմայր մանկանն , և առաջի մօրն տանջէին զորդայն․ և յասել նր՝ ծարաւի եմ, ասէ մայրն․ մի արբցես ջուր որդեակ , այլ երթիցես 'ի ջուրն կենդանի․ և այնով հատին զգլուխ սրբյ մանկանն խոստովանողի․ զորոյ զմարմինն խնդութբ ամփոփեաց մայրն երանելի ։ Իսկ զսրբյն ռոմանոսի յետ քերանաց հատին զլեզուն․ և նր ասել քարտեա՝

գրեաց արեամբ իւրով. երանի՜ որ-
մքը են սրտիւք. երանի՜ որ վն մոյ
հրաժարին յաշխարհէս. և զայլ եւս.
ածային բանս: Եւ իբրև կամէին
այրել զնա կենդանւոյն, եղև անձ-
րև սաստիկ, վն որոյ արկին 'ի բանտ.
և 'ի նմին գիշերի ետ խեղդել զնա
եպարքոսն: Հ. նոյ. 14: Յ. Լ. նոյ. 18:

Ադոմեղոս. կմ՛ Տոմեղոս. տեառ Ը Եւգոր-
սիոսի:

Ս.

Սահակ պարթև որ հայրապետն մեր
լուսազարդ շառաւիղ որ լու-
սաւորչին, էր որդի մեծին ներսե-
սի. և որք մնացեալ 'ի սանդխտոյ
մօրն իւրմէ՝ սնաւ առ հօր իւրում
ած կրթանօք առաքինութեց, և հո-
գևոր և արտաքին իմաստութե. և
մտեալ 'ի կարգ աշխարհի 'ի ստիպե-
լոյ ամին՝ զի մի շիջցի զաւակ տանն
լուսաւորչի, յորմէ ինքն միայն էր
մնացեալ, ծնաւ դուստր մի սահա-
կանոյշ անուն: Ապա 'ի տիրել նր
վն չունելոյ զաւակ արու, ետես տե-
սիլ հրաշալի յաղագս սարկաւագու-
թե իւրոյ 'ի կաթողիկէն վաղարշա-
պատու. ուր յայտնեցաւ նմա 'ի
հրշտկէն հանդերձեալ վիճակ աշ-
խար.

խարհին Հայոց , և այլ խնդիք կա-
տարածի աշխարհիս ։ Եւ յայնմ հե-
տէ ես երանելին սահակ զանձն խը-
բոլորովին 'ի հնպզրդեան աղօթս
և յընթերցմունս ։ և ձեռնադրեալ
քհնյ՝ յաւել 'ի ճգնութիս , և ստացա-
աշակերտս վաթսուն՝ խարազնա-
զգեացս և բոկագնացս ։ որովք շրջէր
ընդ մեռեալ աշխարհի , և քարոզէր
զբանն տն ։ մինչև ընտրեալ յաթոռ
կթղկսութն՝ եղև տիրապէս երկրորդ-
լուսաւորիչ ազգիս գործակցութբ
սրբոյն մեսրոպայ , թարգմանելով
զածաշունչ գիրս և զմատեանս հարց ։
և կարգաւորելով զեկեղեցին պաշ-
տամունս , հանդերձ ծանր հոգովք
աշխարհին՝ յանձն առնլով երթալ
ընդ սխտոյից ազգիս երկիցս մինչև 'ի
դուռն պարսից , և դարձեալ դե-
գերելով մերթ 'ի բաժնի նոցա , և
մերթ 'ի բաժնի կայսեր ։ Եւ յայսմ
ամի վր՝ ընդ չմիաբանելոյ 'ի խնդ ու-
րանեաց նախարարաց՝ կոչեցաւ 'ի
պարսս , և ընկեցին յաթոռոյն՝ ար-
գելաւ 'ի դիպահոջ ։ և յետ բազում
տառապանաց արձակեալ 'ի հայս՝ 'ի
խոր ծերութե միաբանգամ ես զանձն
յիմ աշխատասիրութե յօգուտ ազ-
գիս ։ և լցեալ զաւուրս իւր անչափ
արդեամբք՝ փոխեցաւ յերկինս յա-
մի տն 440 ։ յաւուր ծննդեան իւրո-

ըն

որ էր առաջինն նաւասարդի, ա-
մաց աւելի ք՟ զհարիւրոց․ ըտ՟ ամանց
իւր ճ՟ի․ և թաղեցաւ յաշտիշատ․
ուր և շինեցաւ փութով եկեղեցի 'ի
վ՟ր ս՟րյն: Հ․ սէպ․ 9․ և 17:

Սահակ և Համազասպ իշխանք հայոց՝
որդիք դադկայ, էին նախարարք
պատուականք յազգէն արծրունեաց՝
տեարք աշխարհին վասպուրականի,
յաւուրս տ՟ն եւսեբեայ կ՟թղկսի, 'ի
կայսերութե՟ կոստանդեայ և եւլ-
նեայ, և յամիրապետութե՟ հարոնայ․
որոյ հրամանաւ եկեալ եզիտայ ոս-
տիկանին 'ի հայս՝ կոչեաց նենգանօք
առ իւրն զերիս եղբարս արծրու-
նիս, զսահակ, զհամազասպ, և ըղ-
մերուժան․ և եդեալ պատճառանս
'ի վ՟ր ն՟ց՝ իբր ձեռնտուս 'ի յոյնս,
էարկ զն՟ս 'ի բանտ 'ի պարտաւ քա-
ղաքի․ զի կամ դարձցին յօրէնս իւր,
և կամ՝ սպանցին․ մերուժան անկաւ
'ի հաւատոց․ այլ սահակ և համա-
զասպ քաջութ՟բ յանձն առին մեռա-
նել վ՟ս ք՟սի․ վ՟յ 'ի բ՟զ՟մ աւուրս նե-
ղեալ զն՟ս ոստիկանին պէսպէս լլ-
կանօք, և ոչ կարացեալ խախտել
զմիտս երանելեացն՝ հրամանեա գըլ-
խատել: Եւ 'ի տեղի կատարմանն
հրաւիրեաց համազասպ՝ որ աւագն
էր, զսահակ կրտսեր եղբայր իւր՝
յա-

յաւաջնահատակիլ. զի 'ի խրախու-
թիւն մարմնոյ եւ յաւուր ըմպէլի ա-
նէ բաժակաւ, 'այժմ զերկնաւոր
բաժակն ուրախարար դու յաւուր
արբցես. և մինչդեռ յաղօթս կային
ծնրադրութ̃՝ խոնարհեցոյց սրոյ ըղ-
պարանոց իւր նախ սբ̃ն սահակ, և
ապա սբ̃ն համազասպ յամի տ̃ն 786.
և 'ի թուէին հայոց մլ̃ե. և այնպէս
յերկրաւոր կարգաց ելին 'ի փառս
երկնից. իսկ մարուժան վրիպեցա-
նաւ յերկրաւորէն. զի 'ի գալն իշ-
խանութ̃ յերկիր իւր՝ գաւիթ մա-
միկոնեան պատահեալ նմա՝ եբարձ
զուրացօղն 'ի կենաց. որպէս և մեկն
գուշակեալ էր զայս տ̃մ սբ̃յն մով-
սեսի խորենացւոյ՝ երեք հարիւր ա-
մօք յառաջ: Հ. տպ. 8:

Սահակ և Յովսէփ կարնեցիք՝ ժմկա-
կից էին սահակայ և համազասպայ,
և փոքր մի յետոյ .քան զն̃ս նհատակե-
ցան յաւուրս նոյն ամիրապետին հա-
րոնայ՝ յամի 808. մծէ: Սք̃ եւս էին
երեք եղբարք, այլ եր̃դին անուն
չէք 'ի միջի, որդիք հօր այլազգւոյ,
և մօր քրիստոնէի հայկազնոյ. յոր-
մէ ուսեալ զն̃մ կարգ բարեպաշ-
տութ̃՝ վարէին զքրիստոնէութ̃ի 'ի
ծածուկ, և եռային հոգւով՝ յայտ-
նել զանձինս. ապա հնարեցան գնալ

առ կայսրն յունաց Նիկեփորոս․ ողջ և գնաց իսկ մին 'ի նցէ․ այլ յովսէփ արգելաւ՝ զի ունէր ընտանիս, և սաստիկ մնաց Է ամ՝ երկկրսէր և օգնական․ մինչև մատնեցան 'ի ձեռս այլազգի իշխանին քաղաքին․ որ բազմօք ջանացաւ խախտել զնա 'ի քէ, և ոչ կարաց․ նոյնպէս և հայր նց և այլ մերձաւորք և ընտանիք 'ի բանտ եկեալ՝ լալով յորդորէին զնա յուրացումն․ բայց քաջ վկայքն քի մերժեցին զնա ։ Յայնժամ ել հրաման գլխատելոյ զսրբսն․ և հատին դահճքն նախ զգլուխ սրբյն սահակայ՝ Թ աղաչելոյ սրբյն յովսեփայ, և ապա զնր․ և ծագեաց լոյս 'ի վր մարմնոյ նահատակացն․ և արհաւիրք անկան 'ի տնէ 'ի վր իշխանին, մինչև տալ հրաման քրիստոնէից թաղել զնս պատուով ։ Հ․ յնվ․ 22 ։

Սամոնաս․ տես Է Գուրիասայ ։

Սամուէլ․ տես Նախահարք ։

Սայիդ․ տես Է Աբդայի ։

Սանդուխտ․ տես Է Թադէի ։

Սարգիս զօրաւար՝ երագահաս և նշա-

նաւ

նագործ վկային՝ էր 'ի սահմանաց կեսարիոյ կապադովկացւոց, որ և գամիրք ասին, ծաղկեալ արուե̃ և առաքինութ̃ 'ի ժմս մեծին կոստանդիանոսի. յորմէ ընկալաւ զպատիւ ստրատելատութե̃, և համարձակ կործանէր զբագինս կռոց, և տարածէր զա̃ծպաշտութի̃ բանիւք և արդեամբք. մինչև թղթեաց ուրացողն յուլիանոս : Յայնժամ առեալ սարգսի զորդի իւր Մարտիրոս անուն՝ համանման հօրն քաջութ̃ և բարեպաշտութե̃, խոյս ետ յաշխարհն հայոց առ տիրան արքայ. և յետ կալոյ անդ յանդորրու զժմկ ինչ՝ անկաւ 'ի պարսս առ շապուհ արքայ, և հաւատարիմ ծռյութ̃ մեծէր զպ̃տրզմունս նր̃ : Եւ 'ի միում նուագի տեսեալ զգունդ իւր ահաբեկ յերեսաց բազմութե̃ թշնամեաց, քաջալերեաց նր̃ զքն̃ ա̃ծ՝ յորդորելով 'ի նա ապաւինիլ. որով և 'ի գլուխ տարան զյաղթութի̃, և հ̃ւտացին յա̃ծն սարգսի. և յաղագս մարտիրոսի որդւոյ նր̃ աղօթիւք և սքանչելեօք 'ի ձեռաց դերչաց՝ առաւել ևս հաստատեցան 'ի նր̃ : Ապա եկեալ սարգսի հանդերձ որդւովն առ շապուհ՝ հրաւիրեցաւ 'ի նմէ զոհել երկոտասան դից արքունի մեհենին. իսկ քաջ նահատակն յետ դաւանելոյ արիա-

բար

բար զքս՝ յարձակեցաւ 'ի վր դրօ-
շելոցն, և մանրեաց զնս 'ի ցուցա-
նել զանպխտանութն կեաց. յայնժամ
զեղան 'ի վր նր մոգք ծմ բազմութբ,
և քարշեալ ը երկիր՝ հարին աքա-
ցի և բռնցի. և զերջանիկ պատա-
նին Մարտիրոս առաւթուր կախել
պայմանին. զորոյ զկատարումն տեսել
սբյն սարգսի՝ գոհացաւ զայ: Իսկ
թշրն եա արկանել զսարգիս 'ի
բանտ. ուր ծագեաց լոյս, և ար-
ձակեցան կապանք սբյն. և յետ
երկրին հարցափորձի՝ հրամայն եա
թշրն գլխատել զնա. զոր և բզմ
խոստանդանօք տարան արտաքոյ քա-
ղաքին. և զկնի աղօթելոյ սբյն՝ և
երևելոյ հրեշտակաց պսակ 'ի ձեռս,
հատին զգլուխ նր: Բայց Զօրէփա-
ան որք 'ի պարսիկ զինուորաց ան-
տի քրիստոնեացելոց 'ի ձեռն սբյն սարգսի՝
առին զմարմինն նր, և պատեցին մա-
քուր զգեստուք. և խնկոյն հրմանաւ
արքայի հատին և զգլուխս նց. և
զմարմինս սբցն առ քարկ արկին ա-
ռաջի գազանաց. այլ ոչ մերձեցան
'ի նս գազանք. և քրիստոնեայք եկին
'ի գիշերի, և բարձին զնս՝ յամի 362:

Հ. յնչ. 31: Լ. ֆէպր. 24:

Սարգիս և Բագոս էին հոռոմայեցիք
ազնուականք 'ի դրան մաքսիմիանո-
սի

ռի կայսեր · սարգիս էր պրիմիկուռ,
ը՟ս առաջին դիւանադպիր · և բագոս
սեկունդիկուռ , ը՟ս երկրորդ ատե-
նադպիր · և ամբաստանեալք առ
արքայի վ՟ն քրիստոնէութ՟ե իւրեանց՝
ածան բռնութ՟բ 'ի մեհեան · և յոչ
առնուլ նոցա յանձն զոհել կռոց՝ մեր-
կացին զն՟ս 'ի զգեստուց պատուոյ ,
և կանացի հանդերձիւք շղթայակապ
յածեցուցին ը՟ փողոցս ։ Յետոյ ա-
ռաքեաց զն՟ս թգ՟րն առ անտիոքոս
դուքս արևելից մերձ 'ի տաճկաս-
տան , որ 'ի ձեռն սարգսի հասեալ
էր յայն պատիւ · և նա էարկ զն՟ս
'ի բանտ · ուր քաջալերեցան 'ի
հր՟շտկէ ա՟յ · ապա դատեալ 'ի դքսէն՝
իբրև անփոփոխ գտան 'ի հ՟ւտոց ,
նախ հարաւ ս՟բն բագոս արջառա-
ջլօք ցպատառումն մարմնոյն , որով
և աւանդեաց զոգին · և 'ի գիշերի
երևեցաւ երկնային զարդուք ընկե-
րի իւրում սարգսի ։ Իսկ դուքսն
շրջեցոյց զսարգիս ը՟ իւր ք՟ղքէ 'ի
ք՟ղք՝ երկաթի կօշկօք բևեռելովք
յոտս ն՟ր · մինչև տարաւ զնա 'ի
ռուծափ , և անդ գլխատեաց ։ Հ ·

Յ · Լ · հոկ · 7 ։

Սեղբեստրոս հռովմայ հայրապետն՝
էր որդի հռուփինոսի և յուստայ ,
ծնեալ 'ի հռովմ, և կրթեալ 'ի ս՟բ

վարս

վարս և յանձային ուսմունս . որ և ՚ի կղերիկոսութե խորում իջևանեաց ՚ի տուն ծեր զոհմոնթէոս հյրպտն անտիոքայ . և ՚ի ննջանկիլ նր ՚ի հռովմ, էառ զաթոռ զմարմին նր . վսյ ըմբունեալ ՚ի տարկուինոսէ եպարքոսէ՝ արկաւ ՚ի բանտ . և ՚ի յանկարծամահ լինել եպարքոսի ըն միջնորդութե սրբյն՝ հանաւ ՚ի բանտէ : Եւ եղեալ սարկաւագ և քհնյ՝ ծաղկեցաւ սքանչելի սրբութ և քարոզութ . մինչև ընտրիլ նմա յաթոռ սբյն պետրոսի զկնի մելքիադեսի պապին , և առնել բզմ ուղղութիս և կարգաւորութիս յեկեղեցւոջ . և յետ կրելոյ պէսպէս հալածանս և տառապանս վսն անուանն քսի , ՚ի դառնալ այպա մեծին կոստանդիանոսի ՚ի սբ հաւատս՝ մկրտեաց զնա , և զբազմութե աւագաց նր , եղեալ լուսաւորիչ ազգին հռովմայեցւոց՝ հանդերձ երևելի նշանօք . և ՚ի յառնել արիոսեան աղանդոյ՝ ձեռնարկութ սբյ հյրպտիս գումարեցաւ սբ ժողովն նիկիոյ . զոր և հաստատեաց առանձին ժողովով ՚ի հռովմ . և լի արդեամբք հանգեաւ ՚ի քս՝ յամի 335 : Հ. Յ. յհն. 2 : Ն. դէկ. 31 :

Սերգիոս . տես Ը Եւգինեայ : Թողզի և ողջ ՚ի մեղ սերգիոս աւուն , յայ-

կոց սերգիոս կոչին :

Սեւերիանոս սեբաստացի՝ էր զօրական քաջ առ Լիկիանոսիւ․ և 'ի բանտարկել սից քառասնից 'ի սեբաստիա՝ սէն սեւերիանոս դարմանէր զնս, և զայլ բանտարկեալս՝ քաջալերելով 'ի հաւատս․ վն յետ կատարման նց մատնեցաւ 'ի ձեռս Լիւսիայ դքսի․ և արիաբար դաւանեալ զհաւատս իւր՝ հարաւ չարաչար արջառաջլօք, տա կախեալ զնա պէս հանդերձ ծանր վիմօք կապելովք ղոտիցն, տանջեցաւ պէսպէս կոշկոձանօք և քերանօք․ և յետ զընարթուէ քարշելով զանուն քն՝ աւանդեաց 'ի կախաղանի զհոգին․ և 'ի տանել հաւատացելոց զմարմին սէյն 'ի հայրենի գիւղ իւր, յարեաւ սքանչելեօք ծառայն նր՝ որ մեռեալ էր 'ի նմին աւուր, և ընթացաւ 'ի թաղումն սէյն: Հ․ սեպ․ 12: Յ․ Լ․ սեպ․ 9:

Սեբ․ տես Նախահարք:

Սեղբոանոս՝ որ և գրի սեղբեսանոս կմ սիղբանոս, համարեալ 'ի թուոց եօթանասնից՝ էր գործակից սէյն պօղոսի 'ի քարոզուէ ըն տիմոթէոսի և ըն շիղայի ( եթէ չիցէ նոյն ընմա)․

և

և յետ բզմ վաստակելոյ 'ի տր կատարեցաւ 'ի Թեսաղոնիկէ՝ նըրև եղբս տեղւոյն. և է նմ ընկերք նր կրեսկէս կմ կրեսկենտիոս, անդրոնիկոս, և արիստաբուղոս: Հ. յունիս. 26: Յ. յուլ. 30:

Սիմէոն սիւնակեաց մեծն՝ էր 'ի սիսան աւանէ անտիոքայ ասորւոց, կմ ըս ոմանց՝ 'ի սիս .քղքէ կիլիկեցւոց, որդի հիւսիքոսի և մարթայի, առ փոքրն Թէոդոսիւ. և գոլով խաշնարած՝ 'ի հասակի ժգ ամաց՝ լուեալ զբանս սրբ գրոց յեկեղեցւոջ, փութացաւ սիրտ նր 'ի ճնպրհ կատարելութէ խրատուք ծերունւոյ միոյ. և յանձն արարեալ զանձն ոմ՝ ընթացաւ յանապատ. և յետ եօթն աւուրց հասեալ 'ի վանս հեղիոդորոսի աբբայի՝ ետ զանձն 'ի խիստ ճգնութն, պատելով զմիջովն 'ի մերկուց զպարան մազեայ, և զգենլով զխորգ, և պեանախշտի լինելով. մինչև եռալ 'ի նմ որդանց. Թող զպահս և զայլ նեղութիս կամաւորս. որովք եղև իբրև անշունչ պատկեր. ուստի մերժեալ յեղբարց՝ չոգաւ եմուտ 'ի ջրհոր մի ցամաք. այլ ազդմամբ հրշտկի դարձոյց զնա հայր վանիցն: Ապա յետ երից ամաց գնաց 'ի խորադոյն անապատ, և

ճգնե.

Ճգնեցաւ յառանձին խղի այլ եւս ե-
րիս ամս․ մինչև անսուաղանցուցա-
նել զաւուրս քառասնից, և ապա
կարգել այլ եւս քառասուն հետ-
զհետէ․ յետոյ եւ 'ի լեառն մօտա-
կայ, և շինեալ անդ փարախ՝ ընա-
կեցաւ բացօթեայ, կապեալ շղթայ-
իւք զոտս իւր զքարէ․ և ետ նմ͞
տ͞ր զշնորհս սքանչելեաց և մ͞րգ͞րէու-
թե͞․ վ͞ս դիմելին առ նա անթիւ
բազմութք 'ի հիւանդաց, և յոլովք
յանհաւատից դառնային նովաւ առ
տ͞ր ։ Այլ նեղեալ ս͞բյն յամբոխէ՝
եգիտ հնարս ընակելոյ 'ի սիւն բարձ-
րացեալ յերկրէ, նախ Զ կանգուն,
ապա Է, ապա ԺԲ, յետոյ Լ, և
հուսկ զկնի ԼԶ, կամ Խ․ և այսպ͞
եղև սիւնակեաց 'ի վ͞ր այլևայլ
սեանց զամս իէ, առաւելեալ հետ-
զհետէ 'ի Ճգնուե͞ և 'ի սրբութե͞ և
'ի նշանագործութե͞․ ոմ͞ ասացի յը͞ն-
արձակ վարս ն͞ր․ և զկնի բզ͞մ և մե-
ծամեծ գործոց փոխեցաւ առ ա͞ծ
յամի 460 ։ Հ․ Յ․ սեպ․ 1 ։ Լ․
յնվ․ 5 ։ Աշխար․ առ Եւագր ։ Կայ և
այլ սիմէոն սիւնակեաց եր͞կ, յիշա-
տակեալ 'ի Հ․ մայ․ 26 ։ Յ․ մայ․
23 ։ Լ․ սեպ․ 3 ։ Ոմ͞ և միւս այլ երկ
սիմէոն սիւնակեաց համարի յոմանց
յիշատակեալն 'ի ծանօթէնս Յն․
յուլ․ 26 ։

Սի-

Սեքոն. տօնս Հմաւոն:

Սեքուանոս կամ Սեքոննէոս անուանեալ այլ̃ և այլ ձգնաւորք Թոմ̃ին նշանակեց̃ այլ երևելին 'ի նո̃ էր կապադով̃կացի՝ 'ի վանաց հօրն եղաբրդրոսի յերկիրով. ուր յետ իբր եօթնամեայ կրթութե̃ 'ի կրօնաւորկն վայրս՝ փակեաց զանձն 'ի դերկզմանի միում զամս երիս, պարապելով յաղօթս զգայց և զցերեկ. մինչև էառ իշխանութի հալածելոյ զդևս. և 'ի հնչել համբաւոյ նր̃՝ տարան զնա 'ի հոյթենիս իւր, և օծին ք̃հնյ. որ և եղև հայր հարկաց, և հիւրասէր յոյժ: Ըստ նոյն սա սեքուանոս երևելի որ յետ ընտրելոյն եպս՝ խոյս ետ անդրէն յանապատ պաղեստինոյ. և եկաց յաւանձնութե ան յորդանանաւ մօտ 'ի բեթարբրա մինչև 'ի ծերութի: Ըստ յաւուր՝ յորում մեռածերն, եկն առ նա ոմն յընտանի հարց, և ողջունեաց զնա մեռեալն իբրև կենդանի. և 'ի թաղելն զնա՝ աշակերտ ոք̃յն աղաչեաց զծերոզն գերեզմանին՝ լայնել 'ի չափ երկուց մ̃դոց, և ինքն տարածեալ զանձն 'ի վր̃ փախաթի՝ աւանդեաց զոգին. և թաղեցին եղբարքն զծերն և զաշակերտ նր̃ 'ի միասին: Վարք հց:

